

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 4
A V R I L
1928
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԼԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ՔՐՏԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄԸ ԵՒ ԻՐԱՆ

Կը թւի թէ քրտական շարժումը, եւ մասնաւորապէս քիւրտ քաղաքական-յեղափոխական կուսակցութեան մը կազմակերպութիւնը որոշ թիւրքիմացութիւն սրտաճառած է Պարսկաստանի մէջ:

Շնորհիւ թուրք եւ ռուս զործակալներու յայտնի եւ դաղանի պրոպագանդին, թեհրանի եւ թաւրիզի մէջ այն կասկածն ունին թէ այդ շարժումը ուղղւած է Իրանի դէմ:

Այս առթիւ, նոյնիսկ հայերու անունը կը խառնեն, միտքերը աւելի պղտորելու եւ ուշագրութիւնը ցրելու համար:

Կատարելապէս իրազեկ ըլլալով ամբողջ անցուղարձին, մենք ի վիճակի ենք արժանի պատասխանը տալու այդ նենդամիտ խոռվութիւններուն, որոնք մէկ բանի կը ձգտեն. — մոլորեցնել Իրանը եւ զայն լարել քիւրտերուն կամ հայերուն դէմ:

Սկիզբէն ի վեր, բայց մանաւանդ 1927-ի քրտական անդրանիկ համազումարէն յետոյ, քրտական շարժումը ուղղւած է միայն եւ միայն թուրքիոյ դէմ:

Այս իրողութիւնը յատկապէս շեշտած է 1927-ի համազումարին մէջ, մէկէ աւելի բանաձեւերով:

Քանի մը օրինակ միայն.

— «Քիւրտ ազգի պայքարի մակտն է թուրքիոյ գրաւման տակ եղած Քիւրտիստանը:

«... Քիւրտ ազգը այս ուղղութեամբ իր աշխատանքներու ընթացքին պիտի յարգէ սահմանակից ազգերու եւ պետութեանց շահերը, փոխադարձ շահերու պաշտպանութեան համար պիտի ցարծակցի ցեղակից, բախտակից

եւ իր ազգային իրաւունքները յարգող ուրիշ ազգերու հետ»:

Եւ դեռ աւելին.

— «Քրտական առաջին համագումարը իր երախտագիտութիւնը կը յայտնէ Ֆրանսայի, Անգլիոյ, Պարսկաստանի, Իրաքի եւ Սուրիոյ կառավարութեանց եւ ժողովուրդներուն, որոնք իրենց աջակցութիւնն ու պաշտպանութիւնը ընծայեցին թուրքիայէն հալածւած քիւրտերուն եւ կը յայտարարէ թէ քիւրտ ժողովուրդը կապւած պիտի մնայ անոնց, երախտագիտութեան եւ հաւատարմութեան կապերով»:

Կրնայինք թւել ուրիշ ջախջախիչ փաստեր ալ, ամուր փակելու համար բանասարկողներուն բերանը: Բայց աւելորդ է:

Կը բաւէ յիշել միայն քանի մը իրողութիւններ, որոնք պիտի օգնեն ցրելու բոլոր նախապաշարումները. —

1. Քիւրտ յեղափոխականները այլեւս համոզւած են թէ իրենց — ինչպէս հայերու — միակ թշնամին թուրքիան է, որուն հետ ճակատագրական կռիւ ունեն:

2. Անոնք հասկցած են, որ անդարձ պիտի կորսնցնեն իրենց դատը, եւ ջարդարար թուրքիոյ կամ աշխարհակալ Ռուսիոյ շարաշուք դաւերուն դործիք պիտի դառնան, եթէ թշնամանան Իրանի հետ:

3. Անոնք, թէեւ շատ ուշ, ըմբռնած եւ հանդիսաւորապէս հռչակած են, թէ հայերու բարեկամութիւնը թանկագին ազգակ մըն է իրենց համար:

Բայց միեւնոյ ատեն, գիտեն որ վերջնապէս պիտի կորսնցնեն այդ բարեկամութիւնը եւ նոյնիսկ իրենց դէմ պիտի ունենան հայերը, եթէ երբեք փորձեն գործել Իրանի (կամ Իրաքի) դէմ:

4. Ճիշտ այն պատճառով որ քրտական նոր կոմիտէն լաւ ըմբռնած է կացութիւնը եւ զիւրտ ժողովուրդին իրական շահերը, Թուրքիան կարմիր Մոսկուայի աջակցութեամբ, կը կրկնապատկէ իր խարդախութիւններն ու խառնակչութիւնը, որպէսզի կարենայ ճեղքել իրեն դէմ ծառայած քրտական մականոր եւ իրանի ձեռնով ալ հալածել տալ արիւնակոծ ժողովուրդ մը:

Այսքան յստակ ըլլալով կացութիւնը եւ քրտական համագումարին որոշումները, մենք տարակոյս չունինք թէ՛ ամօթապարտ պիտի մնան բոլոր անոնք, որ կը ձգտին պլտորել զիւրտ եւ պարսիկ յարաբերութիւնները կամ սուրբ ասել չայ եւ պարսիկ դարաւոր եւ անխելի բարեկամութեան վրա:

Մեզի համար դադանիք չէ, որ շարմիտներ ուղեցին շահագործել նոյնիսկ պարզ խընդիր մը, Պարսկաստանի կրթական նոր ծրագրին պատճառած արդար դժգոհութիւնը, պարսկահայ գաղութին մէջ: Բայց մնացին կէս ճամբան: Որովհետեւ ոչ միայն պարսկահայ գաղութը, այլեւ ամբողջ հայ ժողովուրդը գիտէ, որ Պարսկաստանը Թուրքիա չէ, եւ «ձախորդ օրերը» ձմրան պէս կուգան ու կանցնին:

Մենք մեր մասին քննելով քրտական շարժումը Պարսկաստանի շահերուն տեսակէտէն, անհրաժեշտ կը գտնենք շեշտել.

ա.— Հակառակ բոլոր թիւրթիմացութեանց, կրթական կամ քրտական, Իրանը կը մնայ վաղեմի բարեկամը հայ ժողովուրդին:

բ.— Արեւելքի նոր փոթորիկները եւ համաթրքական յարահուն ալիքը Իրանը կը մղեն դառնալ ամուր խարխախ մը եւ կեղբոնաձիգ ոյժ մը՝ արիական ժողովուրդներու համար:

գ.— Առանց այս առաւելութեան ալ, Պարսկաստանի շահը կը պահանջէ իր սահմանին վրա ունենալ՝ Թումբ պետութիւն մը, նոյնիսկ երկու,— Հայաստան եւ Քիւրտիստան:

դ.— Հայ ժողովուրդը չարաչար տուժեց, մինակ մնացած ըլլալով բարբարոս թշնամիի մը դէմ եւ լքած՝ բոլոր բարեկամներէն, բայց կը մնայ կանգուն: Եթէ Իրանը, գիտակցաբար կամ անգիտակցաբար թոյլ տայ, որ զիւրտ ժողովուրդն ալ ոչնչանայ, առնազն Ատրպատականի նահանգը բաց դաշտ մը պիտի դառնայ Թուրք—Թուրանական արշաւանքին առջեւ: Ուրիշ խօսքով, պիտի վտանգւին Պարսկաստանի հողային ամբողջութիւնն ու անկախութիւնը:

Այս տեսակէտները եւ ուրիշ բազմաթիւ պարագաներ աչքի առջեւ ունենալով, Դաշնակցութիւնը աւելի քան երբեք Թանկագին կը նկատէ պարսիկ ժողովուրդին բարեկամութիւնը, որուն ամբաստանման համար անհաշիւ արիւն թափած է, Իրանի ազատագրական պայքարներուն եւ Մեծ—Պատերազմի տագնապի օրերուն:

Նոյնօրինակ պոլիտիկոսներու սաղբանքները անզօր են խանդարելու այդ բարեկամութիւնը:

Իսկ եթէ կան պարսիկ վարիչներ, որ կանտեսեն այս անվիճելի փաստերը եւ դարաւոր փորձը եւ կականջ կը դնեն Թուրք—Թաթար կամ ռուս համայնավար գործակալներու փսփոտկներուն, կը նշանակէ թէ անոնք լաւ չեն ըմբռնած իրենց երկրին շահերը, եւ հարևանցի կարդացք եւ աշխարհագրութիւնն ու միջազգային պատմութիւնը:

Ուշ կանուխ անոնք ալ պիտի սթափին: Մենք վստահ ենք:

ՀԱՅ ԲՈՂՇՆԵՒԿՆԵՐՈՒ ՀՈՂԱՅԻՆ ՓԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

«Հողը աշխատաւոր գիւղացուն», «կալածատիրութեան վերացում», «հողի հաւասարեցում» և այլ յեղափոխական նշանաբանները, որոնք դարձած են մեր և սոց-յեղափոխականներու դրօշակի վրա, որդեգրած են խորհրդային երկիրներու մէջ և բոլշեւիկները: Ուստի, կը թւի թէ մենք ուրախ պիտի ըլլանք, որ մեր նպատակը կիրառորձի, թէկող և բոլշեւիկներու ձեռքով, պիտի ուրախանանք, երբ համարեա վերացած է կալածատիրութիւնը, երբ հողերի իրաւական և բարոյական տէրը կը ճանչցի աշխատաւոր գիւղացիութիւնը: Բայց այսպէս լինելով հանդերձ՝ չենք կարող շմտանշնել, որ այդ ծրագրի ակամայ գործադրումով ու ճնշման տակ, կուսակցական գերիշխանութեան և իշխանութեան պահպանման հաշիւներէջ դրդւած, բուրձնիկները այլանդակեր են հողային բարենորոգումը, որը փոխանակ բարիքի չարիք է դարձած գիւղացի հասարակութեան համար:

Այս պարագան, ի մասնաւորի աչքի կէնյայ, Խորհրդ. Միութեան ծայրագուստները, ուր հողային բարենորոգումի գոչելով թացաբար գոյութիւն ունի ուստ աշխարհակալութեան ամբողջման քաղաքականութիւնը, և «բաժանեայ զի տիրացեալ» նշանաբանը: Այս երկու պետական համարած Հիմունքները ըստ էութեան ի չիք կը դարձնեն բոլշեւիկեան հողային յեղափոխութիւնը. նոր ձևի և աւելի վտանգաւոր կալածատիրութիւն կը ստեղծեն և աշխատաւոր գիւղացիութեան ստրկացման պատճառ կը դառնան: Այս դժբախտ երևոյթը աչքի կը դարնէ ի մասնաւորի Հայաստանի մէջ, որտեղ հայ գիւղացիութիւնը իբր հայրենիքի մէջ կը նկատի ճորտ թէ՛ սակաւահող կամ հողազուրկ և, իբրև մեծամասնութիւն, շահագործման առարկայ փոքրամասնութեան ձեռքին: Պահ մը կարծուեց թէ բոլշեւիկները որդեգրելով մեր հողային ծրագրերը՝ պիտի կարողանան մեր ձեռով լուծել հողային խնդիրը, բայց, դժբախտաբար, այդպէս չեղաւ: Այսօր աւելի քան առաջ մեր ծրագրի մէջ կենդանի պիտի մնայ «հողը աշխատաւորին, հողի հաւասարեցման» նշանաբանը: Ինչպէս երէկ, այսօր ալ Դաշնակցութեան մտահոգութեան, նպատակի առարկան պէտք է լինի հայ ժողովուրդը ազատել հողազրկութենէ, ապաստել փոքրամասնութեան շահագործումէն:

Հայաստանը Ռուսաստանի իշխանութեան տակ ալ ամենէն խիտ կը տառապէր հողազրկութենէն: Ասոր իմաստկան պատճառներն էին. ա) Մաս մը Հայկական դաւաճներու գրաւած ըլլալը Հայաստանին և Թիւրքահայաստանի թիւրքական լուծի տակ մնալը. բ) Մասնաւոր կալածատիրութեան գոյութիւնը. գ) Խորհրդական քաղաքականութիւնը՝ հանդէպ Հայաստանի մեծամասնութիւնը կայսրոյ հայ գիւղացիութեան՝ որով ի հաշիւ հայ գիւղացիութեան, հողերը կը յատկացէին փոքրամասնութիւն կայսրոյ ուստ, թուրք և այլ ժողովուրդներին կամ քուրդներին:

Առաջին պատճառի մասին մենք խօսած ենք ընդարձակօրէն «Իբրջիկ»-ի մէջ: Մեր մամուլն ալ լայն տեղ տաւ է անոր: Մենք պարզած ենք, որ

պահանջը կը բխի ոչ միւտ մեր սոցալային, քաղաքական և այլ պատճառներէն, այլ և աշխատաւոր գիւղացիութեան, Հողազրկի բազմութիւններուն հող և աշխատանք մատակարարելու փափաղէն:

Երկրորդ պատճառը Հայաստանի մէջ այնքան ցաւաւո բնաւորութիւն չունէր, ինչպէս Ռուսաստանի, մեր հարեան Վրաստանի, կամ Ադրբեյջանի մէջ: Հայաստանի մէջ կային կալածատէրեր, բէկեր և շահներ, բայց փոքր քանակով: Եւ այդ փոքրիկ չարիքն ալ վերցւած էր բոլշեւիկներէն առաջ, դաշնակցական կառայաւորութեան օրով: Հայաստանի Հանրապետութեան օրէնքներով խլեցան կալածատիրական հողերը և արեւցանի գիւղացիութեան: Այդ միջոցը, սակայն, չէր կրնար դարձանել հողազրկութեան ցաւը. անիկա պապական գիւղացիութեան համար բաժակ մը ջուր էր միայն: Եւ բոլշեւիկներէն պէտք է շնորհակալ ըլլաւ, որ զէթ այդ բաժակ ջուրն ալ չթափուեցաւ, կալածատէրերու հողերը չլեքրագրուեցան տէրերուն: Այդ տեսակէտով մենք ըսելիք չունենք բոլշեւիկներուն: Բայց շատ բան ունինք ըսելիք երրորդ պատճառի մասին:

Նախ քան ուսանելի Հայաստան արշաւելը, Հայաստանը ընկած էր թիւրք և պարսիկ լուծի տակ: Այս երկու պետութեանց քաղաքականութիւնն էր՝ այդ ծայրադաւառ դարձած երկիրը բնակեցնել դինորական իւլամ, դիվաւուրպպա, թուրքմէն, թաթար տարրերով, թէ՛ իրենց նոր սահմանները ապահովելու և թէ՛ հայութեան ազատանելու ձգտումները ինդոլելու համար: Անոնք կիրառած են հայութիւնը ցրելու հետեւեալ միջոցները. տեղահանութիւնը և տեղահանածներու փոխարէն երկիրը իրենց հաւատարմ տարրերով լեցնելը: Հայկական դիւրերը բնակական, խանական սեփականութիւն դարձնելը և այդ կալածատէր իշխանաւորներու ձեռքով ժողովուրդի հրկիւր քամելը: Այս քաղաքականութեան հետեւանքը եղած է այն, որ, օրինակի համար, Միջին Ասիոյ թուրքմէնները, այրումցիները եկած տեղաւորւած են Դպպախ ու Բորչալու հողաւատ բարերբը դաշտերն ու հովիտները, իսկ այդ գաւառներու հայութեան մէջ մասը դեռ կը թափառէ աշխարհի չորս անկիւնները, իսկ միւս մասը կտկկած է աղքատ լեռներու ու ժայռերու մէջը, իբրև վերջին սպաստանը իր գոյութեան: Այսպէս, Շիրակի Աղջաբան, ուր եկած են Խորասանի, թէ՛ Մազանդարանի վրայով դարափափաններ, մինչ անոր բնակիչները այսօր չկան և կամ, եթէ կան ալ, պէտք է որոնել թրանսիլանիոյ կամ թէ՛ Նուբարիոյ լուծած կամ կլտալոյժ հայերու մէջ: Աղէտաբեր են եղած հայութեան և Հայաստանի համար այդ ներդաղթի և արտաքաղթի քաղաքականութիւնները: Եւ շնայած այդ քաղաքականութեան, հայութեան խոշոր մէկ մասը մտաց կապած իր հայրենիքին, բայց այրելու գեմը հողազուրկ կամ սակաւահող: Անոր պարկուր պէմը մնաց իր շարքաշութիւնը, աշխատանք և ստրկութեան համակերպումը:

Ահա այս դրուժեան մէջ էր, որ 1827-էն հաստատուեցաւ ուսւ իշխանութիւնը, բայց ան ալ չփոխեց Հայաստանի մէջ ստեղծած հողային անարդար կացութիւնը, այլ հաստատեց և հետեւեց նոյն գինւորական, գաղութային քաղաքականութեան, որ կիրառած էին իր նախորդները: Հայաստանի գինւորական կէտերը բնակիցեցան ուսւ արանդուրներով, որոնք յատկապէս անցին ընդարձակ հողեր, թէ և բնիկ բնակիչները կը տառապէր հողագրկութենէն: Այս դրուժիւնը շարունակեցաւ մինչև այս վերջին յեղափոխութիւնը: Եւ այդ մէկ դարու ընթացքին հայ ժողովրդի առջև բացած էր միայն մէկ ճանապարհ իր հայրենիքի մէջ հողային նաւաւորման անելու: Հողերու արատ առևտրի ստացարկն էր այդ կալւածատէրերէ, բնկերէ և խաներէ: Առևտրի այս ազատութեան հետեւանցով հողային անհաստատութիւնը մասամբ կը մեղմւէր՝ մեծ կալւածատէրերու թիւը քիչնայլով և փոխարէնը մանր կալւածատիրութիւն ստեղծուելով: Հայաստանի Հանրապետութիւնը իր հողային օրէնքներով մահացու հարւած տուաւ մեծ կալւածատիրութեան պետականացնելով անոր հողերը և բաժանելով գիւղացիութեան վրա: Բայց, ինչպէս ըսինք, այդ հիմնական դարձան էր: Հայաստանի հողերու մեծ տողոսը կը կազմէին մանր գիւղացիական հողամասերը: Այս հողերն էին, որ երկրի տարածութեան 95% կազմելով՝ բաժանուած էին ազգաբնակչութեան միջև խիտ անհամաչափ կերպով: Հայաստանի մէջ հայութիւնը կը կազմէր բնակչութեան ճնշիչ մեծամասնութիւնը, բայց ան տեղաւորուած էր աւելի քիչ քանակութեամբ գիւղերու մէջ, քան փոքրամասնութիւն կազմող թուրքերը, քրիտները, ռուսները և այլն: Հայաբնակ գիւղերու թիւը քիչ էր, թէ և անոնք եռապատիկ, քառապատիկ անգամ աւելի մեծ էին ըստ ծուխերու թւի, քան այլազգիներունը: Բացի այդ հայ գիւղերը խոտցած էին անբարեբեր լեռնեային մասերու մէջ, այն ինչ այլազգիները բերրի հովիտներու և դաշտերու մէջ:

Ասով չէր սահմանափակէր հայ գիւղերու աննպաստ դրուժիւնը: Հայաստանի բոլոր գլխաւոր ճանապարհներէ, ռազմական վայրերէ հեռացած էին հայերը և բնակեցուած փոքրամասնութեամբ: Այս պարագան բաւական պէտք է լինէր, որ հայ մեծամասնութիւնը ընկնէր փոքրամասնութեան տնտեսական զերիջխանութեան ներքոյ: Հայ գիւղերը ոչ միայն տնտեսական տաղանայի, յետամնացութեան, աղքատութեան մէջ էին, այլ և կտրուած լիարժէ՛ չէին ներկայացնէր ազգաբնակչական ամբողջութիւն մը իրենց երկրի մէջը, թէ և ինքը մեծամասնութիւն էր իր երկրին մէջը: Եթէ չարիքը միայն այս լինէր, կարելի էր դեռ հանդուրժել: Բայց փոքրամասնութիւն կազմող ժողովուրդները ոչ միայն բռնած էին հայկական հողերու որակը և անոր տնտեսական, ռազմական հարկները, այլ և անոր հողերու քանակը: Աղքատ և հարողապկցութենէ զրկուած հայ գիւղերը 5-7 անգամ աւելի քիչ հող ունէին, քան լաւ հարողապկցութեամբ օժտուած, բերրի դաշտերուն մէջ տեղաւորուած ուսւ և թուրք ժողովուրդները: Այս կը լրացնէր թշուառութեան պակասը. կը հարկաբէր հայերուն կամ հայրենիքէն հեռանալ, կամ հայրենի երկրին մէջ դառնալ մշակ փոքրամասնութեանց օտոր:

1918-ին, և դեռ առաջ, երբ հայութիւնը իր գիտակցութեան հասաւ, երբ «Տողը աշխատաւորին» նշանարանը ամբարջաւ ճնշած հայութեան մէջը, բնականօրէն պիտի առաջադրէր այդ անարդար, անբնական կացութիւնը վերացնելու հարցը: Այդ գիտակցութեան հետեանք պիտի համարել չարիքով մը հայ-թրքական պայքարի բնոյթը, որ տարբեր գոյնիով, տարբեր ձևերով կարտայայտէր մինչև 1918թ.: Հանրապետութեան ստեղծումով, երբ հայ մեծամասնութիւնը դարձաւ իր երկրի քաղաքական տէրը, պէտք է լուծուէր և այդ խնդիրը: Հայաստանը անկախ հանրապետութիւն դառնալով՝ ձեռք բերցր արտաութիւն, բայց նաւասարութեան և արդարութեան դաղափայտիկը գործադրելու համար անհրաժեշտ էր առաջին հերթին արմատական միջոցներ ձեռք առնել և հողային անարդարութիւնը վերացնելու: Ատոր համար անհրաժեշտ էր,

ա) Հայաստանի բոլոր գիւղերու ազգաբնակչութեան խտութիւնը, հողերու քանակի և որակի համեմատութեամբ, բերել միեւնոյն յայտարարի:

բ) Կատարել արդար հողարաժաճում աշխատաւոր գիւղացիութեան շնչերի թիւին համահասարակ կերպով:

գ) Հայաստանի ամբողջականութիւնը և ապահովութիւնը երաշխաւորելու համար՝ մենաշնորհից զրկել և թուրք տարրերի երկրի ռազմական և հողորդական վայրերի շահագործումը՝ բաժին հանելով այդ վայրերէն և հայ ազգաբնակչութեան ըստ իր թւի:

Այս երեք առաջնորդող սկզբունքներով Հայաստանի մէջ իրական յեղափոխութիւն պիտի առաջանար. բոլորովին այլ կերպ պիտի դունաւորէին անոր ազգաբնակչական և տնտեսական կեանքը: Լեռներու մէջ սեղմուած խիտ բայց փոքրաթիւ հայ գիւղերը պէտք է ընդարձակէին և բազմապատկէին՝ իջնելով ցած. դէպի հովիտներն ու ճանապարհները: Ընդհակառակը, ռազմական վայրերու, ճանապարհներու և դաշտերու վրայի նօսր ազգաբնակչութեամբ այլազգիները պիտի խտանային, թույլ զբանային և նաւասարկէին հայ գիւղերու խտութեանը: Հողի օգտագործման մէջ խտութիւն չպիտի դրուէր:

Անխորականութեան, հաւասարութեան սկզբունքը ըստ էութեան հեռու էր ազգային բնոյթ ունենալէ և գերազնայօրէն տնտեսական, հողային յեղափոխութեան բնոյթ ունէր: Այդ քաղաքականութիւնը պիտի հարածէր ամենքը անխորհրդորէր այս կամ այն ձևով ձեռք էին բերած հողային, տնտեսական առաւելութիւններ մեծամասնութեան վրա: Հայաստանի մէջ, Հանրապետութեան ընթացքին ոչ միայն թուրք, ուսւ գիւղերը պիտի զրկէին իրենց արտօնեալ վիճակէն, այլ և փոքրաթիւ հայ գիւղերը, հայ վանքերը և կալւածատէրերը: Բայց որովհետև սասնց քանակը և որակը շնչին էր, և ուսւ, թուրք տարրերն էին արտօնեալ վիճակից օգտուող հիմնական ուժերը, այդ պատճառով հողային յեղափոխութիւնը առաւ ազգային բնոյթ: Այդ բնոյթը կուզէին տալ և փոքրամասնութիւնները, որովհետև այդ միջոցով անոնք աւելի կարող էին երկրի յեղափոխութիւնը կատարել՝ դրա և ներքի հակադրափոխական տարրերի միջմտութիւնը առաջ բերելով: Հակառակ ատոր, Դանիակցութիւնը չվարանց հողային յեղափոխութիւնը կատարել, քանի որ անիկա կեանքի հրամայական պահանջ էր, և հայ ժողովուրդը

իր քաղաքական ազատութեան կողքին ստացաւ նաև իր թւին և ընդունակութեան համապատասխան անտեսական հիմունքներ՝ հող և տարածութիւն:

Կը կարծէր, թէ այդ դրութիւնը պիտի մնար, թէ ստեղծւած այդ վիճակը ոչ միայն խորհրդային հայ իշխանութեան կողմէ, այլ և ամէն մէկ արգարամիտ օտար իշխանութեան կողմէ ան պիտի նկատուէր համապատասխան հաւասարութեան, արդարութեան սկիզբունքներուն, աշխատանքի ժողովրդեան ընդհանուր շահերուն, երկրի ամբողջական զարգացման: Բայց այդպէս չեղաւ: Այսօր աշխատանքը գերազացիութեան ընդհանուր շահերը չէ հետաքրքրողը և ոչ ալ երկրի լարւած աշխատանքը, այլ ազգայնակութեան փոքրամասնութեան շահերու ապահովումը: Ինչո՞ւ է այդպէս — դժուար է ատող բանականութեամբ հասկնալ: Այդ բացատրութիւնը պէտք է թողնել իրենց՝ ներկայ վարիչներուն: Մեր նպատակն է այսօր միայն փաստը արձանագրել իրենց իսկ խոստովանութեամբ:

Հողօրոգիում ընկ. Ա. Երզնկեանը Հ.Կ. (Բ.) Կ.Կ.Կ. Ընդհանուր Ժողովին կը գեկուցանե՞.

«Յորհրդային Հայաստանի հողօգտագործութեան և հողաշինարարութեան առջև ծառայած էին հետեւեալ արդեւները:

1) Համատարած սակաւահողութիւն և դրանից բխող գլխարկութիւններ, իսկ դրանց կողքին՝ պատճառաբար ու կոտորածներէ հետեւեալ ստեղծւած սակաւարկ հողատան գիւղեր ու սակաւանդած հողատան ծուխեր»: — Այս ճիշտ է. Հայաստանի մէջ եթէ կայ սակաւահողութիւն, ատոր կողքին կայ և հողի ստատութիւն: Ժխտ կը հաստատէ բայց Երզնկեան, թէ՛ «Կան հողատան սակաւամարդ գիւղեր» և, աւելացնելով, դատարկ չըլնաններ, ինչպէս, օրինակ, Ջղինը, Միլի ձորը և այլն: Այս փաստէն ամէն ոք պէտք է հետեցնէր, որ, հաւասարութիւն ըլլալու համար, սակաւահող գիւղացիութիւնը պիտի հող ստանար հողատան շրջանիսէ՛ և զիւրիս: Բայց ստոր փոխարէն, ի դարմանս ձեզի, ահա թէ ինչ կը կատարեն Յորհրդային Հայաստանի վարիչները:

2) «Գաւառակցութեան կողմից վտարւած ազգային փոքրամասնութիւնների յորհրդ. Հայաստանի գերկը վերադառնալու հետեւանքով, նրանց տեղափոխելու շտապ անհրաժեշտութիւնը, մեծ մասամբ հողագործի գաղթականների ու սակաւահող տեղացիների կողմից դարււած հողերի վրա»: Ահա այս է Երզնկեանի «հողային յեղափոխութիւնը», և ան առանց ամշնալու, հրամայակով կը խոստովանի իբր հերոսութիւն իր անմտութիւնը: Նոյնիսկ ինչի փաշան հասկցաւ, որ առանց թրքական հողերու մէկ մասը Հայերուն տալու չի կարող սարկել Հայաստան և անոր ներկայութեամբ էր, որ Բազդեասնիի չըլնանի, Միլի Գարայի թուրք գիւղացիութեան ընդարձակ հողերը հաւասարադէս կը բաժնէին ազգաբնակչութեան միջև և լրբոստացողները կարտաքսէին կամ կը հնազանդեցնէին, իսկ Երզնկեանները չեն կրնար կամ չեն ուզեր հասկնալ:

Ի՞նչ պատահեց, որ դիպցողները յետ կուգան Յորհրդ. Հայաստանի գերկը: Թիւրքերոյ ձեռք եղած մեր հողը՛րը քայցան, թէ՛ Հայաստանի հողերը շատցան: Ո՛չ այս և ոչ այն: Գուցէ, կը կարծի, թէ՛

միջազգային բարդութիւնն պիտի լինի, թէ՛ թուրքերը կը սպառնան, կամ իրատ կուտան: Հաւանական է: Բայց այդ պարագային Երզնկեանները պիտի խոստովանին, որ Յորհրդ. Միութիւնը արժէքադուրկ ոյժ մըն է և իրենք՝ ոչնչութիւն: Եթէ խղճուկ Հայաստան մը, դեռ չկազմակերպւած, կը կարողանար հողային հաւասարութեան անհրաժեշտութիւնը իրագործել թուրք բանակի թնդանօթիւնու որոտի ներքոյ, ապա ո՞ւր է այն հողը, խորհրդային ռուսական ուժը, որի վրա կոթնած՝ հայ բուլշեւիկները կը պարծնան օր և գիշեր: Ձեռ կարծեր, սակայն, որ այդքան հեռուները կը մտածեն հայ բուլշեւիկները. անոնց մտահոգութիւնը մէկ բան է՝ պնակակցութեամբ, ստորնաքաղութեամբ հանելի ըլլալ եղբայրական Այդրէջնանին և ռուս տանդական քաղաքակառութեանը՝ իրենց դէրբերը իբրև թէ ամբացնելու համար: Հանելի ըլլալու համար մի բան է պէտք՝ դրէկ հայութիւնը, թուրքայեան ան, ուժեղցնել օտար տարերր այն աստիճան, որ մեծամասնութիւնը կարող հայութիւնը անկարող ըլլայ իր շարժումի մէջ ապատութիւն և անկախութիւն ունենալու:

Բայց հայ բուլշեւիկները փարիսեցիութեան ախտէն այ ազատ չեն. անոնց սիրաբ կը ճնշէ հարիւր հազարներու աղի արցունքը և վախ ալ կազդէ ապագայ ցատուն ու դատաստանը, ուստի կեղծաւորաբար կը խոստանան լուծել հետեւեալ հարցերը. իրենք է, որ կը գրեն. «Հարիւր քսան հազարից աւելի հայ գաղթական գիւղացիութեան Ֆիլիքական զոյութիւնը փրկելու հրամայական պահանջը կայ, նրանց հող տալու, ուրեմն, և տնտեսութիւն ստեղծելու միակ ճանապարհով»: Այս խօսքերէն կը հասկնանք խոստովանութիւն մը, թէ 120,000 հայեր կը մեռնեն, որովհետև հողերը գրաււած են յօգուտ «Յորհրդային Հայաստանի գերկը» վերադարձող ազգային փոքրամասնութեանց: Արդարութիւն է այս:

Վստ խօսք չգործածենք, չըսենք՝ աֆէրիստ, խաբեայ, բայց չենք կարող աշակապուութիւն շորակել, երբ Երզնկեան կառավարէ իր ինդիբը, «Արտասահմանից ներգաղթող նոր խմբեր ընդունելու և տեղափոխելու քաղաքական անհրաժեշտութիւնը կը ներկայանայ մեր առաջ»: Ի՞նչպէս, եթէ 120,000 գաղթականներ անհող են մնացած, եթէ փոքրամասնութեանց վերադարձը հրամայական անհրաժեշտութիւն է իրենց համար, եթէ հողերու հաւասարեցումով անարարութիւն կը համարի վերադարձ արտօնակ թրքութիւնը: Ի՞նչ հողային Փոնդի հաշիւն և ո՞ւր պիտի տեղափոխէ եկող գաղթականները և ինչո՞ւ: Ատոր պատասխանը երջնեկանը ինքը կուտայ. — «Բաղաճական անհրաժեշտութիւնը»:

Բանաճք այդ կեղծաւոր փակազիծը, անոնց համար «Բաղաճական անհրաժեշտութիւն» վարազիծը այն չէ, որ հայութիւնը հաւաքեն Հայաստանի մէջ, որ փրկի ուժացումից, ոչնչացումից: Ոչ: «Բաղաճական անհրաժեշտութիւն» խօսքերու տակը թոյգուած է խիստ գոկնիկ և դաւադիր նպատակ. ի ցայց մարդկանց քաշել Հայաստան քանի մը հարիւր տարագիրներ, ստով ուկոր մը նետել բորբոքւած Հայրենասէր հողերներու առջև, և ժամանակ մը տխմար մարդոց մուրցնելով՝ շահագործել, դրամ ներք քաշել և պատրանքը տալ հայրենաշինութեան և ազգասիրութեան:

*) «Նորիդ. Հայաստան», 3 փետր. 1928թ.

Երզնկեանք իր գեկուցման մէջ կատարողը լուծելու շնորհ խնդր մը ևս: «Կատարողուս մ արօտա- վայրերի օգտագործութեան պատմականօրէն բարդացած պրոբլէմի լուծումը» — Խորհրդաւոր, անդիլական դիւանագէտի խորամանկ խօսքեր: Եկէք ու հասկացէք, ասով կուզէ ըսել, թէ Հայաստանի հողերու կէսէն աւելին իրեն չի պատկանիր, այլ այրելէջանցի բաշտր- ներուն: Երզնկեանք, հողային գործաւոր, դիտէ, որ հայութիւնը հող չունի, ոչ թէ հողի պակասէ, այլ հողի մեծ մասը օտար երկրի օտար հողերուն յատկաց- ւած լինելու պատճառով, ուստի և այլ խօսքերով կարծես կուզէ ելք մը գտնել արօտավայրերէն բաժին հանելու Հայաստանի հողաբարիկներուն, բայց ասոր չգործադրելն արդարապէս համար իսկից կաւելու- նէ «պատմականօրէն բարդացած պրոբլէմի լուծումը»:

որով կուզէ հասկննել, թէ այդ լուծումը թէև արդար է, բայց վաղատմ: 25^o որ 1925-ի համադրումարի մէջ արծարծեցաւ արօտակողները ժողովուրդին յատ- կացնելու խնդիրը, քուրսներին սահմանափակելու հարցը, բայց Արամաի Օղլին հասկցուց, որ պատմա- կանօրէն թուրք ժողովուրդը սովորած է քուրսութեան, անոր քաղաքակրթելէ յետոյ միայն հնարաւոր կը լինի արօտակողներուն հարցի լուծումը: Ուրիշ խօս- քով, քաղաքակրթածները պիտի դահարելին անջա- դարակիրթներուն: Աս ալ նոր ձևի արդարութիւն է: Թիւրքն է, որ կը հաստատեն իմ ըսածի ճշմար- տութիւնը: Ահա իրենց իսկ՝ բոլշևիկներու խոստովա- նութիւնները: Իբրև հողաբաժանութեան օրինակ, Հայաստանի հողային գործաւորը կը բերէ հետեւեալ վիճակագրական տախտակը.

№	Երջան կամ գաւառ	ընկուծութիւն ըստ ազգութեան	ընկուծութեան թիւր	հողային ֆոնդի բաշխումը. 1926թ.					
				վարելահող և խոտհարք		արօտայայր		գումարը	
				գեոստատիս	մէկ շնչին	գեոստատիս	մէկ շնչին	գեոստատիս	մէկ շնչին
1.	Ստեփաննան և Վարդգիս	Հայ	24.794	25.586	1.03	8.483	0.34	34.069	1.37
		Ռուս	10.497	18.321	1.76	5.844	0.56	24.165	2.32
		Թուրք	2.796	5.757	2.05	1.106	0.39	6.863	2.44
2.	Դարայակազ	Հայ	21.787	15.727	0.72	65.469	3.00	81.196	3.72
		Թուրք	6.417	5.725	0.88	33.450	5.21	39.175	6.10
		Հայ	17.332	19.190	1.10	11.844	0.63	34.024	1.78
3.	Բասարգեշար	Հայ	11.337	20.363	1.78	10.184	0.89	30.546	2.64

Պէտք է ուշադրութեամբ նայել բոլշևիկներու այդ վիճակագրութեան վրա: Այդտեղ ալ կը տեսնէք, որ այլազգիները կրկնակի հող ունին հայերու համեմատութեամբ և այլ՝ 1926-էն, բոլշևիկներ հողային յեղափոխութենէ, «հողը աշխատաւորին» նշանարանի իրադրութիւնէ յետոյ: Բայց բնական հարց կատարա- նայ. ի՞նչու այս խորակնութիւնը համայնալար հայերու հողէ դէպի իրենց արիւնակից ժողովուրդը հիւրասիրութիւն է այս, մեծահողութիւն, թէ՛ տրւե- մարութիւն:

Պատասխանի համար խօսքը տանք «ընկեր» Երզն- կեանին: «Ազգային փոքրամասնութեան հողային հար- ցըն ևս լուծած աւարտած է: 1927թ. վերջին ազգա- յին փոքրամասնութիւնների մէջ հողագրակ գրկացի- ութիւն այլևս չկայ... Ազգային փոքրամասնութիւնով բնակւած վայրերը, նաև միջկիւղայնաբարութիւնից ու ներքին հողաբաժանութիւնից յետոյ, հողային ֆոնդով աւելի լաւ են ապահովուած, քան հայ գիւղա- ցիութիւնը: Եւ այս գրութիւնը ստեղծել է թուրք ազգաբնակչութեան եղբայրական վերաբերմունքն ու վստահութիւնը հայ ժողովրդի նկատմամբ ամբաստնա- լու, անցեալի կիւրաքարչին պատմութիւնը մոռացնել տալու և իր կարգադրուած ընտանեկան ու տնտեսա- կան գրութիւնը ոչ միայն վերականգնելու, այլ և դարգացնելու դիրքութիւն տալու համար: Ռուս գիւ- ղացիութեանը համեմատաբար բարձր նորմայով հող թողնելը բացատրում է նրա կանգուն տնտեսութիւնը՝ ժողովրդական ընդհանուր տնտեսութեան ու ջանքի նկատառումով խրախուսելու ցանկութեամբ»: Եւ ասանց կարճրելու կը շարունակէ.

«Վերոյիշեալ նկատաւոր պայմանների շնորհիւ ազգային փոքրամասնութիւններից որոսնեք ունեն հարուստ և կանգուն տնտեսութիւն, թիւ Դաշնակցու- թեան օրով հիմնովին աւելւած ու թալանւած թրքա- կան գիւղերը ցլեւել, չհնացել ու նորոգուել են»: Լաւ,

ուրախանանք Երզնկեանի հետ փոքրամասնութեան այդ շարժումը գրութեան վրա, բայց մեծամասնութիւնը, հայութիւնը. — «Համատարած սակաւահողութիւն, 120,000-ից աւելի հայ գիւղացիութեան ֆիզիքական դոյութեան վտանգը և հրամայական պահանջը նրանց հող տալու»:

Ասիկա վրդովեցուցիչ է միայն, այլ և կենսիկ և մահաւած խնդիր. երկրի բնակչութեան մեծամասնու- թիւնը պիտի տառապի հողազրկութենէ, չարտի ունե- նայ կանգուն տնտեսութիւն, հարիւր հազարներով պիտի դատապարտուի սովահարութեան, որպէսզի Եր- զնկեանները «եղբայրական վերաբերմունք ու վստա- հութիւն» վստասիրին թուրքերու կողմէ: Կատարուե- թիւն է ասիկա, թէ երեսայութիւն: Ասիկա դիտաւո- բեալ թշնամութիւն է և ոճիր հայ բողոքութիւններու նկատմամբ:

Ինչաւ չէ մեր որակումը «հողօրդիւմ»-ի վերաբեր- մամբ: Այդ դիւրաւ կարելի է ապացուցանել, իր իսկ խօսքերով ու թիւերով: Ան ըսաւ, թէ հայութիւնը հողագործի է և առեւտրի 120,000 գիւղացիութեան ֆիզիքական դոյութիւնը վտանգւած: Պէտք չէ՞ այդ գանդաւորի դէթ մէկ մասի փրկութեան համար միջոց- ներ մեղք առնել: Այդ անհար չէ եթէ խորակնութե- թիւնը վերացիկ և հայերու վրան, գոնէ յատկատանի մէջ, նայի դէթ հաւասար աչքով ինչ որ թուրքին և ուստի վրա: Ահա թէ ինչպէս: Բերած վիճակագրա- կան տախտակին կը նկատէք, որ Ստեփաննան և Վարդնիցովկա շրջաններու մէջ հայ շնչին կրկնի 1,37 գեոստատիս, իսկ ռուսին՝ 2,32, թուրքին՝ 2,44 անձ գլուխ: Երբ այդ գաւառակներու 10,427 ռուսերը, և 2,796 թուրքերը ստանան հայաստան հաւասար չափով, այսինքն 1,37 գեոս., այդ գաւառակներու մէջ 9363 մարդու տեղ կը բացուի շնչին 1,37 գեո. հողով է Դարայակազի մէջ և թէ թուրքերուն 6,10 գեոս. փոխա- րէն տրւի հայերու հաւասար՝ 3,72 գեոս., 4114 մարդու

տեղ կը բացուի: Բասարդեւարի մէջ եթէ թուրքերու փոխանակ 2,64 դէս. տրւէր 1,78 դէս., 6000 մարդու տեղ կը բացուի: Ուրեմն, միայն Երզնկեանի յիշած եզեք զաւառակներու մէջ 19,477 Ֆիդիքական դոտութեան վտանդին ենթարկւած հայ զիւղացիութիւնը կարելի է փրկել սորոք մահէն: Բայց չէ՞ որ Հայաստանի մէջ կայ 9 դաւառ 32 դաւառակով: Այդ հաշուով 120,000 հայութեան մէկ մասը փրկել, դժւար չէ, միայն թէ ցանկութիւն լինի:

Այս թւարանական հաշիւներէն պէտք է հասկնալ, որ Հայաստանի մէջ ոչ թէ միայն հողի պահասն է հողազրկութեան ծնունդ տուողը, այլ և հողի տնօրինման պակասը: Այդ բացորոշ կը լինէր, եթէ Երզնկեանը խոհեմութեամբ չծածկէր հայու գլխին կիրառւած հողային անարդարութիւնը: Արօտատեղիներու հարցը շօշափելով՝ ան զբուշուրթեամբ կը ձեւակերպէ այս անբովանդակ խօսքերով. «Կարգաւորել ենք արօտավայրերի օգտագործութեան խնդիրները: Վէճերն ու տարածանութիւնները քոչւորներէ և տեղացիներէ միջև դերթէ վերացել են»: Բայց ինչպէ՞ս է զկարգադրել» — չտես, որովհետև ըսելիք բան չէ: Բայց անոր չըսածը մենք ըսենք՝ առնելով իրենց իսկ բուշուրթներու գրածներէն: 1926-ին Հայաստանի արօտատեղիները յատկացուել են հետեւեալ ձևով.

Գաւառ	Տեղացիներուն	Քոչւորներուն
Երեւանի	24,450 դէս.	9,700 դէս.
Էջմիածնի	31,400 ,,	—
Լենինականի	19,700 ,,	16,600 ,,
Նոր-Բայազէտի	44,700 ,,	15,800 ,,
Լոռու-Փամբակի	19,200 ,,	20,100 ,,
Դիլիջանի	27,000 ,,	29,000 ,,
Դարալագեաղի	9,500 ,,	33,800 ,,
Չանդակոբէի	14,200 ,,	100,000 ,,
Մեղրի	4,456 ,,	980 ,,
Գումար	199,600 ,,	206,780 ,,

Այս թիւերը կը տեն, որ Հայաստանի արօտավայրերու կէսէն աւելին կը տրուի ուրիշներուն, ոչ թէ երկրի բնակիչներուն, այլ Ազգբէջանին, Վրաստանին: Ասոր ինչ պատճառ է բերելու պարոն Երզնկեանը՝ «զուցէ հանրապետութեանց սկըտը շահելու համար», բայց եթէ ամէն սիրտ շահելու դիմաց բան մը պիտի սպասուի, ո՞րն է այդ բանը հեղանք, ծաղր և արհամարհանք՝ հարևաններու կողմէն, և ստրկութիւն, աղքատութիւն և մահ մեր Ժողովրդին: Այս դժբախտ կացութիւնը կը տեղի ունայ հայ կոմունիստներու ձեռքով: Մենք գիտէինք Երզնկեանի պատկերը, որդէս ստորաքար չի անձ, կոմունիստ Շահումեաններու ներք ընկած ատեն անոր դժմ դաւող Ռամիլիլիկներու կողքին, բայց անոր մահէն յետոյ կոկորդիլոսի արցունքներ թափող: Մենք գիտէինք, թէ այդ մարդը Վրաստանի լակէյն էր դարձած, բարեի բռնած մոնթ մը՝ Ժողդանիայի առջև, գիտէինք, որ կշեռքի ծանր թաթին միշտ նստող մէկն է, և ուժեղը որ մատը տնկելու լինի, ան պիտի կանչէ անբանի նման. բայց չէինք գիտեր, որ կարող է այդքան անխոհեմութեամբ և ստորութեամբ դաւել ու պատժել խեղճ ու տառապող հայ զիւղացիութեան:

Դաշնակցութիւնը, այդ ատելի կուսակցութիւնը հիմքէն վերջնելու միջոցը, հողային խնդրի լուծումն է արդարութեամբ և հաւասարութեան սիլիզուներ լրա: Այսօր աւելի քան առաջ, Դաշնակցութիւնը սիրելի է զիւղացիութեան համար, որովհետև իր դրօշակի վրա զիւղացիները աւելի փայլուն և ցայտուն կերպով կը նշմարեն «հողը զիւղացուն հաւասար կերպով» նշանաբանը, «հող և հայրենիք» սրբազան խօսքերը: Այսօր մեզ համար այդ դժւար է իրադրո՞ծել, բայց ներկայ ոչ բարով Հայաստանի կառավարիչների համար հնարաւոր է: Մեր երկիրն ունի 2,742,548 դէս. հող, որմէ 736,521 դէս. վարելահող, խոտհարք, այգիներ, 683,000 դէս. զիւղական արօտավայրեր, 587,000 ամառային, 154,000 ձմեռային արօտատեղիներ, մինչև 324,000 դէս. անտառներ և 275,000 դէս. անմշակելի հողեր: Այս թւերը ցոյց պիտի տային, որ այնքան ալ անմխիթար չեն մեր հողային հարստութիւնները: Ասոնք տարածութիւններ են, որ եթէ խնամքով բաժնելին զիւղացիութեան վրա, ոչ միայն 120,000 Երզնկեանի յիշած մահուան դատապարտւած հողազուրկները պիտի փրկուին, այլ և կրկնակին առատօրէն պիտի ապրին և դարձան: Այս անբնական կացութեան վերջ տարու համար մեր զիւղացիութեան հաւատոյ հանդանակը պիտի մնայ. «հողի արդար և հաւասար բաշխում, արտոնատիրութեանց և շահագործումներու վերացում, ապիկար պաշտօնէից ոչնչացում»:

ՌՈՒՅԷՆ

ԲՈՒՇԵՒԻԿՆԵՐԸ ԵՒ ՌՈԶԱ ԼՈՒՔՍԵՄԲՐՈՒՐԳ

Ինչպէս յայտնի է, բուլճարիկները իրենց սրբոց կարգին անդուշած են այնքան էլ եղբարական մասով մեռած Ռոզա Լուքսեմբուրգը և կարլ Լիբկնիխով գերման ընկերավարական մտքի և գործի այդ ամենաարմատական ու փայլուն ներկայացուցիչները: Խորհրդային իշխանութիւնը անոնց արձաններ կանգնած է և կարգ մը քաղաքներու մէջ անոնց անունով կոչած է փողոցներ, հրապարակներ ու այլ և այլ հաստատութիւններ: Այսպէս, բուլճարիկները անվիճելիօրէն «Իրենցը» կը նկատեն այդ գոյգ յեղափոխական նահատակները:

Որքա՞ն իրաւացի են անոնք. ըսել է՝ եթէ Լուքսեմբուրգը և Լիբկնիխտ ողջ ըլլային, պիտի յարէին արդեօք անվերապահօրէն բուլճարիկներուն:

Լոկ պարզ հետաքրքրութեան առարկայ չէ այդ, այլ ինչդէր մը, որը, ինչպէս պիտի տեսնուի, կարևոր դադափարարանական նշանակութիւն ունի: Ու եթէ «Սպարտակուս» միութեան հիմնադիրներէն Լիբկնիխտի մասին ի վիճակի չենք ճշտելու, թէ ո՞րն էր իր իսկական վերաբերումը բուլճարիկներու հանդէպ, Լուքսեմբուրգը, Լիբկնիխտի ամենամօտ դադափարակիցը, գրական գործ մը ձգած է, ուր կը պարզէ իր տեսակէտը բուլճարիկեան քաղաքականութեան նկատմամբ*):

Լուքսեմբուրգի այդ գրքոյկը հետաքրքրական պատմութիւն ունի: 1918-ի ամառը հեղինակը կը գտնուէր Բրեսլաուի բանտը ու անկէ իրենց միութեան օրգանին («Spartakusbriefer») համար՝ գրած էր քանի մը յօդուած, ուր կը ըննադատէր բուլճարիկներու քաղաքականութիւնը: Նկատի ունենալով այն ծանր վիճակը, որին նոյն միջոցին մատուցած էին բուլճարիկները, Լուքսեմբուրգի բարեկամները անյարմար դատեցին իր յօդուածներուն հրատարակութիւնը: Ու անոնցմէ Պ. Լեւի**): Երթալով Բրեսլաու՝ յաջողած էր համոզել Լուքսեմբուրգը, որ զոնք ամօժատապէս կո կենայ իր յօդուածները հրատարակելու գաղափարին: Սակայն, ցոյց տալու համար Լեւիին, թէ որքա՞ն անհրաժեշտ է անաշտ ըննադատութիւնը Լեւիինեան քաղաքականութեան, որը ամենամարտ հետեմքները պիտի ունենար Եւրոպայի բանտարական շարժման համար, Լուքսեմբուրգը կը պարտաստէ իր գրքոյկը և բարեկամուէի ի մը միջոցով հետեմքը կը յայտնէ Լեւիին: «Գրքոյկը գրած եմ ձեզի համար. ու եթէ անով կարողացայ համոզել ձեզ, ապա դուր չէ որ կատարած եմ այս աշխատանքը»:

*) Die russische Revolution. Aus dem Nachlass von Rosa Luxemburg. Berlin 1922.

**) Paul Levi, գերման ընկերավարական կուսակցութեան ծածօք անդամներէն, առեմ մը յարած էր կոմունիստներուն: Ռուսիա կատարած իր քաղաքական քեմէն յետոյ՝ ան լեց կոմունիստական շարքերը և մտաւ «Գերման Անկախ Ընկերավար Կուսակցութեան» մէջ: Այս պատճառ, երբ «անկախները» վերստին միացած են «Գերման Ընկերավար Կուսակցութեան», Լեւի նորեմ կը գտնուի այս վերջինի մէջ՝ լինելով միևնոյն առեմ անդամ գերման խորհրդարանի (Ռայխտագի):

Լուքսեմբուրգի մահէն թիչ յետոյ, 1920-ին, Լեւի կը ձեռնարկէ գրքոյկին հրատարակութեան՝ կցելով անոր ընդարձակ ներածութիւն մը, որը նազ շահեկան չէ, քան գրքոյկն ինքը: Ինչ-ինչ պատճառներով Լուքսեմբուրգի գործը լոյս տեսաւ միայն 1921-ի վերջերուն և տարօրինակ կերպով անձանօթ մնաց Ֆինլըն իսկ շատերուն անոնցմէ, որոնք միշտ մասնաւոր հետաքրքրութեամբ հետեմած են բուլճարիկներու վերաբերմամբ եղած ամէն ըննադատութեան, եթէ անգամ այդ ըննադատութիւնը կատարած է աւելի թիչ հեղինակաւոր անձերու կողմէն:

I

ՌՈՒՍ ԵՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ ԸՆԹԱՍՏՐԸ

Պարզ է, կըսէ Ռ. Լուքսեմբուրգը, որ ոչ թէ ըննադատութեան գուրկ շատագուրութիւնը, այլ խորամուկն և պզօն ըննադատութիւնը միայն կարող է երևան հանել փորձառութեանց և հրահանգիչ դասերու դանձերը: Ենկառութիւն պիտի լինէր, անշուշտ, երևակայելի թէ՛ երբ Ռուսիոյ մէջ այնքան ծանր պայմաններու տակ կը կատարուէր բանտը դասակարգի դիկտատորութիւն հաստատելու առաջին պատմական փորձը, այն ամենը, ինչ որ տեղի կունենար հոն այդ ուղղութեամբ, կատարելութիւն էր: Ընդհակառակն, ընկերավարական քաղաքականութեան տարրական բմբռումները և անհրաժեշտ պատմական նախադրութեանց հետագտուութիւնը կը մզէն ընդունելու, թէ նման ճակատագրական պարագաներու մէջ նոյն իսկ անսահման դադափարապաշտութիւնը (իդէալիզմ) և անխորտակելի յեղափոխական կրողը ի վիճակի են իրագործելու ոչ թէ ռամկավարութիւն և ընկերավարութիւն, այլ այդ երկուքին փակած անցոր և աղճատած յաւելումներ միայն:

Այս ճշմարտութիւնը պարտական են իւրացնել բոլոր երկիրներու ընկերավարականները: Վասնզի միայն զառն իմացականութեամբ կարելի է չափել ամբողջ մեծութիւնը այն պատմականապատմութեան, որ ունի միջազգային պրոլետարիատը ռուս յեղափոխութեան ճակատագրին հանդէպ: Միւս կողմէն, այս ճամբով է միայն, զր կը պարզուի միջազգային պրոլետարական յեղափոխութեան վճռական կարևորութիւնը: Այդ յեղափոխութիւնը հիմնական պայման մըն է, առանց որի ամէն փորձ, կատարած միայն մէկ երկրի մէջ, անխուսափելիօրէն պիտի վիժէ, որքան և մեծ լինեն այդ երկրի պրոլետարիատին ջանքերն ու զոհողութիւնները:

Ռուս յեղափոխութեան առաջին շրջանը, անոր պտօթկուէն մինչև հոկտեմբերեան յեղաշրջումը, իր երթաքող մէջ համապատասխանէր անգլիական և Ֆրանսիական կեծ յեղափոխութեան զարգացման կանոններուն: Ատիկա սովոր ընթացքն է ամէն առաջին

ըզհանուր հաշվարդարի, որը տեղի կունենայ բուրժուական հասարակութեան ծոցին մէջ յառաջ եկած յեղափոխական ուժերու և հին հասարակական կաշկանդէջ պայմաններու միջև:

Իր ծաւալումը կը կատարւի, ընկանաբար, վերելական դժով — չափաւոր սկզբնաւորութիւններէ ղէպի նպատակներու մէջու աւելի մեծ արժատականացումը. ու ատոր հետ զուգահեռաբար — դասակարգերու և կուսակցութիւններու համաձայնութիւնէ ղէպի միահեծան իշխանութիւնը արժատական կուսակցութեան:

Առաջին վայրկեանին, 1917-ի մարտին, յեղափոխութեան գլուխը կանգնած էին կաղէտները (սահմանադրական-նամկավարականները), այսինքն՝ ազատական բուրժուազին: Չարժանալի չէ այդ, վասնզի յեղափոխութեան յորձանքը սկիզբէն իսկ փրցուց և իր հետ տարաւ ամէն ինչ և ամէն ոք. ու չրդ Պետական Դուման, յետագէմ ընտրական իրաւունքի այդ արտադրոյթը, յանկարծ, յեղափոխութեան օրդան մը դարձաւ: Բոլոր բուրժուական կուսակցութիւնները, մէջը լինելով ազգայնական աջակողմեանները, անակնկալ կերպով փաղանջ մը կազմեցին ընդդէմ միահեծանութեան. ու ցարկ իշխանութիւնը ինկաւ, իբրև ծիւրած մարմին մը, դրեթէ՛ անոց պայքարի: Քանի մը ժամանակ մէջ ի դերն ելաւ նմանապէս արտասական բուրժուազի թոյլ փորձը՝ փրկել զհաս ու հնարաւորութիւնը: Դէպքերու զահավէժ գարգացումը քանի մը օրուան մէջ կտրեց անցաւ այնպիսի տարածուածութիւնը, որոնց համար Յրանա երբեմն տասնեակ տարիներ գործածած էր: Իրականաբար հանրակացութիւնը պատրաստ, ներքուստ հասուն պտուղ մըն էր յեղափոխութեան առաջին իսկ գորհէն յետոյ:

Հոտ, սակայն, սկսաւ երկրորդ, դժւարին գործը: Յեղափոխութեան մղէչ ուժը առաջին պահէն քաղաքային պրոլետարիտան էր: Անոր պահանջները շտապանցան քաղաքական ուսմակավարութեան իրագործումով, այլ ուղղւեցան ղէպի միջնազգային քաղաքականութեան հրատապ խնդրի — հաշտութեան անյարգ կնքումը: Այդ պահանջին միացաւ նաև բանակը: Գալով ղիբաշցիութեան ան առաջին տեղը դրաւ հողային խնդրը, որը 1905-էն արդէն յեղափոխութեան առանցքը դարձած էր:

Անյապօր հաշտութիւն և հող—այս երկու նշանաբաններն էին, որ պատակաւոր յառաջացուցին յեղափոխական փաղանջին ներքը: Հաշտութեան պահանջը խտիւ կը հակասէր աշխարհակալական ձգտումներուն ազատական բուրժուազիի, որի զաղափարաբանն էր Միլիւկովը: Իսկ հողային խնդրը նախ մղձաւանջն էր բուրժուազիի միւս թիւին՝ կալածատէրերուն. ապա, իբրև «բռնարարում սեփականութեան սրբազան իրաւունքի», խտուելի էր բոլոր բուրժուական դասակարգերուն համար:

Այսպիսով, յեղափոխութեան յաղթանակի յալոյրդ օրն իսկ իր ծոցին մէջ ներքին պայքար մը սկսաւ: Ազատական բուրժուազին դիմեց քաշչուկի և խուսափման քաղաքականութեան. մինչ բանւորութեան, բանակի և գիւղացիութեան պահանջներուն արտայայտութիւնը միշտ աւելի բուռն կը գտանար: Տարբարայտութիւնը միշտ աւելի բուռն և հողի խնդրին հետ կապւած չկայ, որ հաշտութեան և հողի խնդրին հետ կապւած էր նաև քաղաքական ուսմակավարութեան իսկ խնդրը: Արդարև, բուրժուական դասակարգերը, որոնք՝ յեղա-

փոխութեան առաջին ալիքներէն ողողւելով՝ հաւանեցան հանրակացութեան հուշկաման, շուտով սկսան ղէպի ետ նայիլ ու հոն յենակէտ փնտռել: Կալեղինի՞ արշաւանքը Պետերբուրգի դէմ այս հակայեղափոխական տրամադրութեան պարզորոշ արտայայտութիւնն էր: Արշաւանքի յաջողութիւնը մահացու հարւած պիտի լինէր ոչ միայն խաղաղութեան ու հողի խնդրին այլ և ուսմակավարութեան ու հանրակացութեան համար:

Այսպիսով, հաղիւ քանի մը ամիս անցած, ռուս յեղափոխութեան վիճակը յանդեցաւ հետեւեալ երկընտրանքին. հակայեղափոխութեան յաղթանակ կամ պրոլետարիտի ղիկատարութեան, Կալեղին (Կորնիլով Ռ.Լ.) կամ Լենին: Այս էր առաջկարգական կացութիւնը, որը կարճ ատենի մէջ, առաջին գիծովութիւնը փարատելէ յետոյ, կը ստեղծուի բոլոր յեղափոխութեանց պահուն: Թուսիոյ մէջ այդ կացութիւնը յառաջ եկած էր վերը յիշած երկու հրատապ խնդրներու շնորհիւ, որոնց լուծումը անհնարին էր «բուրժուական յեղափոխութեան» շրջանակին մէջ:

Թուս յեղափոխութիւնը այստեղ անգամ մը եւս հաստատեց մեծ յեղափոխութեանց կենսական օրէնքը, այն է թէ՛ յեղափոխութիւնը պիտի չէ արգել մղձաւան կեղծով յառաջ ընթանայ՝ խորտակելով երկաթէ ձեռքով ամէն արգելք և հետզհետէ աւելի հեռու տարածելով իր նպատակները. վասնզի, հակառակ պարագային, ան շատ շուտով ետ կը նետուի ղէպի իր ելից կէտը և կը իտեղուի հակայեղափոխութեան կողմէն:

Ասով բացատրելու է, որ յեղափոխութեան ատեն ղեկավարութիւնն ու իշխանութիւնը իր ձեռքն առնել կը յալոյրդ այն կուսակցութիւնը, որը քաջութիւն ունի արտասանելու յառաջ մղող նշանաբան և անկէ բոլոր հետեւութիւնները հանելու: Ասով բացատրելու է նաև ողորմելի դերը մենչեկիններու՝ Դանի, Մերեթեկի և այլոց, որոնք սկիզբը ահաբի սպրեցուցին ունէին քանդաձաններու վրա, իսկ վերջը, երկար տատանումներէ յետոյ, երբ խոյս տուին իշխանութիւն ու պատասխանատուութիւն ստանձնելէ, սովորական կերպով վար անուեցան քաղաքական բեմէն:

Իր լեկինները անմիջապէս պարզեցին նմանապէս այն նպատակը, որի համար տիրացած էին իշխանութեան, այն է՝ հաստատումը պրոլետարիտի ղիկատարութեան յանուն ղեկավարութեան իրագործման: Այսպէսով անոնք, պատմութեան մէջ առաջին անգամը լինելով, ընկերվարութեան վերջնական նպատակները

* Այստեղ անուանելու շինք մը կայ. Պետերբուրգի դէմ արշաւողը ոչ թէ կուգաներու զօրակար Կալեղինն էր, այլ ռուս բանակի բարձրագոյն հրամանատար գոր. Կորնիլով: Ձեռնարկը, ինչպէս յայտնի է, փծեցաւ ու Կորնիլով «Առձամեայ Կնաւալարութեան» (Կեռնակիի) կարգադրութեամբ բանտ դրեցաւ: Բոլշեկիեան յեղաշրջումէն յետոյ, Կորնիլով, յաւաստիելով բանտէ, անցաւ Խարաւ ու հոն կանգնեցաւ բոլշեկիներու դէմ պայքարելու համար կազմակերպւած «կամաւորական (ներմակ) բանակին» գլուխը, բայց շուտով սպանեցաւ եկատեթիկողար Բալախի մօտ տեղի ունեցած նակատամարտի մը պահուն: Ռ. Լ.

հրապարակ դրին իբրև անմիջական ծրագիր գործնական քաղաքականութեան:

II

ԲՈՒՇԵՒԻԿՆԵՐԸ ԵՒ ՀՈՂԱՅԻՆ ՆՆԴԻՐԸ

Իբրև է, մասնաւորապէս հողային խնդրին նկատմամբ բուշեիկները կարճ ու կարճ նշանարան մը ունէին. այն է՝ թոյլ տալ, որ գիւղացիութիւնը անմիջապէս գրաւէ ու բաժնէ ամբողջ հողն ու զետիւնը: Ու ասով կրկնակ նպատակ մը կիրառութեւնը. նախ՝ կը քաղաքայէր խոշոր կալաւատիութիւնը, ու յետոյ՝ գիւղացիութիւնը սերտօրէն կը կապուի կառավարութեան: Քաղաքական իմաստով, ըսել է՝ յեղափոխական կառավարութիւնը ամբապղծելու համար, այդ միջոցը գերազանց էր: Սակայն, դժբախտաբար, ան ունէր նաև իր ընդդիմակողմը. արդարև, հողին զրաւումը գիւղացիութեան կողմէն մեծ մասով ոչ մէկ առնչութիւն ունի ընկերվարական անտեսութեան հետ:

Տնտեսական յարաբերութեան ընկերվարական կերպարանափոխումը հողային խնդրի վերակերմամբ երկու դայման կենթադրէ: Նախ, ազգայնացումը նոյն այդ խոշոր կայանատիրութեան՝ իբրև ամենախոտջաղէմ համակերպողական հողային արտադրութեան միջոցներու և եղանակներու. այդ է միայն, որ կարող է հանդիսանալ ընկերվարական անտեսածելի ելից կէտ գիւղի մէջ, վասնզի միայն պետութիւնն է, որ է վիճակի է կազմակերպելու գիւղատնտեսական արտադրութիւնը խոշոր ընկերվարական եղանակներով:

Երկրորդ պայմանն այն է, որ ոչնչացի գիւղատնտեսութեան և ճարտարարարի անկատարը, բուրժուական հասարակարգի այդ յատկանշական երևոյթը. և այս անոր համար, որ կարելի չիին այդ երկուքին փոխադարձ յագեցումը, ի մի լուծումը և անոնց արտադրութեան կերպարանափոխումը միևնոյն սկզբունքներով:

Ազգայնացում խոշոր ու միջակ հողային կալածներու և միացում ճարտարարւեստի ու գիւղատնտեսութեան — ասոնք են անտեսութեան ընկերվարական բարեփոխման հիմնական կէտերը, առանց որոնց չէ կարող ընկերվարութիւն լինել:

Եթէ խորհրդային կառավարութիւնը է վիճակի չէղաւ գլուխ. հասկն այս հակապական բարեփոխութիւնը, յանցանքը իրենը չէ. նախ, ժամանակ չունեցաւ ու յետոյ՝ կ'անուած էր ներքին ու արտաքին կռիւներով, ամէն կողմէ թշնամիներով շրջապատւած: Սակայն, կայ բան մը, որ ամէն ընկերվարական կառավարութիւն պարտական է ընելու, այն է՝ միջոցներ ձեռք առնել այնպիսի ուղղութեամբ, որը համապատասխան լինէր հողային յարաբերութիւններու յետազայն ընկերվարական բարեփոխման հիմնական պայմաններուն, և խուսափել այն ամենէն, ինչ որ կարող է արգելք հանդիսանալ այդ ճամբուն վրա:

Բուշեիկներու տւած նշանարանը պիտի ազդէր ճիշտ հակառակ ուղղութեամբ. ան ոչ միայն ընկերվարական միջոց մը է, այլ և կը րոյնէ ընկերվարութեան ճամբան՝ կուտակելով հողային յարաբերութիւններու ընկերվարական կերպարանափոխման առջև անյաղթելի դժարութիւններ:

«Գինացէք և աւէք հողը» — Լենինի և բարեկամներուն կողմէ գիւղացիներուն ըուած այս խօսքին արդիւնքը ուրիշ բան մը չէր, բայց եթէ խոշոր հողատիրութեան յանկարծական քառասային փոխարինումը գիւղացիական հողատիրութեամբ: Ստեղծեցաւ ոչ թէ անբարյան, այլ նոր մասնաւոր սեփականութիւն, խոշոր սեփականութիւնը, փշուր-փշուր լինելով, դարձաւ միջակ ու մանր ստացածք, խոշոր ու համեմատաբար յառաջադէմ գործառնութիւնը վերածեցաւ սկզբիկ ու նախնական գործառնութեան, որը կաշխատի փութաւուններու ատենները եղած թէքիք միջոցներով: Այսքանը դեռ չի բաւեր. լենինեան նշանարանի քառասային և կամայական իրագործման հետևանքով սեփականութեան տարբերութիւնները գիւղի մէջ չնջուեցան, այլ աւելի ևս սրեցան: Հարուստ գիւղացիները և վաշխաուունները, որոնք գիւղական բուրժուազին կը կազմեն և ամէն մէկ ռուսական գիւղի մէջ տեղական իշխանութիւնը իրազանորէն իրենց ձեռքն առած են, — ասոնք էին, անտարակոյս, յեղափոխութեան պտուղէն ամենէն շատ վայելողները: Անհաւասարութիւնը գիւղացիութեան ներքը չհարթեցաւ, այլ աւելի սաստկացաւ, անշուշտ, ի վնաս պրոլետարական և ընկերվարական շահերու: Այսպէս գիւղի մէջ կատարուելէ ընկերվարական բարեփոխման մը հակառակ էին միայն խոշոր կալածատէրերու փոքրիկ դասը և թույլ աննշան գիւղական բուրժուազին, որոնց սեփականացրելու յեղափոխական զանգւածին կողմէ մանկական խաղ մը միայն պիտի լինէր: Այժմ, երբ գիւղացին ստացածքի տէր է դարձեր, գիւղատնտեսութեան համայնացման իբրև թշնամի կը ներկայանայ վիթխարի համեմատութեան հասած և զորաւոր զանգւածը սեփականատէր գիւղացիութեան, որը իր նոր ձեռք բերած ստացածքը ամէն մի ընկերվարական փորձի դէմ սկուաներով ու եղունքներով պիտի պաշտպանէ:

Այս պահուս գիւղատնտեսութեան ընկերվարականացման խնդիրը, ըսել է՝ առհասարակ արտադրութեան խնդիրը Ռուսիոյ մէջ, դարձեր է հակառակութեան ու պայքարի խնդիր քաղաքային պրոլետարիատի և գիւղացիական զանգւածին միջև:

Փրանսական սակաւահող գիւղացին դարձեր էր քաղաքի պաշտպանը մեծ յեղափոխութեան, որը անոր բաժին հասած էր փախտական աղնականներու հողային կալածներէն: Իբրև Նապոլէոնի գլխուր՝ այդ գիւղացին Ֆրանսայի բորջակ դէպի յաղթութիւն կը տանէր, կը կտրէր Եւրոպան մէկ ծայրէն միւսը և իր անցած երկիրներու մէջ, մէկը միւսի ետևէն, կը խորտակէր աւատականութիւնը: Թերևս Լենինն ալ իր հողային նշանարանէն նման արդիւնքի կը սպասէր: Մինչ ռուս գիւղացին, տիրապետով հողի, երազին մէջ լակ միտքէն չէ անցնէր պաշտպանել Ռուսիան և յեղափոխութիւնը, որին պարտական է իր այդ հողը:

Լենինի հողային քաղաքականութիւնը ստեղծեց գիւղի մէջ ընկերվարութեան համար նոր, զորաւոր շերտ մը թշնամիներու, որոնց ընդդիմութիւնը աղնական կալածատէրերու ընդդիմութեան շատ աւելի վտանգաւոր ու յամառ պիտի լինի:

III

ԱԶԳԵՐՈՒ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՒՈՒՆԵՔԸ

Ռուսիոյ զինուորական պարտութիւնը յանգեցաւ այլ պետութեան քայքայման ու անդամահատման: Ատոր մէջ որչա՛ր շարժուի յանցաւոր են բոլշեփիկները: Բայց անոնք ա՛լ աւելի բարդացուցին կացութեան ստարկյալական դժարութիւնները նշանաբանով մը, որ զրին իրենց քաղաքականութեան անկիրնին զայգաթը: Ասիկա՛մ այսպէս կուշող «ազգերու ինքնորոշման իրաւունքն» է կամ, ինչ որ այդ խօսքին տակ ծածկուած է՝ Ռուսիոյ պետական քայքայումը:

Իմաստակ յամաուութեամբ շարունակ կրկնող այդ բանաձևը, թէ ուսս պետութեան տարբեր ազգութիւնները իրաւունք ունին անկախօրէն որոշելու իրենց բախտը՝ «մինչև Ռուսիայէն պետականօրէն անջատելու աստիճան», մասնաւոր մարտագոչ մըն էր Լենինի և ընկերներուն համար ընդդէմ Միլիկովի և Կիրենսկիի աշխարհակալութեան. սպա, հոկտեմբերեան յեղաշրջումէն յետոյ, դարձաւ անոնց ներքին քաղաքականութեան առանցքը. իսկ Բրեստի մէջ բուլշեփիկներու ամբողջ պլանֆորմն էր ու այն միակ գէնքը, որ անոնք ի վիճակի էին դէմ դնելու գերման աշխարհակալութեան ուժին:

Ամենէն ապշեցուցիչը այն է, որ Լենին և ընկերները կառած էին նշանաբանի մը, որը խորագլուս կը հակասէր ինչպէս իրենց վարկածի քաղաքական «ցենարալիդմին», այնպէս և այն ընթացքին, որին կը հետևին որերիչ ուսմկալարական սկզբունքներու նկատմամբ: Մինչ բուլշեփիկները կատարելապէս կարճամարտէին սահմանադիր ժողովը, ընդհանուր ընտրական իրաւունքը, մամուլը, հասարոթիւնը ապատութիւնը, մէկ խօսքով՝ ժողովրդական զանգուածներու ուսմկալար պատմութեանց բոլոր հիմնական երաշխիքները, որոնք անկողմէն Լենինի կը կազմէին այդ իսկ «ինքնորոշման իրաւունքը» Ռուսիոյ համար, «ազգերու ինքնորոշման իրաւունքն» վրա նոյն այդ բուլշեփիկները կը գուրզուրային այնպէս, ինչպէս ուսմկալար քաղաքականութեան թանկագին գոհարի մը, ի սէր որի պէտք է լռէին իրական քննադատութեան բոլոր գործնական նկատումները: Մինչ անոնք բնաւ չպատկառեցան աշխարհի ամենաուսմկալար ընտրական եղանակով կազմուած և ժողովրդական հանրապետութեան մը լիակատար արտոտութեան մէջ ընտրուած սահմանադիր ժողովէն և իր արդիւնքը պարզապէս ոչինչ համարեցին, Բրեստի մէջ այդ նոյն մարդիկ ճակատ կուտային յանուն Ռուսիոյ օտար ազգութեանց իրաւունքի՝ «ժողովրդական քեչարկութեանը» որուել իրենց պետական պատկանելութիւնը: Ու ասիկա կը նկատէին ամենաիրական պաշտպանութիւնը ամէն պատմութեան և ուսմկալարութեան, անխարդախ յայտարարութիւնը ժողովրդական կամքի և բարձրագոյն աստեանի, որին վերապահուած է վերջին վճիռը ազգերու քաղաքական ճակատագիրը որոշելու նկատմամբ:

Այս ազադակող հակասութիւնը ատաւել ևս անըմբռնելի կը դառնայ, եթէ նկատի առնենք, որ քաղաքական կեանքի ուսմկալարական ձևերը ամենուրեք ընկերվարական քաղաքականութեան անհրաժեշտ

հիմերը կը կազմեն. մինչ հռչակաւոր «ինքնորոշման իրաւունքը» ուրիշ բան մը չէ, բայց և թէ՛ սնամէջ քաղքենի դարձած մը միայն:

Բրապէս, Բ՞նչ կը նշանակէ այդ իրաւունքը: Ընկերվարական քաղաքականութեան համար արդէն իսկ այրուրենական ճշմարտութիւն է, թէ՛ ինչպէս որ անհրաժեշտ է պայքարել ամէն մէկ ճնշման դէմ, այնպէս ալ պէտք է պայքարել ազգութիւններու ճնշման դէմ: Ու եթէ՛, այնուամենայնիւ, Լենինի, Տրոցկիի և իրենց բարեկամներու նման զգտտ քաղաքական գործիչներ, որոնք ամէն տեսակ երազական զաղափարներու համար միայն հեզնաքեղ ունին, այժմ նոյն կարգի ինդիք մը գրեթէ իրենց հետաքրքրութեան զխաւոր աւարկան դարձուցած են, ասիկա տեսակ մը պատեհապաշտական քաղաքականութիւն է որ կը ծագի: Լենին և ընկերները, ըստ երևութիւնի, այդ եղանակով կը յուսային Ռուսիոյ բոլոր օտար ազգութիւնները կապել յերափոխութեան և ընկերվարութեան գործին: Նոյն քաղաքականութիւնն է այս, որ գործ դրին բուլշեփիկները զիւրազրութեան նկատմամբ: Այս անգամ ալ բուլշեփիկները, դժբախտաբար, սխալեցան իրենց հաշններուն մէջ. Տիկառիցը, Ուկրայիներն, Լեհաստանը, Լիտվան, բալտեան երկիրները, Կովկասը օգտուեցան իրենց պատմութեան՝ իրբև ոուս յեղափոխութեան մահացու թշնամիներ՝ դաշինք կնքելու համար անոր դէմ գերման աշխարհակալութեան հետ:

Հարկաւ, իրականութեան մէջ յիշեալ «ազգերը» չէին, որ կը վարէին այդ յետադէմ քաղաքականութիւնը, այլ անոնց բուրժուական դասակարգերը, որոնք «ինքնորոշման իրաւունքը» դարձուցին գործիք իրենց հակաիգափոխական դասակարգային քաղաքականութեան: Ասկայն, այդտեղ իսկ է ինդերին հանգոյցը, այդ է, որ կը յատկանչ անոր երազական-քաղքենի բնոյթը: Բուլշեփիկները, ի հաշիւ իրենց և յեղափոխութեանը հասած խոշորագոյն վնասի, պէտք էր, որ լաւ դաս մը անոնէին, այն է թէ՛ կապիտալիզմի տիրապետութեան տակ չկայ ազգերու ինքնորոշում. թէ դասակարգային հասարակութեան մէջ ամէն դասակարգ կը ձգտի տարբեր կերպով «ինքնորոշելը», և թէ՛, վերջապէս, բուրժուական դասակարգերու համար ազգային պատմութեան նկատմամբ լիովին տեղի կուտան դասակարգային նկատումներուն:

Այն, որ յեղափոխական պայքարներու պահուն բուլշեփիկները, սահասարակ, մէջտեղ հանեցին ազգային ձգտումներու ինդիքը, սոսկալի շփոթութեան մասանը յնկերվարութեան շարքեր և խախտեց պրոլետարիատի դիրքը մասնաւորապէս ծայրերիկներու մէջ:

Ինչպէ՛ս եղաւ, որ այս բոլոր երկիրներու մէջ հակաիգափոխութիւնը յանկարծ յաղթանակեց: Ատոր պատճառը այն էր, որ ազգայնական շարժումը, գատեովով ծայրերիկներու պրոլետարիատը Ռուսիայէն, Թուրքուց այն և տաւ բուրժուազիի ձեռքը: Փոխանակ ձգտելու ոուս պետութեան ամբողջ տարածութեան վրա յեղափոխական ուժերու միացման՝ համաձայն իրենց իսկ հետապնդած միջոցառային-դասակարգային քաղաքականութեան ոգիին, փոխանակ բոլոր միջոցներով պաշտպանելու այդ պետութեան, իբրև յեղափոխութեան շրջանի, ամբողջականութիւնը, փոխանակ դէմ դնելու բոլոր ազգայնական-անջատական ձգտումներուն ոուս յեղափոխութեան՝ շրջանակին մէջ եղած

ազդուժեանց պրոլետարիատի անբաժանելութեան քաղաքականութիւնը, — բուլճիկները «ազդուժեանց ինքնորոշման» և անջատման իրաւունքի իրենց մեծազորը նշանաբանով ընձեռեցին ծայրերկիրներու բուրժուազերին հիանալի միջոց մը՝ իր հակայեղափոխական նպատակները իրագործելու համար: Այսպիսով, բուլճիկները հանդիսացան ներկայացուցիչները գահափառարանութեան մը, որը դեմակ ծառայող հակայեղափոխութեան արշաւանքին և, զորացնելով բուրժուազերին, շխտեց աշխատանքութեան կորույթ*):

IV

ՌԱՍԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԽԵՂՂՈՒՄԸ

Բուլճիկներու քաղաքականութեան նկատմամբ խիտ նշանակալից դեր խաղաց Սահմանադրի փողովի լուծումը: Այս քայլը որչէ՛ք էր իրենց յետողայ ընթացքին համար և, կարելի է ասել, զարմակեալ եղաւ իրենց գործելակերպին: Իրողութիւնն է, որ Լենին և ընկերները մինչև իրենց հոկտեմբերեան յայթանայլը ուժգնորէն կը պահանջէին սահմանադիր փողովին դուստրումը: այս խնդրին մէջ Կերենսկիի կառավարութեան երեան բերած քաջըլուի քաղաքականութիւնը բուլճիկներու ամբաստանութեան կէտերէն մէկն էր և ասիի կուտար անոնց բուն յարձակումներուն այդ նոյն կառավարութեան ոչ մ:

Չնայելով ասոր, հոկտեմբերեան յետաընդամէն յետոյ Լենինի առաջին գործը եղաւ՝ ցրել սահմանադիր փողովը: Որո՞նք էին բուլճիկեան քաղաքականութեան այս ապշեցուցիչ փոփոխութեան հիմերը: «Հոկտեմբերեան յեղափոխութեան մինչև Բրեստի հարաւորութեան զանազակեր» անուամով իր զբոյժիկն մէջ Տրոցկիի այս առիթով արտայայտած անսակետին էութիւնը հետեւեալն է. սահմանադիր փողովը ընտրած էր հոկտեմբերեան յեղաընդամէն շտտ առաջ, ուստի իր կազմին պատկերը կանխորոշած էր անցեալի տրամադրութիւնները և ոչ թէ նոր ստեղծած կացութիւնը:

Շտտ լաւ ու համողիչ բացատրութիւն մըն է ասկա: Սակայն, զարմանալ պէտք է միայն, որ Լենինի ու Տրոցկիի նման խելացի մարդիկ ասոկէ անմիջականորէն բխող երբակացութեան չդիմեցին. այսինքն՝ լուծելով այդ չինցած, մեռածին փողովը՝ իսկոյն նոր բարութիւններ նշանակեցին ուրիշ Սահմանադիր փողովի մը համար: Անոնք չէին ուզէր յեղափոխութեան ճակատագիրը վստահել փողովի մը, սրը կը ցուցանէր բեքիի Ռուսիան, վարանուններու ժամանակաշրջանը: Բարե՛կը մնար, որքան, նոր փողով մը հրակիրէլ, սրը կը համապատասխանէր նորոգած ու ակելի յառաջացած Ռուսիոյ արամադրութիւններուն...

Ատոր փոխարէն Տրոցկի մասնաւոր գէպէ մը, այն է՝ հին սահմանադիր փողովը պակասաւորութեանն, կեդրակցնէ, թէ առհասարակ ամէն սահմանադիր փողով

ակելուրդ է: Այդ դեռ ամենը չէ. ան կընդհանրացնէ իր այդ գաղափարը ու կը յայտարարէ, թէ ընդհանուր անորութիւններէ բխած ամէն փողովորական ներկայացուցչութիւն յեղափոխութեան ժամանակ անպէտք է:

«Իշխաութիւնը դրաւելու համար մղած բացայայտ ու անմիջական պայքարի շնորհիւ, — կը գրէ Տրոցկիի — աշխատարող դանդաղակները ամենկարճ ատենի մէջ մեծ չափով քաղաքական փորձառութիւն ձեռք կը բերեն և իրենց զրգացման մէջ արագորէն աստիճանէ աստիճան կը բարձրանան: Թամկալարական հաստատութեանց ծանրաբարձ մեքենան այնքան ակելի զիչ կը հասնի այդ զարգացման հոտէն, որքան ակելի ընդարձակ է կրկիրը, և որքան ակելի անկատար է իր տեսիլի կազմածը»:

Այստեղ խօսքը արդէն բոլոր չառակավարական հաստատութեանց» մասին է: Ու անհրաժեշտ է մատնանել, որ Տրոցկիի այս դնահատութեան մէջ երեան կուզայ ձևական ու արեւտակալ ըմբռնում մը, որին վճռապէս կը հակասեն բոլոր յեղափոխական ժամանակաշրջաններու օրինակները: Ըստ Տրոցկիի տեսութեան, իւրաքանչիւր ընտրած փողով մէկ անգամ ընդ միշտ կարտայայտէ միայն ընտրողներու այն վարկեանի քաղաքական հաստատութիւնը և տրամադրութիւնները, երբ անոնք դէպի ճշգտութի կերթային. ուրեմն, և ռամկավարական մարմինը կը ներկայացնէ այն պատկերը միայն, որ ունէր ժողովրդական գանգաւորը ընտրութեանց պահուել: Այսպէսով կը ժխտի ամէն կենդանի հողեկան հող, ամէն յարտու փոխադրեցութիւն անգամ մը ընտրածներու և ընտրողներու միջև:

Պատմութիւնը ճիշտ հակառակը կուտուցանէ. ան կը ցուցնէ, որ ժողովրդական տրամադրութեանն շարունակ կենդանի հոսանք մը կանցնի ներկայացուցչական մարմիններուն, կը թափանցէ անոնց ներսը և կը դիպավարէ անոնք: Ապա թէ ոչ ինչպէ՞ս կարող է լինել, որ նոյնիսկ ներկայ բուրժուական խորհրդարաններու ամենէն չորցած մուսիները երբեմն լեզու կը գործածեն, կամ ամենաօրինակաւ պատգամաւորներն անգամ, յանկարծ, իրենց կուրծքերուն մէջ յեղախական շեշտը կը գտնեն... Երբ օրոքարաններէ ու փողոցներէ արտասովոր աղաղակներ կը հասնին իրենց պահանջին:

Եւ ժողովրդեան տրամադրութեանց այս մշտական ներգործութիւնը ընտրովի մարմիններու վրա ճիշտ յեղափոխութեան ատենն է, որ անցոր պիտի գտնէր կուսակցական նշանակներու և ընտրական ցանկերու չոր ու ցամաք ձևին առջև... Ընդհակառակն, յեղափոխութիւնն է, որ իր շեղութեամբ կը ստեղծէ այն նուրբ, զգայուն քաղաքական մթնոլորտը, որի մէջ ժողովրդեան տրամադրութիւնը և կենքի երակին զարկը վարկենաբար կը ներգործեն ներկայացուցչական մարմիններու վրա: Ատոր զասական օրինակը կուտայ Անգլիոյ հռչակաւոր «Երկայն Խորհրդարանը»: ընտրած ու զումարած 1842-ին, ան եօթ տարի շարունակ մնաց պաշտօնի վրա ու իր ներք անդադարձուց բոլոր փոփոխումները երկիր արամադրութեանց, դասակարգերու պատակտման և յեղափոխութեան ամբողջ ընթացքին — սկսած խոնարհ վէճերէն դահի հետ, մինչև թափալուրի կլիտառները և հանրապետութեան հռչակումը: Նոյնը կը տեսնենք նաև Ֆրանսական յեղափոխութեան ատեն: Ու, վերջապէս, զարմանալի

*) Ի հարկէ, Ռ. Լուխանբարդի բնորոշումը «ազգային ինքնորոշման» սկզբունքի՝ այդի ընկերակարգայեան բնորոշումը չէ և արտայայտութիւնն է նեղ մարքսիստական, բոյլիկեան ըմբռնումի. ազգային ինքնորոշումը հակայեղափոխական երկուսի չէ: ԽՄԲ.

օրինակ մը ևս, որը այնքան մօտ է Տրոցկիին, Ռուսիոյ չորրորդ պետական դռման, ընտրուած հակայնդադիմութեան ամենաբերտ սիրապետութեան պահուն, 1917-ին, յանկարծ, դրաց ժողովուրդները և ինքը դարձաւ անոր ծագման կէտը:

Այս ամենը կապուցեցանք, որ «նամկավարական հաստատութիւններու ծանրաշարժ մեքենան» զօրուոր սրբազրիչ մը ունի, այն է՝ զազնածներու կենդանի շարժումը, անոնց անընդհատ ազդեցութիւնը: Ու որքան աւելի ուժգին է զանգամներու քաղաքական կենսաբեր կրակին զարկը, նոյնքան աւելի անմիջական ու իրական է ներգործութիւնը: Հարկւաւ, ուսմկավարական հաստատութիւններն ալ, ինչպէս ամէն մարդկային հաստատութիւն, ունին իրենց սահմաններն ու պակասութիւնները: Սակայն, Տրոցկիի և Լենինի գտած միջոցը, այն է՝ ուսմկավարութեան իրաւաւ ջնջումը, ալ աւելի դէժ է, քան այն շարժը, որ ան պիտի զարմանէ. պաշարեւ, ան կը խափանէ կենդանի սպրիտը, որի միջոցով միայն կարելի է սրբազրիչ ընկերային հաստատութիւններու բնածին՝ պակասութիւնները: Այդ արկիւրն է՝ ներգործական ու անարդի: քաղաքական կենսաբեր ժողովրդեան լայն զանգամներու:

Առնենք ուրիշ ակնբախ օրինակ մը — խորհրդային կառավարութեան մշակած ընտրական օրէնքը: Լիովին պարզ է, թէ մ'ոն է հեղինակներու կողմէ անոր սրած գործնական նշանակութիւնը: Ռամկավարական հաստատութիւններու մասին Տրոցկիի և Լենինի քննադատականն կը հետեի, որ անոնք հիմնովին կը մերժեն ընդհանուր ընտրութիւններէ յատկ և կամ ժողովրդական ներկայացուցչութիւնը և կարեն յենուլ միայն նորահարկներու (սովետ): Այդ պարագային անմարտնելի կը մնայ, թէ առհասարակ ինչ բանի համար է կազմած բոլշեիկեան օրէնքը ընդհանուր ընտրական իրաւունքի մասին: Մեզի յայտնի չէ նաև, թէ այդ օրէնքը երբեքէ զործադրուած լինէր: Կը մնայ, ուրեմն, ևնթարել, թէ ան տեսական արտադրութիւն մը է միայն. սակայն, չափազանց արտառոց արտադրութիւն մը գեղատարութեան այն տեսութեան, որ իւրացուցած են բոլշեիկները: Ամէն ընտրական իրաւունք, ինչպէս արհեստական ամէն քաղաքական իրաւունք, կը բխի ոչ թէ վարչական գաղափարներէ, այլ ընկերային և տնտեսական պայմաններէ: Գալով բոլշեիկներու ընտրական օրէնքին, ան նկատի առած է փոխանցման շրջանը՝ դրամատիրական հասարակաբարէն ղեկի ընկերավարականը, ըսել է՝ պրոլետարական դիկտատորութեան շրջանը: Ու համաձայն իմաստին այն մեկնաբանութեան, որ կուտան պրոլետարիատի դիկտատորութեան Լենին և Տրոցկիի, զէի իրաւունք կը ստանան անոնք միայն, որոնք կապրին իրենց սեփական աշխատանքով:

Պարզ է, որ նման օրէնք մը կարող է իմաստ ունենալ միայն այնպիսի հասարակութեան մը մէջ, որի ի վիճակի է տնտեսապէս և մշակութապէս գոհացուցիչ կենսաբ. մը սպահովելու բոլոր անոնց համար, որոնք աշխատել կուզեն: Հնարաւոր է այդ այժմեան Ռուսիոյ մէջ: Հոն տնտեսական կենսաբ. ամբողջովին քայքայուած է. գեղատնտեսութեան, ճարտարաբանութիւն և առեւտուրի մէջ սեփականութեան արժէքները յեղաշրջուած են և, ասոր պակասութեամբ, արտադրական յարաբերութիւնները տանուվրա եղած: Այս կայութեան

մէջ քաղաքացի մարդիկ դուրս կը նետին իրենց ուղիէն և կը գրեւին ամէն ատարակայական հնարաւորութենէ՝ իրենց աշխատաւորական ուժին համար տնտեսական մարդի մէջ որեւէ գործադրութիւն գտնելու: Այս կը վերաբերի ոչ միայն դրամաւ. և կարւածատիրական դասակարգին, այլ և միջին դաս լայն խաւին և անգամ բանտրութեան: Արդարև, իրողութիւն է, որ ճարտարաբանութիւն սեղմելի յառաջացուցած է քաղաքային բանտրներու գանգաւածային հոսանք ղեկի դիւղը: Նման պայմաններու տակ քաղաքական ընտրական իրաւունք մը, որը ընդհանուր աշխատանքի հարկադրանք իբրև տնտեսական նախադրութիւն կընդունի, բոլորովին անբարենի միջոց մըն է: Բոլշեիկեան օրէնքին ձգտումն է՝ քաղաքականապէս իրաւարկել շահագործողները: Բայց մինչ աշխատաւորութիւնը գանգաւածօրէն արմատախի կը լինի, խորհրդային իշխանութիւնը յաճախ ստիպուած է սպառնալ մարտարաբանութեան նախկին սեփականատէրերուն — այսպէս ըսելու համար — վայրէջ տալ: Արդ պէտք եղաւ զիջումներ ընել բուրժուական սպառողական բնութեանց, պաշտօնի կոշիկ բուրժուական մասնագէտներ: Այստեղ յիշելու է նաև շարունակ սոււարացող կարմիր բանակը, որը կապրի պետական միջոցներով և ոչ թէ սեփական աշխատանքով: Այսպէսով, ընտրական օրէնքը իրականութեան մէջ իրաւարկուել կընէ լայն ու հեղուհեղ անոյ մանր-բուրժուական և պրոլետարական խաւերը, որոնց համար տնտեսական կազմը չի նախատեսներ ոչ մէկ միջոց՝ աշխատանքի հարկադրանքը գործադրելու համար:

Ան անպատեհ յօրինում մըն է, ըստ որի ընտրական իրաւունքը իբրև ընկերային իրականութենէն աննշաւուած, երեւակայութեան արգասիք մը կը ներկայանայ: Այդ իսկ պատճառով բոլշեիկներու ընտրական օրէնքը պրոլետարական դիկտատորութեան լուրջ գործիք մը է, այլ ժամանակավորէպ երեւոյթ մը, կանխարձում մը իրականական կայութեան, որը սեղիկ կը լինէր արդէն պատրաստ ընկերավարական տնտեսահիմի վրա և ոչ թէ պրոլետարական դիկտատորութեան փոխանցման շրջանին մէջ:

Երբ հոկտեմբերեան յեղաշրջումէն անմիջապէս յետոյ ամբողջ միջին դասը, բուրժուական և մանր-բուրժուական մտաւորականութիւնը «բոլշեիկներէ կենթարկէին կառավարութիւնը, ըսական է՝ որ այս վերջինը, պաշտպանելու համար ամբողջի շահերը, կը դիմէր ճնշման միջոցներու, այն է՝ կը գրեւր քաղաքական իրաւունքներէ, սպրտստի միջոցներէ և այլն: Բայց ընտրական օրէնք մը, որը կը հռչակէ հասարակութեան լայն խաւերու իրաւագրկումը և անոնք այդ հասարակութեան շրջանակէն դուրս կը դնէ. որը կը գործադրէ իրաւագրկում ոչ թէ իբրև յատուկ միջոց՝ յատուկ նպատակի հասնելու համար, այլ իբրև ընդհանուր կանոն — այսպիսի օրէնք մը դիկտատորութենէ բխող անհրաժեշտութիւն չէ, այլ անկենսունակ յանկարծարանութիւն մը միայն:

Սակայն, նահանջաբար ժողովով և ընտրական իրաւունքով խնդիրը չապառեցաւ. անոնց հետնեցաւ առողջ հանրային կենսաբ. մը և աշխատաւոր գանգաւածներու քաղաքական ներգործականութեան ուսմկավարական երաշխաւորութեանց ջնջումը, ու մամուլի, միութիւններու և ժողովներու ապստամբութիւնը գաղտնի-

վերահսկելններու զիկատատրական իշխանութիւն, զբա-
կնական պատիճներ, սարքաբի տիրապետութիւն (որը
կանքարոյացնէ) — ստանք միջոցներ են, որոնք միայն
խոչընդոտ կը լինեն վերածնութեան:

Միակ ճամբան դէպի այդ վերածնութիւնը Հանրա-
յին կաննքի զպրոցն է, ամենէն անասմանափակ ու
լայն ուսմակարութիւնը, Հանրային կարծիքը: Եթէ այս
ամենը ջնջել, ի՞նչ կը մնայ իրականութեան մէջ: Լենին
և Տրոցկի ընդհանուր ժողովրդական ընտրութիւններէն
բխած ներկայացուցչական մարմիններու տեղը դրած
են Պորտուգալները՝ իբրև իսկական ներկայացուցչու-
թիւն աշխատար զանգաճներու: Սակայն, քաղաքա-
կան կեանքը ամբողջ երկրի մէջ խեղդելէ յետոյ՝
Պորտուգալներու մէջ ևս աւելի ու աւելի պիտի մարի:
Առանց ընդհանուր ընտրութիւններու, մամուլի և
Հաւաքութիւններու ազատութեան, առանց կարծիքներու
ազատ պայքարի կեանքը ավել Հանրային Հաստատու-
թեան մէջ տակաւ նենդնով՝ կը պահպանէ միայն իր
երևոյթը, ու սոսկ թիւթակաւսի է, որ կը մնայ իբրև
դործն տարր: Այս օրէնքէն ոչ ոք կը պղծնի: Հանրա-
յին կեանքը Հետգհետէ կրնդարմանալ, անպայք եռանդ
ունեցող և անսահման իրջալիզով Համակամ ևսնի
մը տասնեակ կուսակցական առաջնորդներ կը ղեկավա-
րեն ու կը կառավարեն, կամ աւելի ճիշտ՝ ստանցմէ
միայն տասնեակ մը կարկառուն զուլիներ ուզողութիւն
կուտան գործին, այպա որքան բանորութեան յորտանին
ժողովներու կը կանչի՝ ծափահարելու առաջնորդներու
ճառերը և միաձայնութեամբ քէտրիկելու իրենց առջև
դրած բանաձեւերը: մէկ խօսքով՝ քլիբի տնարարու-
թիւն մը, զիկատատրութիւն մը իբօք, բայց ոչ թէ
պրոլետարիատի զիկատատրութիւն, այլ ափ մը քաղա-
քաղէտներու, այսինքն՝ զիկատատրութիւն բուրժուա-
կան իմաստով:

Այս վիճակը պիտի յառաջացնէ Հանրային կեանքի
վայրենացում, որի Հետեւանջով ծայր կուտան մահա-
փորձեր, պատանդներու գնդակահարում, կը ջնջին
սահմանները բարեկարգ Հասարակութեան և ոճրա-
գործներու արգելարաններուն միջև, անիշխանութիւն
ամենուրեք անխուսափելի կը դառնան և այլն: Ու այս
ամենի դէմ անդոր են ահաբեկումի զբաղմանական մի-
ջոցները: Միակ իրական Հակաթոյնն է — իրջալիզմը
և ընկերային ներգործականութիւնը զանգաճներու,
սասահմանափակ քաղաքական ազատութիւնը:

Ասիկա Հօրաքոյն առարկայական՝ օրէնք մըն է,
որմէ չէ կարող ազատիլ ոչ մէկ կուսակցութիւն:

V

«ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՐՈՒԹԻՒՆ»

Լենին-Տրոցկի տեսութեան Հիմնական սխալը այն
է, որ անոնք, Կառուցիկի պէս, զիկատատրութիւնը կը
Հակադրեն ուսմակարութեան: «Դիկատատրութիւն կամ
ուսմակարութիւն — այսպէս կը ձևակերպեն Հարցը
և՛ բուլշեւիկները, և՛ Կառուցիկը: Ու մինչ այս վերջինս
կրնարէ ուսմակարութիւնը, այն ալ՝ բուրժուական
ուսմակարութիւնը, բուլշեւիկները իրենց վճիռը կու-
տան ի նպատակ զիկատատրութեան: Բայց քանի որ
զիկատատրութիւնը անոնք կընդունին իբրև Հակա-
դրութիւն ուսմակարութեան, այսպա ուրեմն իրենց

զիկատատրութիւնն ալ ափ մը անհասնելու զիկատ-
տրութիւն է, ասել է՝ զիկատատրութիւն բուրժուա-
կան իմաստով:

Այսպէսով, Կառուցիկի և բուլշեւիկները երկու Հակա-
ուսկ բեւեռներ են, երկուքն ալ Հաստատարպէս Հեռու
ընկերվարական քաղաքականութեան: Այդ քաղաքա-
կանութիւնը կը պահանջէ, որ պրոլետարիատը, տե-
րապանով իշխանութեան, ամբողջապէս ու անվերապա-
հօրէն բռնէ ընկերվարական միջոցներու ուղին,
այսինքն՝ սկսի զիկատատրութեան գործադրման
սակայն, ոչ թէ կուսակցութեան մը կամ քլիբի մը
զիկատատրութեան, այլ ամբողջ դասակարգի՝ իսկ
ստոր Համար անբաժնէլտ է ժողովրդական զանգաճ-
ներու ամենէն ներգործական և անարգել մասնակցու-
թիւնը, և այդ՝ անսահմանափակ ուսմակարութեան
պայմաններու մէջ:

Ճիշտ է, որ քաղաքականներ, ձևական ուսմակարու-
թիւնը մենք երբեք կուրք չենք դարձուցած մեզիք, կը
գրէ Տրոցկի: Հարկաւ. բայց մենք երբեք կուրք չենք
դարձուցած նաև ընկերվարութիւնը կամ մարքսակա-
նութիւնը: Սակայն, միթէ ստիչ կը Հետեւի՞, որ
ընկերվարութիւնն ու մարքսակառութիւնը ևս, երբ
յարմար չեն դար մեզի, իբրև անպէտք իրեր՝ մէկզի
պիտի նետենք: Երբ կրանք, թէ մենք ալ երբեք կուրք
չենք դարձուցած ձևական ուսմակարութիւնը, այդ
Հասկնալու է ստպէս. մենք միշտ տարբերած ենք
ընկերային միջուկը բուրժուական ուսմակարութեան
քաղաքական ձևէն. միշտ երևան Հանած ենք ընկերա-
յին անհաստատութեան ու անազատութեան դառն
միջուկը, որը կը գտնի ձևական Հաստատութեան և
ազատութեան անուշ կեղեիկի տակ: Բայց արած ենք
այդ ոչ թէ մերժելու Համար ձևական Հաստատութիւնն
ու ազատութիւնը, այլ զրդելու Համար բանուր դա-
սակարը, որ չզուհանայ կեղեկով, այլ գրաւէ քաղա-
քական իշխանութիւնը՝ այդ կեղեւը նոր ընկերային
պարունակութեամբ լեցնելու նպատակով: Պրոլետա-
րիատի պատմական պաշտօնն է, երբ իշխանութեան
կը տիրանայ, բուրժուական ուսմակարութեան փո-
խարէն ստեղծել ընկերվարական ուսմակարութիւն և
ո՛չ թէ ջնջել ամեն կառուցչութիւն: Բայց ընկեր-
վարական ուսմակարութիւնը աւետեաց երկրին մէջ
չէ, որ կը սկսի, այսինքն՝ այն ատեն, երբ արդէն
ստեղծուած է ընկերվարական տնտեսութեան Հիմք. ան
կաղանդի պատրաստ նէր մը չէ՞՞ տրած ժողովրդին
անոր Համար, որ ընկերվարութեան կառուցման ատեն
ինքզինքը ինչօք պահած էր և նեցուկ եղած ափ մը
զիկատատրներու: Ընկերային ուսմակարութիւնը կը
սկսի դասակարգային տիրապետութեան ջնջման և
ընկերվարութեան կառուցման Հետ միաժամանակ, կը
սկսի այն վայրկեանէն, երբ ընկերվարական կուսակ-
ցութիւնը կը տիրանայ իշխանութեան: Ու ան ուրիշ
բան մը չէ՞՞ բայց եթէ պրոլետարիատի զիկատատրու-
թիւն:

Այո՞, զիկատատրութիւն: Սակայն, այս զիկատ-
տրութիւնը կը կայանայ ուսմակարութեան կերպրկ-
ման եղանակին մէջ և ոչ թէ անոր ոչնչացման: Իսկ
այդ եղանակն է՝ եռանդուն, վճռական կերպով
միջամուխ լինել բուրժուական Հասարակութեան ձեռք
բերած իրաւունքներու և տնտեսական յարաբերու-
թիւններուն, բան մը չէ, ստանց որի անկարելի է իրա-

գործել ընկերվարական յեղաշրջումը: Բայց դիկտատորութիւնը դասակարգի է, որ պէտք է գործադրել, և ոչ թէ անշուն վարել փոքրամասնութիւնը՝ այդ դասակարգի անունէն. ասել է՝ դիկտատորութիւնը միշտ պէտք է բխէ դանդաղանքով յարանուն քաղաքական վարժութիւնէն, անոնց գործնական մասակցութեանն ու պէտք է գտնուի անոնց անմիջական արդեցութեան և ամբողջ հանրութեան հսկողութեան տակ:

Այն ամենը, ինչ որ տեղի կունենայ Ռուսիոյ մէջ, հասկանալի է և կը ներկայացնէ անհրաժեշտ շղթայ մը պատճառներու և հետեւանքներու: Բոլշևիկները իրենց վճռակալութեամբ, յեղափոխական ընթացքով և հաստատութեամբ ընկերվարութեան հանդէպ, կատարեցին այն, ինչ որ կարելի էր կատարել այնպիսի անբեւեալայեղիորէն ծանր պայմաններու մէջ: Իրենց ընթացքը կը սկսի վտանգաւոր դառնալ այն պահէն, երբ անոնք «հարկը սուբստիտուցիան կը փոխեն», այսինքն՝ երբ այդ ճակատագրական պայմաններու ճշմարտան տակ իրենց ընդունած գործեակերպը այնուհետեւ տեսական գրութիւններու կը վերածեն ու կուգն յանձնարարել միջազգային պրոլետարիատին՝ իրբեւտիպար օրինակներ ընկերվարական տաքտիքի: Ատով անոնք վերիվայր կաննէ իրենց սեփական գաղափարները, որ պապ գէշ ծառայութիւն կը մատուցանեն միջազգային ընկերվարութեան՝ ներմուծելով անոր շտեմարանը, իրբեւտոր իմացողութիւններ, Ռուսիոյ մէջ հարկ ու ստիպումէ թելադրած թիրութիւնները:

Մենք ամենքս ալ ենթակայ ենք պատմութեան օրէնքին. իսկ ըստ այդ օրէնքի՝ ընկերվարական հասարակարգը կարելի է իրագործել միայն միջազգայնօրէն: Բոլշևիկները ցոյց տուին, թէ իրենք կարող են այն ամենը, ինչ որ իսկական յեղափոխական կուսակցութիւն մը ի վիճակի է գլուխ հանելու պատմական հնարաւորութիւններու սահմաններուն մէջ: Պէտք չէ, սակայն, որ անոնք հրաշք գործել ուզեն. դի օրինակելի և անսխալ պրոլետարական յեղափոխութիւն մը մեկուսացած, համաշխարհային պատերազմէն սպաւած, աշխարհաշահներէ խեղդուած, միջազգային պրոլետարիատէն լքած երկրի մը մէջ իրապէս հրաշք պիտի լինէր:

* * *

Մենք ֆանացիք ըստ կարելիին հարապատրէն ներկայացնել Ռ. Լուքսեմբուրգի դատողութեանց ընթացքը. ստոր համար յաճախ անհրաժեշտ կուլա բա-

ւացիօրէն թարգմանել իր գրքոյկէն ամբողջ հասածներ, մանաւանդ այնպիսիները, որ այս կամ այն խնդիրը տեսական ձևակերպում կը գտնէ: Այսպէսով մեզ համար կը պարզուին ականաւոր մարքսական ընկերվարականի մը տեսակէտները ժամանակակից ընկերվարական միտքը յուզող խնդիրներու մասին:

Լուքսեմբուրգը կը պատկանի մարքսականութեան ուղղափառ-արմատական թիւին, —անշուշտ, եթէ ընդունինք, որ ուղղափառ մարքսականութիւն է այն, ինչ մնացեր է սկզբնական մարքսականութիւնէն շուրջ կէս դարի քննադատութիւններէ և իրենց խի մարքսականներու «մեկնութիւններէ» յետոյ, — ուրեմ իր խօսքը բոլշևիկներու մասին ալ աւելի մեծ կշիռ կը ստանայ:

Արդարեւ, Լուքսեմբուրգի գաղափարաբանական մարքսութիւնը բոլշևիկներու համար ամէն կասկածէ վեր է. ուստի անոնք այս անգամ այլևս չեն կարող ապաստանիլ իրենց սովորական միջոցին, այն է՝ յայտարարել թէ քննադատը հակայեղափոխական, հակա-ընկերվարական է: Աւելին դեռ. Լուքսեմբուրգ հակաբոլշևիկ ալ չէ. իբրև հետեղական մարքսական՝ ան կընդունի բոլշևիկեան տեսութիւնը և համոզուած է, որ ապագան ամենուրեք կը պատկանի անոր: Սակայն, ան հակառակ է բոլշևիկներու գործնական ընթացքին, ներկայի քաղաքականութեան, որոյ իր կարծիքով ոչ միայն մարքսական, այլ և առհասարակ ընկերվարական չէ:

Բոլշևիկներու փորձը՝ լուծել ընկերվարութեան իրականացման խնդիրը միայն Ռուսիոյ մէջ՝ ճակատագրական սխալ մըն էր: Ու բնական է, որ՝ հաստատելով իրենց ամբողջ գործը սխալ հիմի վրա՝ անոնք պիտի գլորէին մինչև այն անհիթեթութիւնները, որոնց արժանի գնահատութիւնը կուտայ Լուքսեմբուրգը: Կարևոր է յիշել, որ իր գրքոյկը գրած է գրեթէ տաս տարի առաջ, ասել է՝ այն ատեն, երբ բոլշևիկները միայն քանի մը ամսան գործունէութիւն ունէին: Ու դարմանալ պէտք է, որ Լուքսեմբուրգ այնուամենայնիւ կարեցած էր ոչ միայն թափանցել բոլշևիկեան քաղաքականութեան էութիւնը, այլ և կուսակալ անոր գործնական արդիւնքը, յաճախ՝ այլանդակ մանրամասնութիւններով: Այդ իմաստով իր գրքոյկը այսօրւան խորհրդային իրականութեան պատկերը կը ներկայացնէ:

Ռ. ԼԵՌՆԵԱՆ

Ր Ա Յ Ց Ի

IV

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Այսպիսի հոգե-բարոյական ու մտաւոր մթնոլորտում խօսք չէր կարող լինել յեկապոխտութեան, ապստամտութեան մասին: ԲաՖՖիի համոզումն էր այս: Երկիրը դեռ պատրաստ չէր մի «լաւ ապագայի» համար. հայ ժողովուրդը դեռ հասունացած չէր «այն մեծ օրւան համար», երբ հնչելու էր պատուութեան դանդաղ: Մի ժողովուրդ կարող է թօթափել օտարի լուծը ա՛յն ժամանակ միայն, երբ բաւականին հասկացել է, թէ ի՛նչ է պատուութիւնը, թէ անարդար են տիրող կարգերը: Իսկ հայ ժողովուրդը, իր մեծամասնութեամբ, դուրի էր այդ հասկացողութիւնից:

Նախ՝ հայութիւնը պէտք է յեղաշրջի և վերածննդ բարոյացնէ, հոգեպէս և մտաւորապէս: Այս անհրաժեշտ նախապայման է քաղաքական յեղաշրջման:

Այս ճիշտ հասարակական ըմբռնումը երկակի ունենալով՝ մեր վերպատան-մտածողը դառնում է, որ առաջին հերթին պէտք է հայ ժողովուրդը նախապատրաստել քաղաքական յեղաշրջման համար:

Բայց ի՞նչպէս, ի՞նչ միջոցներով:

Այնքան էլ դիւրին չէր այդ դժուրը, հեշտ չէր «յեղափոխել» հին դրութիւնը, փոխել դարերով ամբողջի հոգու մէջ արմատացած բնոււթյութիւնը, փչրել ստրկութեան շղթան: Այս դժուրը պահանջում էր երկարատեւ և սովոր, յամառ և հետեւողական աշխատանք:

Թէև և հայ ժողովուրդը այդքան այլանդակ կերպարանք ունէր ԲաՖՖիի համար, որը հայութեան վերազրում էր ամենաստոր յատկութիւններ, համարում բարոյայէտ այլասերում, անդամ «մեծ պոռնիկ» որակում, բայց նա հաւատամ էր, որ հայ ժողովուրդը մեռած չէ վերջնականապէս և ունի լուսաւոր ապագայ, թէև շատ հեռաւոր: Ապացոյց — ահա նրա «Կայծերը», «Նենթը», «Նենթի գեղեցիկ երազը»:

ԲաՖՖին շատ լաւ դիտէր, որ այդ բոլոր պատերը և արատները արդիւնք էին տիրող պայմանների. փոխել այդ պայմանները, կը փոխեն նաև մարդիկ: «Մարդկային կենսքի մէջ ոչ մի երևույթ, առանց նոյն հասարակութեան յատուկ պատճառների երևան չէ դալիս: Վեր առնենք մի մարդասպան, մի ստրուկ և քննենք նրանց կենսքի պատմութիւնը, կը տեսնենք, որ նրանց կենսքն այնպիսի պայմաններէ մէջ է դրւած եղել, որ աւագակը պէտք է աւագակ լինէր, մարդասպանը՝ մարդասպան և ստրուկը՝ ստրուկ: Փոխել նրանց կենսքի պայմանները և կը տեսնեն, որ նրանք օրինակում՝ մարդիկ կը դառնան», ասում է ԲաՖՖին Ասլանի բերնով:

Ըստ ԲաՖՖիի, հայ ժողովուրդի մէջ դեռ բոլորովին հանգած չէին «կենսական ուժերը», դեռ մնացել էին նրանց «անպոր կայծերը»:

ԲաՖՖիի տեսակէտով՝ այդ կենսական ուժերը աւելի զօրաւոր են լեռնոյ հայերի մէջ, քան՝ դաշտային: «Ստրկութիւնը, ատու է նա, սկսել է և շարունակել տափակ երկրների վրա և աւելի տաք կլիմայի մէջ: Տափակ երկիրը մարդուն տալիս է տափակ բնաւորութիւն, զարգացնում է նրա մէջ թեքելու ընդունակութիւնը: Բայց լեռնային երկրի բնակիչը նոյնպէս ուղղաձիգ, նոյնպէս բարձրադասակ է, որպէս իր շրջապատող սեպածև ժայռերը: Հարթ-հաւասար անապատը չէ տալիս փախուստի միջոց և պատասպարան իր նեղեւաններին: Մինչդեռ սարերը և անտառները միշտ ունեն իրենց ծոցի մէջ սպահով ապաստարան ապաւորող համար» («Կայծեր»):

Ի՛նչ պէտք էր անել.—Պէ՛տք էր միայն շունչ տալ այդ կենսական ուժերին, բորբոքել այդ «կայծերը», և բորբոքել այնքան, մինչև որ բոցալուսուէին: Այսինքն՝ լծել հայ ժողովուրդի բարոյական, մտաւոր և հոգեկան վերակենդանութեան: Պէ՛տք էր յեղափոխել հինը՝ հին մտայնութիւնը և հոգեվիճակը: Պէ՛տք էր հրահրել նրա դիտակցութիւնը, ցոյց տալ, թէ բնական և արդար չեն տիրող կարգերը և իր վիճակը, և այդ ձևով ուղղել հայ մարդու կշած ուղնախուճ՝ կանգնեցնելով նրան թշնամու դէմ ճակատ առ ճակատ: «Դժգոհութիւնը, տրտնոյնը և իր վիճակից մի աւելի բարեխախտ վիճակի ցանկանալը — ահա այն փրկարար շարժառիթները, որ կարող են մեզ աղատել ստրկութիւնից»: Համբերութեան մէջ մեռնում են ամենաբարձր ձգտումները: Հին հայը, հայերը և պայերը ասում էին. «պէտք է համբերել և համբերութիւնը կենսք է»: Նոր և յեղափոխական հայը ասում է. «համբերութիւնը մահ է»: Պէտք էր թողնել պայերի ճանապարհը: Նա սխալ էր և ամուռն էր դէպի անպայման և խայտառակ կորուստ: Պէտք էր դնալ նոր, ճշմարիտ ճանապարհով, որը ապահովելու էր մեր փրկութիւնը:

Այս ձևով միայն կարելի էր ստեղծել նոր հայութիւն:

Ի՞նչ ազդակներ և միջոցներ կան հայութեան մտաւոր և հոգե-բարոյական յեղաշրջումը պատրաստելու համար:

Ամենազօրաւոր ազդակը դպրոցն է: Անկասկած, ո՛չ այն դպրոցը, որ գոյութիւն ունէր, ո՛չ Տէր-Թողեկի ստրկացած դպրոցը, այլ նո՛ր, ժողովուրդական և ազատ դպրոցը, որը միայն կարող էր բուժել մեր ժողովրդի դարաւոր վէրքերը, պատրաստել նոր սերունդ՝ նոր մտայնութեամբ, նոր զգացումով, նոր բարոյականով: ԲաՖՖիին ցածով նկատում է, որ ամբողջ Հայաստանը պտտելով՝ ոչ մի տեղ չի տեսել ճշմարիտ ժողովրդական դպրոց: Ամէն տեղ տեսնում էր միմիայն վաճաքի ու եկեղեցիներ: Նա ասում է. եթէ վաճաքի և եկեղեցիների տեղ դպրոցներ լինէին, վաղուց փրկւած կը լինէինք:

Հայ ժողովրդի մտաւոր և հոգե-բարոյական վերածնութիւնը պէտք է կատարել նաև դիր ու գրակա-նութեան միջոցով, բայց ոչ հին, այլ՝ նոր, յեղափոխական-ազատատենչ գրականութեան: Հին գրականու-

Թեան ու մամուլը շահախնդր չենազատութիւնը առկա է նա Բիդար-Դայալու բերնով՝ զբաւում եմ ես այս բաժակը առանց ներերու ձե՛զ, ով գիր ու դպրութիւն, որովհետեւ դուք չուիք մեզ այն, ինչ որ պահանջում է կեանքը և իրական աշխարհը: Դուք լցրիք մեր գլուխը ունայն, վերացական ցնորքներով: Դուք չձանձօթացրիք մեզ մարդկային պահանջներ հետ և չուիք այն, որ պէտք է ապրելու և հանդիստ ու բարտաւոր ապրելու համար: Դուք մեզինք դիտարկեցիք: Ձեզ ենք պարտական, ով գիր ու դպրութիւն, մեր այժմեան դժբարտութիւններով. դուք չուիք մեզ առողջ մտք և բարեկամ և զրկելով մեզ ճիշտ և իրական դիտութիւնից՝ զրկեցիք և կեանքից... Թո՛ղ անհիշ մեր մամուլը, որ իր մրով աւելի մրոտեց մեր սիրտը, միտքը և հոգին...»:

Բաճճիին, անասարակոյս, դէժմ չէր առհասարակ գրականութեան ու մամուլին: Սա դիտարկում է միայն Հին գրականութեան, հի մամուլի, որ սարկացնող շրջան աւելի ամբարցրել էր, որ ժողովրդին խաւարի մէջ էր պահում և՛ որի ամենօրեայ ջարդին էր համբերութիւն և հնազանդութիւն: Նա ուզում էր նոր գրականութիւն ու մամուլ՝ նոր մտքով և ոգով: — «Եւթող կեցցեն այն զրիշները, որ նոր հոգի կը ներշնչեն մեզ, որ կը նորոգեն մեր սպառած ուժերը և կը ծանօթացնեն կեանքի իրական պէտքերի հետ և կը պատրաստեն մեզ մարդ ինչևէ, մարդկային բոլոր կատարելութիւններով» (Ջայլուզգրի, էջ 76-77):

Բաճճիին նշանակալի դեր էր վերագրում նաև Հայ կնոջը: Եւ ահա ինչու: Նախ՝ նա դեռ ապականած չէր շատ լաւ, թէև անձնակ, նիւթ էր, որից կարելի էր հրաշայի բան ստեղծել: Հայ տղամարդը շատ աւելի փչացած էր՝ թիւրքերի անմիջական ազդեցութեան տակ. նա կորցրել էր իր հայկական ինքնութիւնները, իր ազգային առանձնատարութիւնները, կարճ՝ իր ազգութիւնը: Թիւրքերն էր սովորական էր հայ տղամարդու բերնում, իսկ Բաճճիին չէր տեսել մեր բնաշխարհում մի հայ կին, որ թիւրքերին խօսէր: Այնպէս որ, բնութիւնի մէջ Հայ լեզուն պահողը և իր գաւազանների բերան դնողը եղած է կինը: Այսպէս, եզրակացնում է Բաճճիին, ինչպէս և պահպանել Հայ բնութիւնի բարոյական հիմքը: Ահա մի «կայծ», որ կարող էր հեշտութեամբ բռնկել և բացա՛մաւել շուրջը:

Ըստ Բաճճիի, կնոջ մասնակցութիւնը մի գործի մէջ՝ այդ գործի յաղողութեան ամենապարզ և հաւաստի նշանն է: Կնոջ այդ նշանակալի դերը Բաճճիին ցայտուն կերպով դուրս է բերել իր վէպերի մէջ. նա տւել է կանանց լաւագոյն տիպարներ, Մարսինը, Սոնաներ և այլն:

Այսպէս, պէ՛տք էր բորբոքել Հայ ժողովրդի հոգու մէջ եղած այդ «կայծերը», հրահրել նրա մտածումները և զգացումները, վառել հոգին և այս ձևով ու ճանապարհով դնել նրա մէջ կամք, հոգին լցնել սրբազան ցասումով դէպի տիրող բարբարոս բռնակալութիւնը և կանգնեցնել մարդկային բարձրութեան վրա:

Այս սրբազան գործին էին լծած Կարոնքը, Վարդանները, Մարտանները, Ասլանները, Դուռուկչեանները, այս նոր և ապագայի տիպար-մարդիկ, որ ստեղծել էր մեծ բանաստեղծի՝ դարեր կտրող և վերապաց ստեղծագործ երեւակալութիւնը:

Այս հոգե-բարոյական և մտաւոր յեղաշրջման նպատող ազգակներէց մէկը, և ամենագրաւորը, ազգային իմբնապաշտպանութիւնը էր:

Ինքնապաշտպանութեան օրէնքը պահանջում է վարուել այնպէ՛ս, ինչպէ՛ս կեանքն է պահանջում. նա թելադրում է պատասխանել թշնամուն նոյն գէջով, ինչ գէնջով նա ճնշում և մահացնում է մեզ: Դայլի հետ ապրելիս՝ պէտք է գայլ լիել, պէտք է գայլի նման «ատամներ և ճանկեր ունենալ», այլապէս անհնարին է ապրել և անխուսափելիորէն պէտք է ոչնչանալ: Երբ թշնամիդ գինւած է, դու՛ ևս պահպանման պէտք է զինուես, որով թէ՛ գոյութիւնդ կը պահպանես և թէ՛ յարգանք էր ներշնչես թշնամու մէջ դէպի ջր մարդկային արժանապատուութիւնը: Բաճճիին առաջարկում էր՝ «ընտրել գէնքը, որպէս զլիսաւոր միջոց և զբաւական՝ թէ՛ թշնամու և թէ՛ բարեկամի հետ խաղալու թիւն պահպանելու»: Նա չէր ուզում, որ հայերը զինուես ջիւղերին կտորկու համար, «այլ, որպէսզի ջիւղերը և թիւրքերը մեզ չոչնչացնեն», որպէսզի պաշտպանը իր մարդկային իրաւունքն ու ազատութիւնը: Այլ իսուգով՝ միայն ինքնապաշտպանութեան պատակով: Այս շարքի մի արդար էր և՛ կեանքի պահանջը: Անգամ ճանատուներ, բոլոր ունեն այդ ինքնապաշտպանութեան զգացումը, ինչ՞ և հալը գրկած լինի», դատութեամբ և ցատումով բացականչում է յեղափոխական փրկաստանը:

Ահա այս միջոցներով — խաղաղ մշակութային-կրթականից մինչև զինական ինքնապաշտպանութիւն — պէտք էր հայութիւնը նախապատրաստել այն մեծ օրւան, քաղաքական յեղաշրջման համար: Որքան կենդանութեան «կայծերը» աւելի բացա՛մաւելու, որքան աւելի լայն շարքեր բռնեն, որքան շարժումը աւելի լայն խաւեր ընդգրկէ և ժողովրդականանալ, այնքան աւելի ապահովւած է այդ շարժման յաղթանակը: Այս էր Բաճճիի տեսակէտը: — «Երբ որևիցէ ժողովրդական շարժման դադարը մի քանի անհատների երևակայութեան ցնորք է միայն և տակալին չէ՛ ընդհանրացած, չէ տարբացել ամբողջ գոնէ մի մասի մէջ — մի հարածով կարելի է ոչնչացնել բոլորը, երբ առաջնորդող անձինք ոչնչացած կը լինեն: Բայց ամբողջ ուրիշ բան է, ամբողջ միտքը սպանել անկարելի է», կարողում ենք «Ոնենթ»-ում: Մի այլ տեղ՝ «Դուրիթ բեզ»-ի մէջ ահա ինչ է ասում ժողովրդական շարժման մասին. — «Երբ նա կտրեց իր կապանքը, այլ ևս նրա թափին ընդդիմանալ անկարելի է: Նա դառնում է մի հակադաս կան ճեղք և փոթորիկ նման որոտում է, այն կոծում է, առաջ վազում՝ խորտակելով, ոչնչացնելով իբր սուլեից ամէն խոչընդոտներ: Ո՛ր մահկանացուն կարող է ժողովրդի կատաղի հոսանքի առաջը կտրել: Դժուար է միայն նրան շարժել, երբ մի անգամ շարժեցաւ, այլ ևս այնուհետև կանգ չի առնի...»:

Կարծես, Ասլանները, Մարտանները, Վարդանները, Ֆարսանները, Դուռուկչեանների նպատակը այդ էր — շարժման մէջ դնել Մեծ Համբին, ժողովրդին: Եւ շարժեցին, թէև իրենք էլ ընկամ այդ մեծ գործի ճանապարհին: Նրանք այնպէս էլ հասկանելի էին իրենց դերը և գործը. մենք կընկենք, բայց «մեր անկողնը ճանապարհ կը բաց անէ մեր հետևողների առջև»:

„58“ եւ „107“ Յ Օ Ո Ւ Ա Ս Թ Ո Ւ Ե Ր Ը

Ոչ հսկողներեան «սոցիալիստական» յեղափոխութեան, ոչ նրա ծնունդ ու պահպանման Զեկայի, ոչ էլ աշխարհիս ամենէն մեծ ու «չոր» կարծիք բանակի տանամեայ յօրեխանները ի վիճակի չեղան վերջ տայու խորհրդային երկրի ներքին տաղանային, կամ, գոնէ, ծածկելու դրոյի աշխարհից: Որքան բարձր է հնչում հսկողներեան յայթանակի ձայնը, այնքան աւելի են կատարած են թաւաբար կատարած նաճումները: որքան ահեղ են յօրեխանների տպանայթեները «ամենքին, ամենքին, ամենքին», նշանակում է՛ այնքան աւելի անդօր է կարմիր գիլիտատորութիւնը:

Գեւ Երկ, Կոմկուսի 15րդ համագումարի ու դասպան յօրեխանական ամբողջներէից աշխարհը գարմացրին տնտեսական յայթանակի շքեցնող թելը: Գեւ թարմ է բոլորիս յիշողութեան մէջ մի-երկու ամիս առաջ Ստալինի արած յայտարարութիւնը, թէ աշխարհիս բոլոր երկրները, բացի խորհրդայինից, ապրում են ներքին տնտեսական տաղանայ: Թէ դրամատորական երկրներում թագոյ կայունացումը առեւտրային է ու խախուտ ու միայն Սորհրդային Միութիւնն է, որ Հաստատ է ամբողջ քայլերով գնում է դեպի վերջնական ընկերվարական յայթանակ:

Ի Հարկէ, հիմա, երբ արդէն Կոմկուսը «ինչ որ» Հարկադրանքի տակ ձեռնարկում է նախանկատան միջոցներէ, իրեն յիմար դրութեան մէջ չզննելու համար իսկ, չի աշխատի հերքել խորհրդային երկրներում ծարիր առանձն ներքին տաղանայ: Կուսակցութիւնը Հագիւ Հագ կարողացաւ «վերջ տալ» իր ծոցում առաջացած ճգնաժամին ու ջախջախել ընդդիմադիր փոքրամասնութիւնը, և ահա սխում է մի նոր, աւելի մտանդաւոր, տնտեսական տաղանայ՝ կուսակցութեան դէմ Հանելով Ժողովրդի ընդդիմադիր մեծամասնութիւնը: Անկասկած, կուսակցութեան մէջ տեղի ունեցած ահաւոր վէճը Հետեանք էր երկրի ներքին և արտաքին ծանր կացութեան: Կասկածից դուրս է նաև, որ նման կացութիւնն իր հերթին արդիւնք է Կոմկուսի քաղաքական ու տնտեսական վարքագծին:

Եւ միանգամայն աւելորդ են բոլշևիկ վարիչների այն պատճառաբանութիւնները, թէ Հացամթիւրման դործի վիժումը Հետեանք է գիւղի ունեւոր տարրերի չկամութեան ու շարահանութեան, իսկ արդիւնաբերութեան մէջ առաջացած դժարութիւնները՝ օտար ու սեփական մասնագէտների հակաշեղափոխական արարքների: Շատ Հասկանալի է, որ այդ ամբաստանութիւններն ու մեղադրեաններին առաջադրած խորհրդային օրինաբարքի 58րդ և 107րդ յօդուածները չեն լուսաբանում ինչդրի էութիւնը, ինչպէս և դրանց կիրառումը չի կարող փոխել երկրի տնտեսական ընթացքը: Հարցը այդ երկու յօդուածներում չէ: Պատճառները աւելի խորն են:

Կուսակցութեան 1Արդ Համագումարում, տնտեսական ղեկավարութեան մասին խօսելիս Ստալինն ասում էր Հետեւեալը. «դրամատորական երկրներում իշխում է մասնաւոր դրամադուրը, այնտեղ առանձին թրքստների, սինդիկատների, դրամատէրերի այս կամ այն

խմբերի, սխանները շտկում են շուկայի տարրերով: Ոչ մի փոքր է շատ է խոշոր սխալ ու փոքր է շատ է խոշոր գերարտադրութիւն կամ արտադրութեան ու պահանջի ամբողջ գումարի լուրջ անհամաչափութիւն արտադրութեան կողմից դրամատորական երկրներում չի անցնում առանց այն բանի, որ վերլուծները, սխաններն ու անհամաչափութիւնները շտկուեն այս կամ այն տաղանայի կարգով: Մեզ մօտ այլ կերպ է բանը: Առեւտրի, արտադրութեան ասպարիդում պատահած իւրաքանչիւր լուրջ յայտպում, իւրաքանչիւր լուրջ սխալ մեր տնտեսութեան մէջ վերջնում է ոչ թէ այս կամ այն ճիւղին վերարտոյ մասնակի տագնապով, այլ բոլորակալ տնտեսութեանն է հարածում: Իւրաքանչիւր տաղանայ՝ ինի այդ առեւտրական, դրամական, արդիւնաբերական՝ մեզ մօտ կարող է վերածուել ամբողջ պետութեանը հարածով ընդհանուր տաղանայ: Այս իսկ պատճառով մենք այստեղ տնտեսութիւնը պէտք է ղեկավարենք Համաշափ եղանակով, այնպէս, որ մեր տնտեսական ղեկավարութիւնը ինի խորթախանց, գրապապ կերպով կանխատես, անսխալական»: Միանգամայն հմարտ լինել օգտակար, երբ տնտեսական ամբողջ կառուցւածքի հիմքը սխալ է դրած:

Առնենք Հէնց պլանային ղեկավարութիւնը, որը բուլշևիկների համար տնտեսութեան ազգայնացման հետ միասին՝ ընկերվարական իրաւակարգ Հաստատելու ամենէն դժուար միջոցներից մէկն է:

Ինիւնը, «Տնտեսական միասնական ծրագրի մասին» գրած յօդուածում, Հետեւեալ ձևակերպումն է տալիս այդ խնդրին. «ձեռնարկել աւելի ծրագրած տնտեսական շինարարութեան, ենթարկել զիտական մշակման և հետեւողակածորէն կերտել պետական ծրագրի և ամբողջ տնտեսութեան մէջ»:*)

Համայն տնտեսութեան արտադրութեան և բաշխման ուղղական կոմունիզմի ժամանակայ կենտրոնացման փորձը ուրու ժողովրդի համար ունեցաւ ուղերգական վերադարձութիւն: Կանանք արդէն ապացուցում է, որ, նոր ընտրական քաղաքականութիւն յայտարարելուց յետոյ էլ, կոմունիստների՝ ծրագրային տնտեսութեան միջոցով երկրի պահանջների ու արտադրութեան, արդիւնաբերութեան ու գիւղատնտեսութեան և, վերջապէս, ժողովրդի տնտեսութեան կիրաւոր ճիւղերի միջև համապատասխան համաչափութիւն ու պահանջների բաւարարում Հաստատելու բոլոր ճիւղերը անցնում են միանգամայն ապարդէին: Թւենք այս անյալոյութեան գլխաւոր պատճառներից մի քանիք:

Մորհրդային իշխանութիւնը, Պետպլանի միջոցով, աշխատում է ամէն տարւայ համար կարգաւորել ու որոշել երկրի տնտեսութեան հետ կապ ունեցող բոլոր դրութիւններն ու աւեաները՝ ազգային եկամտաւ, գիւղատնտեսութեան ու արդիւնաբերութեան արտա-

*) Լենին, Երկրի ժող. հաւա. 18, մաս 1:

գրութիւնը, ապրանքային շրջանառութիւնը, արտաքին ու ներքին առևտուրը, պետական նախաձեռնը, Հարկերը, աշխատավարձը, ժողովրդի սպառման խնդիրը, դրամի հարցը և այլն: Շատ լաւ: Բայց ի՞նչպէս, ի՞նչ միջոցներով իրականացնել: Մի՞թէ ամէն ինչ հնարաւոր է իրագործել գեղերեսներով: Ո՞վ կարող է ժխտել, որ ո՛չ միայն յետամնաց Ռուսաստանում, այլ և առաջաւոր երկրներում զեռ տնտեսական կեանքը իր բնականոն հոտի մէջ չի մտած: Բացի այդ, վստահօրէն կարելի է ասել, որ և ոչ մէկ տեղ տնտեսական տարերջը զեռ վերջնականապէս չի յաղթահարւած: Ուր մնաց խորագրային երկրում, որտեղ գրութիւնն միակ տեղը այդ ահռելի տարրերքն է, որը չեն կարողանում սանձահարել տնտեսական ծրագրային օրէնքներով: Չեն կարողանում, որովհետեւ պետականը երկրի տնտեսութեան զարգացումը պայմանաւորում է այնպիսի գրութիւններով, որոնք յաջողացնել ամենից քիչ իրենից է կարւում: Լաւ բեքը, մեծաքանակ հասցածներում ու արտահանում, արտագրութեան միջոցների ներմուծում, ճարտարարեստի և գիւղամթերքների մերձեցում և այլն. իսկ, եթէ, յանկարծ, բնութեան աղէտ պատահեց, կամ անսպասելի կերպով անգլխական ու գերմանական կոմունիստի նման քաղաքացիական բարդութիւններ առաջացան և կամ գիւղացիութիւնը, չգտնելով շուկայում բաւարար չափով ածան ապրանք, հրաժարեց հաց վաճառել և այլն: Բացի պահեստի ու հիմնական միջոցներից, ժողովրդական տնտեսութիւնը պետական ծրագրային ձևի միջոցով համար անհրաժեշտ է, որ այդ ամբողջ տնտեսութիւնը լինի ազգայնացած: Այն ինչ, պետութեան ձեռքն են գտնուում՝ միայն քաղաքային տնտեսութեան զլխաւոր ճիւղերը, հանքերը, հաղորդակցութեան միջոցները և արտաքին առևտրի մենաշնորհը: Իսկ այն, որ քանակից միլիոն գիւղացիական տնտեսութիւններ գոյութիւն ունեն սեփականատիրական սկզբուղիների հիմունքներով, երբեք չի կարելի աջակցող անել: «Իրօչակ»-ի նախորդ թւում Վերելչակը շատ գեղեցիկ ու ճիշտ բնորոշել էր գիւղատնտեսութեան նշանակութիւնը: «Վիւղատնտեսութիւնը Ռուսաստանում զլխաւոր հիմքն է պետութեան և ամբողջ տնտեսական քաղաքականութեան: Նա հանդիսանում է սնուցիչ աղբիւր քաղաքների, արդիւնաբերական շրջանների համար, նախանիւթի յնարան՝ խոշոր արդիւնաբերութեան և զլխաւոր գրամական աղբիւր ուսական արտահանութեան ասպարէզում»:

Եթէ երկրի տնտեսութեան մէջ նման խոշոր դեր ունեցող մէկ ճիւղ գեոեւս մասնատրական է, ուրեմն, և պետական իրաւասութեան սահմաններից դուրս, արդե՞օք սկզբից և եթ դատապարտւած չեն վերջինիս մշակած բոլոր ծրագրիները: Եւ արդեօք, առանց տնտեսութեան բնական զարգացման ընթացքի ու որոշ նախարհալների, պէ՞տք է սկսել ընդերվարութեան կառուցումը ծրագրային տնտեսութեամբ, այն էլ միայն մի երկրում, այն էլ յետամնաց երկրում:

Այս հարցի պատասխանը, տալիս է ընդերվարութեան յայտնի տեսարան Կառուցիկն. «Ավել ընդերվարութեան կառուցումը ծրագրային տնտեսութիւնից, այդ նոյն է, թէ՛ տան կառուցումը սեպի կտորից»: Վերը յիշատակւած յօդւածում, Լենինը խիստ յանդիմանելով կոմունիստ տնտեսագէտներ Կրիցմանին,

Միլիտանին ու Լարինին, յանձնարարում է, փոխանակ վերացական տեսութիւններով ու վարչական ձեւերով լուծելու տնտեսական միասնական ծրագիրը, ակել լաւ է մասնագէտների օգնութեամբ ուսումնասիրել այդ ծրագրիները գործարարութեան պայմաններն ու տեւարները: Լենինը առանձնապէս անհրաժեշտ է համարում ուշադիր լինել զէպի թւերը և շատ զգոյշ՝ եղրակացութիւններ հանելիս:

Այս բոլորից յետոյ, ի՞նչ կացութեան մէջ է Խորհրդ Միութեան տնտեսութիւնը, ի՞նչ թւեր են ցոյց տրուում և ինչպի՞սի ձեւակերպումներ ու առաջարկումներ է անում Ստալինի ու Բուխարինի հանձնարեղ գլխավորական միտքը:

Բոլշևիկական կենտր. կոմիտէի պաշտօնական «Բոլշևիկ» երկշաբաթաթերթի 1926թ. 18րդ համարում, ընդդիմադիր պարագլուխներէից Մայլինը հետեւել մերկացումներ է կնթարկում Բուխարինի մէկ գեղացւոյ մը՝ նոյրւած երկրի տնտեսական խնդիրներին: Բուխարին յայտարարում է, թէ 1925—26թ. արդիւնաբերութեան արտադրած ապրանքի քանակը, 1922—23թ. համեմատութեամբ, ակել՝ էլ է 270 սոկոտով: Այն ինչ, թւարանական ճիշտ հաշւով, յաւելում եղել է ոչ թէ 270% այլ 170%: Յետոյ, Բուխարինը հաշուում է 1924—25թ. մասնաւոր առևտրականների թիւը հասնում է 324 հազարի, իսկ արած օգուտը՝ 400 միլիոն բուրլի: Ի նկատի ունենալով, որ առևտրականները ընտանիք ունեն և իւրաքանչիւրը տարեկան տան սէտքերի համար ծախսում է հազար բուրլի, նրանց մեծքնի մտւած է միայն 76 միլիոն բուրլի: Բայց Լեթ անձնական ծախսը մի քիչ ակեցաւ, մասնաւոր առևտրականները գրամական որևէ կուտակում չեն կարողանայ անել...

Այս բոլորը Մայլինը անկում է ձեռնածութիւնները: Նոյնպէս ձեռնածութիւն է համարում, երբ Բուխարինը արդիւնաբերութեան արտադրութիւնը հասցնելով նախապատրագմեան քանակի 95 տոկոսին՝ «մուսնում» է ակեցանել, որ այդ ժամանակմիջոցին ժողովուրդը աճել է 20%: Այնպէս որ, եթէ արդիւնաբերութեան շափը նախապատրագմանից պակաս է 5%, ապա անհատի կողմից ապրանքի սպումում կազմում է նախապատրագմանի երեք քառորդից էլ պակաս: Բուխարինը «մուսնում» է նաև, չոր արդիւնաբերական ապրանքների քանակի ակեցանել և արդիւնաբերութեան զարգացումը բխանաւայն տարեր բաներ են: Արդիւնաբերութեան արտադրութեան բարձրացումը տեղի է ունեցել ի հաշիւ ցարական բուրժուազիայի թողած ժառանգութեան:

Հոկտեմբերեան «Եղգափոխութեան» տասնամեայ յօրէյանին անմիջապէս յաջորդող Կոմկուսի 15րդ համագումարում Ստալինը «ընդերվարական» շինարարութեան արած նւաճումների հետեւել պտկերը ներկայացրեց ժողովին:

Նախապատրագմեան տնտեսական գրութեան հետ համեմատած, 1926—27թ. երկրի ամբողջ տնտեսութեան արտադրութիւնը հասնում է՝ գիւղատնտեսութեանը 108,3%-ի և արդիւնաբերութեանը 100,9%: Առևտրամիջնորդային շրջանառութիւն եղել է 28,775 միլիոն բուրլու. վարկային ձեւի աճումը հասել է 8,175 միլ. բուրլու: Երկաթուղային ապրանքափոխադրութիւնը կազմում է նախապատրագմանի 111,6%, իսկ երկաթուղային նոր գծերը, 1917թ. համեմատութեամբ,

աւելացել են 8,9% : Պետական բուզջէն (տեղականներէ հետ միասին) 1927-28թ. Համար նախատեսուում է 7 միլիարդ, այսինքն նախապատերազմականին : Արտաքին առևտուրը Հասել է 1913 թի 35,6%-ին (ընդհանուր շրջանառութիւն՝ 1,483 միլ. բուրլի) : 1926-27թ. արտածումը ներմուծուածից 57 միլ. բուր. աւելի է եղել : Իսկ ազդային ամբողջ եկամուտը հաւասար է 22,560 միլ. բուրլու : Եթէ արդիւնաբերութեան ընդհանուր արտադրոյթի մասը կարգում է ամբողջ ազդային տնտեսութեան արտադրոյթի 38%, զիջաւտնտեսութեանը՝ կազմում է 62% :

Արտադրութեան միջոցներէ արտադրութիւնը կարծում է ամբողջ արդիւնաբերութեան 37,6% : Արդիւնաբերութեան ազդանքային արտադրոյթի՝ 59,5% է, իսկ զիջաւտնտեսականինը՝ 40,5% : Պետական տնտեսութեան հաւաքական հատուած մէջ մտցած Հիմնական միջոցները (պետական և համարդրծակցական արդիւնաբերութիւն, շոգեշարժ գուման, ելեկտրականացում և այլն) հասնում են մինչև 2,683 միլ. բուր., իսկ ժողովրդական տնտեսութեան հատուածի մէջ մտցած միջոցները՝ 1,717 միլ. բուր. : Ոչորք արդիւնաբերութեան մէջ մասնաւոր դրամադրուր մասնակցում է միայն 2,4% (165 նախապատեր. բուր.) : Իսկ ապրանքաշրջանառութեան մէջ մասնաւոր դրամատէրերին բաժին է ընկնում միայն 18,1%, որից՝ մեծաքանակուում՝ 5,1%, մասնակցաւորում՝ 32,6% :

Երևելով այս թւերից, Ստալինը հետեւեալ եզրակացուածիւններն է հանում : — Որ խորհրդային երկրի տնտեսութիւնը աճում է շատ արագօրէն, որ երկիրը ճարտարարեւեստացում է. որ երկիրը արագ ու հաստատակամ դնում է դէպի ընկերվարութիւն՝ դուրս վանելով ժողովրդական տնտեսութիւնից դրամատիրական տարրերը, որ խորհրդային արդիւնաբերութիւնը ընդհանրապէս և ընկերվարական արդիւնաբերութիւնը մի մասնաւորի, զարգացման թափով անցնում են դրամատիրական երկրներէ արդիւնաբերութեանը : Ըստ Ստալինի, դրանով ապացուցում է, որ խորհրդային արտադրութեան ձևը զերագանցում է դրամատիրական ձևին :

Մի կողմ թողնելով դրամատիրական ձևը՝ ընկնեք, թէ խորհրդային այդ «զերագանց» ձևը ի՞նչ է թագնում իր մէջ :

Որհրդային տնտեսութեան զարգացման ընթացքը ընդհանրապէս և զեկուցած թւերը մասնաւորապէս ցոյց են տալիս, որ այդ զարգացումը դնում է երկրի ճարտարարեւեստացման ուղիով : Որ ձգտում կայ արդիւնաբերութեան արժէքը ազգային ամբողջ տնտեսութեան մէջ դարձնել գերակառոյ, միաժամանակ իջեցնելով գիւղատնտեսութեան արժէքը. որ, չնայած դրան, դեռ ևս քաղաքի և արդիւնաբերութեան աճումը շատ յետ է մնացած զիւղի և գիւղատնտեսութեան զարգացման աստիճանից : Եւ վերջապէս, որ գիւղը համարում է աղբիւր՝ քաղաքի արդիւնաբերութեան զարգացման համար : Եթէ, համաձայն տնտեսական հոդածեայ ծրագրի, 1931 թ. արդիւնաբերութեան արտադրոյթը նախապատերազմեան չափն անցնելու է 70%, այս գիւղատնտեսութեան Համար նախատեսուում է միայն 28% յաւելում : Ինչպէս և մինչև հիմա, այդ ժամանակաշրջանում էլ, արդիւնաբերութեան աճումը լինելու է ի հաշիւ «ազգային տնտեսութեան

միւս ճիւղերից և, մասնաւորապէս զիւղացիական տնտեսութիւնից քամած ընդոցներէ», ինչպէս ձևակերպեց համազումարում ինքը Բիկովը :

Հարց է առաջանում. ի՞նչն է հարկադրում բուլիւններին՝ զիւղի և քաղաքի զարգացման միջև նման անհամաչափութիւն առաջացնելով : Հարեւոյն իր կարգով լուծել երկրի ճարտարարեւեստացման խնդիրը : Պատասխանը բազմաթիւ են : Նախ, ճարտարարեւեստի զարգացումով երկրում ուժեղանալու է նաև բանուոր դասակարգի արդեցութիւնը և ստեղծելու են ընկերվարական հասարակակարգ հաստատուումը համար սկանջւած նիւթային-տեխնիքական անհրաժեշտ տեսալները : Յետոյ, ճարտարարեւեստացումով ժողովրդային տնտեսութեան բոլոր ճիւղերը կը ստանան արտադրութեան ընկերվարական ձև : Երբորդ, ճարտարարեւեստացումն անհրաժեշտ է, որպէսզի զգրամատիրական շրջապատում կարելի լինի խորհրդային տնտեսութիւնը դարձնել անկախ՝ երկրի ներսում արտադրելով արտադրութեան բոլոր միջոցները : Եւ, վերջապէս, ճարտարարեւեստացումը համարում է զիւղի և քաղաքի մերձեցման ամենախոշոր տնտեսական ազգակը :

Այս վերջին կէտը պէտք է մէջտեղից հանել, որովհետև, քանի զեւ քաղաքը ապրում է զիւղի հաշիւն, արանց մերձեցման մասին խօսք լինել չի կարող : Տնտեսական անկախութիւնն էլ շատ թէական է դառնում, քանի որ, եթէ նոյնիպէ տնտեսական հնգամեայ ծրագիրն իրականացել, դարձեալ ստիպւած են արտադրութեան միջոցների 20% ներմուծել դրսից (համաձայն Կոյրիշևի տեսալներին) :

Մեկնելով Ստալինի թւական տեսալներից՝ պէտք է ընդունել, որ ճարտարարեւեստացումը յաջող ընթացքի մէջ է և հնարաւոր է իրականացնել առաջադրած նպատակը : Արդե՞օք, սակայն, գործնականում էլ հնարաւոր է այդ :

Նախ, չմտնանք հիմնական մէկ դրութիւն : Մինչև 1926-27թ. տնտես. տարին, արդիւնաբերական արտադրութիւնը հիմնւած էր նախայիզափոխական շրջանից մնացած արտադրական միջոցների սպասում վրա : Որտեղային իշխանութիւնը միայն վերանորոգման էր ենթարկել ու արտադրութեանը ծանրաբեռնել հին գործարանները : Վերջին տարուց է լուկ, որ ձեռնարկել են նոր գործարանների կառուցման և մեքենաների սարքաւորման : Այս շինարարական գործում էլ միանգամայն անհրաժեկ գումանց պետապանը : Ըստ Բիկովի վկայութեան, եթէ մի նոր կառուցուածք ծրագրուում է զլուս բերել 7միլ. բուրլով, իրականում նստում է 20միլ. բուրլի, իսկ հողային մի խորանարդ սաժէնի աշխատանքը 4 և կէս բ. փոխարէն արժէնում է 14բ. :

Բացի այդ, Ռուսաստանի նախապատերազմեան արդիւնաբերութեան մէջ շատ խոշոր դեր էր խաղում օտարերկրեայ դրամադրուիւր : Այն ինչ, ներկայիս, երբ արտադրութեան միջոցների արտադրումը դեռ չէ հասել նախապատերազմեան չափին, դրսից արտադրութեան միջոցներ ներմուծում են նախապատերազմեան ժամանակաւից երեք անգամ պակաս : Մեքենաներից դատ, արտասահմանից ստիպւած են ներմուծել նաև պահանջուած հում նիւթի (կաշի, բամբակ, բուրդ և այլն) 40% : Դրան գուզընթաց պէտք է յիշել, որ հիմա խորհրդային արտաքին առևտուրը կազմում է նախա-

պատերազմեանի միայն 35,6%: Յետոյ, Կոմկուսի 15րդ խորհրդածոգովի որոշմամբ և արտաքին առևտրի մենաշնորհի օգնութեամբ, արտահանումը ներմուծումից 57 մլր. բուր. աւելի է եղել: Իսկ քանի որ խորհրդային երկրներից արտահանում են զլիսաւորապէս գիւղատնտեսական մթերքներ, իսկ ներմուծւում են, մեծ մասամբ, արտադրութեան միջոցներ, երկրի ներսում մթերքները թանաքանում են: Եւ որովհետեւ առաջին հերթին աշխատան են գարի տալ խոշոր արդիւնաբերութեան՝ երկրորդական արժէք տալով մանր արդիւնաբերութեան, որը և արտադրում է ժողովրդին անհրաժեշտ սպասանքները, երկրում զգացւում է ճապարհային սովը»։ անուամբ, որ դրսից էլ չեն ուզում այդ սպասանքները ներմուծել, որպէսզի կարողանան իրենցը սպասել և խուսափել ներմուծման գերակշռութենից, որը կը խախտի շեղումների կայունութիւնը: Հարկ չկայ յիշելու, որ խորհրդ. սպասանքի ինքնարժէքը շատ բարձր է, և ժողովուրդը՝ դնում է 2-3 անգամ ավելի թանգ, քան արտասահմանում արժէ, և 1½ անգամ աւելի նախադատերազմեան գնեքից: Ապրանքների գների անմատչելիութիւնը և սակաւութիւնը հարկադրում է գիւղացուն հազը շուկայ հանել. իսկ հացի չնչին գինն էլ ստիպում է նրան սեղծել ցանքերի քանակը և ուժեղացնել ոչ-հասցաւորակային արտադրութիւնը: Գիւղացունտեսութեան մէջ այնպիսի դրութիւն է ստեղծւել, որ երբ բարձրանում է հացի գինը, տեխնիքական բոյսերի պակաս է զգացւում և ընդհակառակը: Իսկ խորհրդային տնտեսութեան համար երկուսն էլ ծայր աստիճան անհրաժեշտ են:

Թէ Բիկովի և թէ միւսների կարծիքով, նման հակասական դրութիւնը շարունակւելու է, քանի դեռ ճարտարաբանացումը վերջնականապէս չի իրականացած: Միայն թէ, աւելցնում են նրանք, պէտք է աշխատել, «բարչիտի գիւղի և քաղաքի պարսպաշէրջանատնութիւնը չխախտել, և չհանդիպենք տնտեսական ընդհանուր տաղանակի»: Գծախտարար, վերջին նշանները ցոյց են տալիս, որ այդ տաղանակի արդէն աստիճանաբար սկսւում է:

Բայց այն, որ ճարտարաբանացման և տնտեսական միւս ճիւղերի անհամաչափ զարգացումը ստեղծում է նման ծանր կացութիւն, հէնց ինքը այդ զարգացումը պայմանաւորած է տնտեսական մի շարք պղպկներով: Տնտեսական կեանքի մէջ շատ մեծ դեր է խաղում փոխադրութիւնը, որը խորհրդային երկրում ծայր աստիճան անմխիթար դրութեան մէջ է: Տարեկան 100 միլ. բուրբուր բացը ծածկելու համար ստիպւած են բարձրացնել երկաթուղային գները: Իսկ թէ ինչ վիճակում է գտնւում փոխարութիւնը, բաւական է յիշել միայն Բիկովի խօսքերը՝ «միջևե ասժ մենք փոխադրութեան վրա նայել ենք որպէս կտոմպակի»: Պարզ է, որ «կտոմպակ» երկաթուղին իր քայքայւած վիճակում՝ ու փոխադրութեան բարձր գներով չի կարող յենարան ծառայել ճարտարաբանացումին: Իսկ չէ՞ որ երկաթուղին համարում է երկրի տնտեսութեան երակը:

Որոշ միջոցներ և տնտեսում կարելի է ստանալ արդիւնաբերութեան կայունացումով և բարեկարգումով: Աւելի ճիշտ, երկրորդին կարելի է հասնել ստաւլինի զարգացումով միայն: Թէ այդ միջոցները որքան են բարեկարգումով ձեռք բերւում, լսենք Կոմկուսի

կենտր. կոմիտէի կարծիքը. «Կոպլեքայի և պետական առևտրի միջոցների անբաւարարութիւնը ուժեղացրել է նրանք ձեռնումը՝ չափից աւելի մեծ վապակ անելու ո՛չ թէ է հաշիւ մեքենայի և սարանքատար ցանցի բարեկարգման և առևտրական շրջանառութեան քիսական հետեւանք հանդիսացող վերադր ծախսերի պակասեցման, այլ է հաշիւ այն հոկայական շահի, որ առևտրական կազմակերպութիւնների կարող էին տանալ, ոչ սակաւ գանդատութեան մասնիկով դիւրի և քաղաքի սպտոգինների լայն գանդածների շահերը՝ շնորհիւ իրենց մենաշնորհ: Լալ դիւրքը օգտապարծելու սպարանքային սովի պայմաններում» (կենտր. կոմիտէի քանածեւ. 12 փետր.-1926թ.): Իսկ թէ գործարաններում ինչ ձևի բարեկարգութեան է կատարւում, ցոյց տւին հէնց ընդդիմադիրները՝ յայտարարելով, որ այդ արում է ի հաշիւ բանւորների աշխատավարձի ու արտադրոյթի արժէքի բարձրացման:

Այսպիսով, ճարտարաբանացումը տեղի է ունենում, թէ արտադրող աշխատաւորն է թէ գիւղի ու քաղաքի սպտոգի շահագործումով:

Մետաղի դերը արդիւնաբերութեան մէջ շատ է կարեւոր: Ձեռք ինչպէս, մահաւան նախորակին արտասանած իր մի ճառում, հետեւեալ բնորոշումն էր տալիս մետաղի նշանակութեան. «ճեմազարդիւնաբերութիւնը չափանի է ամբողջ տնտեսութեան զարգացման թափի: Մետաղադրիւնաբերութեան դրութիւնը կարգաոնում է թէ գիւղացունտեսական, թէ փոխադրութեան, թէ էրկտրականացման և թէ վատիանիթի աշխատանքների վրա: Ոչ թեթեւ արդիւնաբերութիւնը, ոչ էլ տնտեսութեան որեւէ մի ուրիշ ճիւղ չեն կարող զարգանալ, առանց բաւարար չափով մետաղ ունենալու: Մետաղադրիւնաբերութեան զարգացումը պայման է և արտայայտութիւն ամբողջ ժողովրդական տնտեսութեան զարգացման, վերադրութեան մէջ է ու ստեղծում արտադրութեան միջոցները...»: 14րդ և 15րդ համագումարներում, Ստալին ու Կոլքիշը յայտարարում են, թէ խորհրդային արդիւնաբերութեան մէջ ամենից թոյլ ու յետամնաց է մետաղի արտադրութիւնը: Մական, ոչ էլ անգամ չի բերւում ոչ թեւր և ոչ էլ տոկոսային յարաբերութեան շափ: Եթէ մետաղի արդիւնաբերութիւնը, — «արդիւնաբերութեան հիմքերի հիմքը» (ըստ Ստալինի) — կազմում է խորհրդային արդիւնաբերութեան «ամենէն նեղ մասը» (ըստ Կոլքիշի), ապա էլ ի՞նչպէս են իրագործելու Ձեռքիսկու կտակը:

Երկրի ամբողջ տնտեսութիւնը ծրագրային ձևով վարելով՝ պէտք է, որ ճարտարաբանացումն աւելի յաջող ընթանար: Բայց այստեղ էլ մի ուրիշ խոշընդոտ է առաջանում: Բայց այն, որ գրտոնեակային ծրագրիւնը չեն համապատասխանում իրական կեանքին, կենտրոնական պետական և տնտեսական շրջանների ու առանձին հանրապետութիւնների գործիակերպի մէջ էլ ահազին տարածութիւններ ու հակասութիւններ են առաջ կալիս: Տնտեսութեան կենտրոնացման ու ապահանարանացման ձգտումների պայքարն է այդ: Կետոնն ու շրջանները, մէկը միւսից անկախ ու միմիանց խանգարող, միմիանցից անտեղեկ ու մէկը միւսին հակասող՝ արդիւնաբերական ու արտադրական ձեռնարկներ են անում և ու ամբողջ ծրագրային ձևի մէջ քառա առաւանջում: Ասենք, ստացւում էրան էլ պետականը

օգտակար լինել չի կարող, քանի որ, ինչպէս պատգամաւոր Ջեյնսնիկն ապացուցեց, մէկ տարւայ աշխատանքներէ համար ծրագրեր մշակելը տևում է 12 ամսից աւելի:

Ճարտարարւեստացումի շարունակական զարգացումը ա.աջին հերթին պայմանաւորած է պետութեան ունեցած դրամական միջոցներով: Այստեղ բախտորոշ դեր են խաղում վարկային ու փոխառութեան ձևերը: Ոտրհրդային երկրում արդիւնաբերութեան ամբողջ դարգացումը կախած է վարկառութեան: Իսկ դրա համար էլ բանկերն իրենց տրամադրութեան տակ չունեն հարկ եղած դումարները: Եւ որովհէտե՞ր կարողանան ունենալ, երբ պետական խնայողական դրամաբաղձերի մէջ արւած դումարները ընդհանուր քանակը կազմում է 1914 թի 6%: Իսկ գիւղացիութեան դրամը կազմում է միայն 2½—3½%: այն ինչ պատերազմից առաջ հաւասար էր 28% (Բիկով):

Ներքին փոխառութիւնն էլ յարողութիւն չի ունենում, որովհետեւ նախ՝ ժողովուրդը չի վստահում և երկրորդ, անտեսութեան ընդհանուր մակարդակը այն աստիճանի չէ բարձրացած, որ հնարաւոր լինի խոշոր ինստրուքիւններ սնել և զբանից կառավարութեան բաժին հանել:

Այստեղ կարող էր շատ ու շատ օգտակար լինել արտաքին փոխառութիւնը: Կարելի էր աւել, որ Ռուսաստանն իր արդիւնաբերութիւնը զարգացրել է արտասահմանեան դրամաբաղձիներով: Միայն նախապատերազմեան վերջին տարիներին, արտասահմանից Ռուսաստան մուտք է գործել երկու միլիարդ ռուբլի: Իսկ գաղտնիք չէ, որ բոլշևիկները բոլոր ճիւղերը արտասահմանում փոխառութիւն կնքելու սնցնում են ապրդէին:

Պետութեան համար դրամական որոշ աղբիւրներ կարող են ծառայել երկրի ներսի մասնաւոր դրամատիրութիւնը, բայց այս էլ խիստ անկայուն աղբիւր է, որովհետեւ «խորհրդային քաղաքականութիւնը մինչև ամսած ձգտում է մասնաւոր դրամատիրութիւնը ժողովրդային անտեսութիւնից դուրս վանել և այսուհետեւ աւելի ևս ուժեղ թափով պէտք է շարունակել այդ» (Բիկով):

Ուրեմն, ի՞նչ է մնում, եթէ ոչ աւելի ծանրաբեռնել երկրի շարկերով, աւելի բարձրացնել պետական արդիւնաբերութեան արտադրած ապրանքների գները և, չերկունցի կայունութիւնը վստահելու գնով, աւելացնել թղթադրամի տպագրութիւնը: Իսկ այդ բոլորի հետեանքն էլ այն է, ինչ որ ահա տեղի է ունենում երկրի ներքում:

Ոտրհրդային անտեսութեան ճարտարարւեստացումի միակողմանի զարգացման թափը առաջացնում է մի նոր անհամաչափութիւն, «միկրատ»՝ արդիւնաբերութեան և գիւղական ապրանքների գների միջև: Ահա թէ ինչ է յայտարարում պետականի կողմից գեկուցանող կրթիժանոթակին. «ճանթոյլատրելի է, որ երկրում չինարարութեան և ընկերային-մշակութային գործի վրա արած ծախսերի միջև այնպիսի տարբերութիւն լինի, որ վերջին կայմի առակնի 0,025%»: Ուրիշ խօսքով, չինել մեքենայ, առանց մեքենայար ունենալու հեռանկարի:

Ոտրհրդային անտեսական քաղաքականութեան առաջացրած հակասութիւնների և աննպատակայար-

մարութիւնների մասին կարելի է դեռ երկար օրինակներ բերել: Սակայն, բաւականանանք այսքանով միայն: Մի քանի խօսք էլ ասենք Ռուսաստանի անտեսութեան հիմնադրը կազմող՝ գիւղացիական անտեսութեան մասին:

Որպէ՛սի ճարտարարւեստացումը քաղաքի արդիւնաբերութեան և գիւղացիական անտեսութեան միջև ընկերվարական անանքանելի վիճ առաջ չբերի, բոլշևիկները փորձ են անում գիւղական անտեսութիւնները ենթարկել համադրծակցութեան: Այս մասին երկար խօսելու պէտք չկայ, քանի որ, դժուար թէ ներկայ պայմաններում իրենք էլ հաւատան այդ ձեռնարկի յաղողութեան: Իսկ ընդգիժմադիրները նոյնիսկ ծաղրել ենթարկեցին այդ ջրայն: Բաւական է աւել միայն, որ եթէ պատերազմից առաջ Ոտրհրդ. Միութեան գիւղացիական անտեսութիւնը բաղկացած էր 20 միլիոն անտեսական միւլաբերից, այժմ՝ 26 միլիոնից: Էլ ի՞նչ խօսք միութեան, համադրծակցութեան մասին:

Այստեղ պէտք է վեր հանել շոգեշարժ դումարի գերը, որը այժմ շատ խոշոր է երկրագործութեան մէջ: Իայց գիւղացին ինչպէս ձեռք բերի, երբ որակով վատ խորհրդային գութանը վեջ անգամ աւելի արժէ արտասահմանեանից: Ինչպէ՞ս համայնացնել գիւղը, երբ արտարութեան բոլոր միջոցները գտնուած են գիւղի ունեւոր տարբերի ձեռքին: Ինչպէ՞ս դէմ գնալ գիւղին, երբ նրա կամքին է ենթակայ երկրի անտեսական կեանքը: Գիւղացին ինչպէ՞ս վստահի իշխանութեան, երբ վերջինս իր վրա նայում է որպէս ոչխար, որին պէտք է խոզել, հէնց որ բուրբը երկրի: Ի՞նչ յոյսեր կապի նա պետական արդիւնաբերութեան հետ, երբ աղէտաւոր մկրատի բերանը անընդհատ լայնանում է ի վնաս իրեն: Մանաւանդ, երբ մի նոր, ոչ պակաս աղէտաւոր «մկրատ» էլ է ստեղծւում: Ի՞նչ նպատակով գիւղացին պաշար հանի շուկայ, երբ իր ուզած ապրանք ու արտադրութեան գործիքները չպիտի կարողանայ գնել: Ինչ՞ու գարգացնի նա անտեսութիւնը, քաի որ վտանգելու է իր «քաղաքական» դրութիւնը. չէ՞ որ նրան խելայն «բուռնցիների» շարքը կը դասեն: Վերջապէս, չէ՞ որ գիւղացին լսում է Բիկովի համադումարում արած այն յայտարարութիւնը, թէ՛ «յաւուշիկայ տարի պէտք է աւելացնել գիւղատնտեսական միանառք հարկը»... Ոտրհրդային գիւղը, գիւղատնտեսութեան ընթացքը աւելի և աւելի խրտւմ է փակուղու մէջ: Ահա վիճակագրական մի փոքրիկ աղիւսակ, որ ցոյց է տալիս, թէ բոլշևիկեան տանամետայ տիրապետութիւնն ինչպէս է փոխել գիւղի պատկերը:

1925թ. վերջում, գիւղացիութեան 4,2% բոլորովին ցանքս չունէր, 33% ցանել էր մինչև 2 դեկտեմբերին, 49,3%ը՝ 2-6 դես., 10,2%ը՝ 6-10 դես. և միայն 3,3%ը տաւր դեկտեմբերից աւելի:

1926թ. վերջին, գիւղացիութեան 15% բոլորովին լծկան չունէր, 60% ունէր մինչև երկու դուրս, 22%ը՝ 2-4 դուրս և 3%ը՝ 4 դուրսից աւելի: Իսկ, առհասարակ, գիւղացիութեան 40% դուրս է ձեռնց, որ Ռուսաստանում գլխաւոր լծկան ոյժն է:

Եթէ դրան աւելացնենք և Բիկովի վիճակագրութեան տեսանիւրից այն, 1248ր. եկամուտ ունեցող գիւղացիական մի անտեսութիւն, 400ր. (32%) գանազան հարկեր է վճարում, պատկերը կը լինի կատարեալ:

Եթէ, սակայն, վերը բերած թւերի դէմ առարկութիւն լինի, թէ նման գրութիւն եղել է 15րդ համադուումարից մէկ տարի առաջ, մենք սիրով կը դիջենք ցոյց տրածի 25%, որը չափազանց շատ է: Բայց դրանից պատկերը չի փոխուի և գրութիւնը միութարական չի լինի:

1921թ. Լենինը, զգալով, որ քաղաքական ու վարչական միջոցներով անհնար է երկրի տնտեսութեան արագընթաց քաջաբովան առաջն աստիճան, յայտարարեց տնտեսական նոր քաղաքականութիւն, այսինքն, ինչ որ շարժուեց բռնի ճանապարհով, փորձեց ձևուր բերել տնտեսական միջոցներով: Որքան էլ որ զիկատատութեան պայմաններում գծար լինի համաժողովրդական

տնտեսութեան բարդաւաճումը, այնուամենայնիւ նէսն ունեցաւ իր բարերար նտեսանքները: Տնտեսական լիակատար զարգացման համար հարկւոր էր միայն վերացնել այդ զորգացման խնդարող քաղաքական խոչընդոտները:

Իսկ հիմա, երբ նշանակում են տնտեսական դիկտատորներ ու դիմում են 107րդ և 58րդ յօդուածներին օգնութեան, նշանակում է, որ նորից տնտեսական միջոցներով տեղի են տալիս բռնի վարչական միջոցներին: Եւ շատ հասկանալի է: Որովհետև ուրիշ էլք չկայ, քանի խորհրդային տնտեսական քաղաքականութիւնը դեռ մնում է անփոփոխ:

ԱՇՈՏ

Թ Ո Ւ Ր Ք Ի ՈՅ Ժ Ո Ւ Ր Զ Ը

Հակառակ պաշտօնական հերքումներու, զանազան աղբիւրներէ կրկին և կրկին կը հաստատուի Մուստաֆա Բէմալի հիւանդութիւնը:

Այսպէս արեցող է ասանկալորոց ցոփակեաց, Թուրքիոյ դիկտատորը մաշցուցած է իր Փիդիբեական կողմը: Արտաքին առոյգ կերպարանքի մը տակ, ծեփուած դերեղման մըն է, որ կը ծածկուի: Վերջերս սուր հանգամանք առած է երկիսմունքի հիւանդութիւնը. այն աստիճան որ, մասնագէտներ բացարձակ հանդիստ պատուրած են:

Արդարև, վերջին ամիսներու ընթացքին շատ չեբերա Մուստաֆա Բէմալ, պետական կեանքի ժխորին մէջ: Ըստ էթ փաշան է, որ կը կտաւարէ երկիրը: Նոյնիսկ լուր տարածեցաւ թէ զաղիս-ն Չեխուրովակիա պիտի փոխադրուի մարտի վերջերս, զարմանելու համար ջերմունքներու մէջ: Միւս կողմէ, իրազեկներ կը պնդեն, որ արդէն իսկ պատրաստած է իր կտակը, որը բաժնի մը հանելով իր ջրովը, իսկ հարստութեան մեծագոյն մասը, զբաժ թէ կալւած, ձգելով ազդին:

Այս իրազեկները յաջորդին անունն ալ կուտան, — Ըստ էթ փաշա: Կը խօսուի նաև նախկին վարչապետ Տիթիի մասին, որ այժմ Փարիզի գեսպան է: Բայց այս վերջինը, թէև մտերիմը Մուստաֆա Բէմալի և առջի փորձած դիւանապետ, Թոյլ մարդու համբաւ հանած է: Ամէն պարագայի մէջ, վճռական չէ այնպէս ինչպէս արդէ վարչապետը, որ էլ խնամութեան զուրկ անցաւ ճակատագրական շրջանի մը, և տիրաբար կը վարէ գործերը, մասնաւորապէս 1925-էն ի վեր:

Կը թուի թէ այս հիւանդութեան լուրը որոշ ոգևորութիւն պատճառած է Թուրք ընդդիմադիրներուն, որոնք զանազան թեւերու, և եթէ կուզէ՞ անձկութեամբ, անհամբար կը սպասեն ճակատագրական վայրկեանին: Անջատուած՝ իրական կեանքին, ընդհանրապէս անկարող՝ կենդանի գործի, պատահուած՝ երկիրէ երկիր և միեւնոյ վայրին մէջ, անոնք նախախնամական դէպքերու կը սպասեն, իրենց դոյութիւնը արժեցնելու համար:

Այդ է պատճառը, որ մինչև այսօր ալ չեն կրցած կազմել միացեալ ճակատ, թէև կաշխատին այդ ուղղութեամբ: Իթիլաֆական թէ իթիհատական, մինչև

անգամ անոնք, որ Բէմալի կողքին էին և աչքէ ինկան, ամէն բանի առաջ զազգիս-ին անկումը կը բաղձան: Կարծես թէ միացածը՝ մանրամասնութիւն է, իսկ Մուստաֆա Բէմալի խաւարումը՝ զիլաւոր նպատակ: Իրենց հաշուով, անկումը կամ մահը խառնակութիւն յտառը կը բերէ, և իրենք ալ կօշուտին:

Սխալ չէ Լիթաւրելի թէ՛ այդպիսի խառնակութեան մը կը սպասէ նաև սև շապիկաւոր Իտալիան:

Թէև Մուստաֆան է վարելը, իր յախուռն շարժուածներով և կայծակնացայտ կերպարանքով, բայց իտալացիները կորսնցուցած չեն հաշի գաղափարը:

Ըլլալով հանդերձ Թուրքիոյ նոր աւարին անմիջական ժառանգորդները, զոնէ որոշ տարածութեան մը վրա, անոնք անպարտելու անհրաժեշտութիւն կամ հնարաւորութիւն չեն տեսներ: Աւելի ճիշտ, կը սպասեն պատե՛ ժամուն, ինչպէս ըրին Ափրիկեան Տրիպոլսոյ գրաւման ատեն, առանց փողի և թմրուի:

Երիտասարդացած և այսօրեան Իտալիան և երկտարականացած: Կը հեռայ ու կը փրփրի հին փառքերու և նոր երազներու արեցութեամբ: Սակայն, ՄԼԾ Պատերազմին ցնցումները չեն անհետացած տակաւին: Արևան զարհուրանքը չէ փարատած: Տնտեսութիւնը և մանաւանդ պատերազմի բուռ ջիւղը, զբամբ, սանձանախակ է: Ինչո՞ւ անպատճառ արեան գետեր հոսեցնել, երբ կարելի է նւազեցնել արշաւանքի մը կորուստները՝ սպասելով յարմար պատահութեան մը: Օրինակ, ճեղք մը՝ Թուրքիոյ ներքին ճակատին վրա: Կամ ուրիշ միջոցազային փոթորիկ մը:

Մնաց որ, տակաւին վերջնական ձև չեն առած քաղաքական սազմախաղերն ու կապակցութիւնները Բալկաններու մէջ: Յունաստանը տակաւին չգտաւ իր ներքին խաղաղութիւնը: Պուլկարիան բոլորովին սպաս չէ: Իսկ զբարեացակամ՝ Լեհաստանը, Մեծն-Բրիտանիան, աւելի վերապահ կերեան այս արբի, զոնէ այս օրերուն:

Միջոցազային տեսակէտէն, սկզբունքի համաձայնութիւն մը կայ միայն. մասնաւորապէս Յրաստայի կողմէ, որ միշտ մասհոգ էր փրկիկեան զաղութիւնը մասին, կուզէ ուրիշ կողմ զարձնել իր բազմածին հարեանին ուշադրութիւնը:

Նկատելի է, որ իտալական մամուլն ալ աղմուկի կը դռուչանայ, քանի մը ամիս է վեր:

Ինչ կերպ կուզէք դատեցէք, — հարցը այն է, որ անակնկալ մը միայն կրնայ փութացնել անխուսափելի արշաւանքը, ի խնդիր հողի և շահաստանի:

Իսկ անակնկալները ոչ համրանք ունին, ոչ ալ պայմանաժամ, մանաւանդ քաղաքական կեանքի մէջ:

Առ այժմ, Հոռոմ ոչ իրուայ անտարական-տնտեսական ծաւալման և նուարկութեան: Իրականութիւն է, որ Արեւելեան Միջերկրականի մէջ իտալական դրօշը անգլիականէն անմիջապէս վերջ կու գայ, ինչպէս կը հաստատէր Քամի թղթակիցը: Տնտեսական գերակշռութեան այս պայքարը ինքնին ճամբայ կը հարթէ քաղաքական թափանցումի համար, խաղաղութեամբ կամ զինու գորութեամբ:

* * *

Թուրք մամուլը փող ու թմբուկով աւետեց 1927 հոկտեմբերի մարտահամարին արդիւնքը: Բայց չհամարձակեցաւ, կամ յարմար չգտաց աւելի խորանալու, և երեւան հանել հրատարակած թխածոյ թիւերու իմաստը:

«Ճաստը չորս միլիոն ենք», — ճառեցին, և ցնծային ուսուցիչներ կատարեցին:

Մենք իր ատենին առիթ ունեցանք վերլուծելու այդ շինու թւանշաններուն արժէքը: Ուրիշներ ալ, բազմապատկէ հինն ու նորը, իրականն ու կեղծը, այն կողակապտութեան եկան թիւ 8—9 միլիոնէն աւելի չէ կրնար ըլլալ ներկայ Թուրքիոյ բնակչութիւնը:

Թուրք թիւք մը, քիմալական «Միլլէթ»-ը, մարդահամարին առթիւ երկար ուսումնասիրութիւն մը հրատարակելով, վախն ի վախը երեւան կը հանէ կարգ մը հանրամասնօթ, բայց պաշտօնապէս ծածկած իրողութիւններ:

Յօդուածագիրը — թրքական համայնարանի ուսուցիչներէն Մէհմէտ Ալի Աքնընէ, ամենէն առողջ կակիծով կը խոստովանէ թէ մարդահամարին արդիւնքը 1 1/2 միլիոն, մեծ քան մը չէ, բազմատեղով երկրին տարածութեան հետ (750,000 քառ. կիլոմետր): «Այս տարածութեան վրա մենք առնուազն 30 միլիոն բնակչութիւն պէտք է ունենանք»:

Թուրքական Աղայեւն ալ գոնէ 30 միլիոնի Լեպզ մը ունի, տարիներէ ի վեր, որպէսզի այլ ևս ոչ ոք համարձակի յարձակիլ Թուրքիոյ վրա:

Յետոյ, դառնութեամբ կը զիտէ, որ Թուրքիոյ հողին վրա, տակաւին կը լսին բազմաթիւ լեզուներ, — Թուրքերէն, քարերէն, յունարէն, հայերէն, քրտերէն, գաղաբերէն, երբայեցերէն, լազերէն, չէրքէզերէն, վրացերէն, ասորերէն, պոնապետերէն, գնչուերէն: Կրօնական տեսակէտէն ալ՝ նոյն բարեղոնք: Մասնաորակա կրօնական զբաղումի» բայց «տօժիլ» հակառակութիւն մը կը տեսէ Թուրք և քերտ ժողովուրդներու միջև: Ճժամանակին սուլթաններու կառավարութիւնը բազմաթիւ անգամներ հազարաւոր մարդիկ ջարդելու աւած է, իբրև կիրարար, զգանք և ատելութիւն գոյացնելով սիրտերու մէջ:

Այդ ատելութիւնը և զգանքը աւելի աստուկացած են հիմա, քաղաքական գետնի վրա, չնորհիւ հայրամանքի և ջարդի նոյն քաղաքականութեան, որ սուլթաններէն փոխանցած է պէյ-Ֆէյնտիներուն, իթթիհաստական թէ քիմալական:

Տակաւին երկար է Թուրք յօդուածագրին ողբը: Անատուրի մէջ, «նոյնիսկ եղիլտոստորենէ լինած հացին վրա դադարաբար չուենն շատ մը տեղերու բնակիչներ: Յաճախ դարբի հատիկներ, ընկոյզի կեղևներ, եղիլտոստորենի ցորուները իբր խոտնելով կուտեն:

— «Ո՛րքիւր չի պակիւր ամենուն վրա և ատիկա երբեմն կը նկատուի ճարտութեան նշան»:

— «Իրիւրը քամար չկայ: Անգամ մը անձամբ տեսայ, որ գիւղէ մը կեղբոն հրաւիրուած նորադէր զինուորները երեք ժամուան ճամբան երեք օրէն չլիցցան կտրել»:

— «Ալքուլամուլութեան հետևանքով կարգ մը տեղեր չափազանց շատ ոճիւրներ կը գործուեն»:

Այստեղ ակներև սխալ մը կը գործէ Թուրք փրոֆէսէօրը: Որովհետև, քիչ յետոյ, փորձառաբար կապացուցանէ թէ Թուրք աղբը բնականէն ոճրամիտ են, առնուազն չարագործ: Կարծէ նոյնութեամբ արտագրելի իր ուսումնասիրութեան այդ մասը:

— «Տղաք դպրոցէն կը սկսին դանակներ հանել և քրտեղանները տաշել: Երիտասարդները առանց պատճառի ծառերը կը կտրեն, տերիները կը թափեն, հեռագրական ձողերու սկահակները կը կտրեն քար նետելով կամ հրացան պարսպելով: Մէկ յօսուով, հաճախ կը զգամ վնաս հասցնել: Յաճախ տեսած եմ, որ կամուրջներու յենարաններուն խոշոր քարերը հանելով ձորերէն վար կը գլորեն: Եթէ Սուլթան-Ահմէտի (Պոլիս) հրապարակը երթաք և տեսնէք Վիլհելմ կայսեր յիշատակարան աղբիւրը, շատ պիտի ամչնաք»:

Յեղճ վայտամարտ: Երեկ այնքան թաղուած է դասագրքերու և պատմութեան փոշիներուն մէջ, որ իբրև կարծախնդր բան՝ Վիլհելմ Բ-ի աղբիւրին քանդուած միայն կը տեսնէ:

Բայց նորէն, պէտք է արձանագրել իր քաջութիւնը, քանի որ կրքեր է գրի առնել և ստորագրել ազգակիցներուն հիմիկական դիժը, — կոտորէ-թափելու, կտրել-նետելու «առաքելութիւնը», որուն դարձանք՝ դաստիարակութեան մէջ կը տեսնէ, իբրև վարժապետ:

Փրոֆէսէօրը չի մոռնար յիշել նաև Թուրքիոյ հիմնական ախտը, անապաւստութիւնը, որ շրթայագրած կը, տիրապետէ հանրապետական՝ մականին տակ ալ, և երկու քրտնիկ հիւնաղութիւնները, Փրանկալիստն ու ճահճատեղը, որոնց աւերք աննկարագրելի է, մասնաւորապէս Անատուրի մէջ:

* * *

«Իրօշակ»-ի վերջին երկու թիւերով աւելն ամփոփ տեղեկութիւններ, թրքացման նոր արշաւանքի մասին, որ կազմակերպուած է Պոլսոյ մէջ, առաջնորդութեամբ «Թուրք օճալիս»-ներու, համայնարանական ուսանողութեան, մամուլին և մտաւորականութեան:

Բոլորը մէկ, հրապարակաւ կարծարք են խնդիրը, և տող ընդ մէջ կազդարարեն ոչ-Թուրքերուն, թէ կամաւոր թրքացումով միայն կրնան ազատիլ նոր փորձանքներէ:

Շատ պարզ է իրենց լեզուն, — սուլթանները սխալեցան, դարբեր առաջ, և փոխանակ ջարդելու կամ թրքացնելու, «առնանանչնորհներ» տւին փոքրամասնութեանց: Մենք սրբագրեցինք այդ սխալը, և գործը պիտի տաննէք մինչև իր տրամաբանական վախճանը:

Մարտի ընթացքին, երկու ուշադրաւ խմբազարկաններ հրատարակեցին երկու աղբեցիկ թերթեր, Ազատ և Միլիոնէր: Երկուքին ալ խմատը մէկ է:

— «Փոքրամասնութեանց համար երկու մամբայ կայ, — կամ իրապէս կապելի այս հայրենիքին և պետութեան, կամ հեռանալ: Փոքրամասնութիւն կըչւած տարիելուն համար ուրիշ մար չկայ, երէ ոչ ընդունիլ իրենց պատկանած պետութեան լեզուն, մշակոյթը և ձուլիլ:

... «Իրիկ թրքախառակ այս երկրին մէջ ապրողներուն շահը կը պահանջէ թրքաճալ:

... «Այն տարրերը, որ կը պնդեն թէ թուրք են, կամ կուզեն թուրք դառնալ, պարտաւոր են թուրքի դպրոց դնել իրենց գաւակները»: (15 մարտ):

Միւսնոյն ատեն և հետզհետէ աւելի թթու, կը շարունակեն փողոցային և խռածանալար ցոյցերը: —

«Հայրենակից, թուրքերէն խօսէ»: Այլապէս, փոքրամասնութեանց չնչած օդն ու կերած Նացն անպամ ջքէ բերնէ պիտի բերեն: Կարգացէ՛ք Պոստոյ իրաւարանական համալսարանի ուսանողներուն կողմ:

— «Հասկոց'որ Երկրիզ և զպայտանիւրուզ հանդէպ յարգանք չտածողներուն, որ հոս ներսկան թուրքիան է... Այս մասին ջու պէտք ունեցած ուժը կը զուտի կրակներուզ արևան մէջ»:

Նոյն աղաբարբութիւնը աւելի տարրեր զարձակձեղով մը կը կրկնէ Միլիոնէր (15 մարտ):

... «Չենք անդիտանար թէ փոքրամասնութեանց մէջ ոչ-զանցատելի թիւ մը կը կազմեն անոնք, որ կը հաստատեն թէ ներկայ պայմանները պիտի շարունակուին: Հետեաբար ազազայ կրգաներով կորօրենն:

«Թուրք աղբը կատարելապէս արթուն է»:
Թող հասկցողները չհասկցողներուն բացատրեն:

Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ս Ի Ո Ն Ա Լ

Ա. Ը. Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ս Ի Ո Ն Ա Լ Ի Գ Ո Ր Ծ Ա Գ Ի Ր Կ Ո Ս Ի Տ Է

Փետրուար 24—26-ին Ցիւրիխում տեղի ունեցաւ Ինտերնասիոնալի Գործադիր Կոմիտէի հերթական համապալումարը:

Ներկայ էին Անգլիայի, Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսայի, Իտալիայի, Աւստրիայի, Չեխոսլովակիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Հայաստանի, Վրաստանի, և մի շարք այլ մանր երկրների ներկայացուցիչները:

Օրակարգի զլխաւոր հարցն էր Ինտերնասիոնալի Յրդ համապալումարի նախապատրաստութիւնը:

Որոշեցաւ համապալումարը հրաւիրել Բրիտանիոյ յառաջիկայ օգոստ. 5-ին հետեւել օրակարգով:

1. Միլիտարիզմ և դինամիստութիւն.
 2. Գաղութային քաղաքականութիւնը.
 3. Յետպատերազմեան տնտեսական վիճակը և աշխատաւոր դասակարգի տնտեսական քաղաքականութիւնը.
 4. Կանանց Միջնադարային Խորհրդաժողովի գեկուցումը և բանաձեւերը.
 5. Կողմակերպչական խնդիրներ:
- Այնուհետև Գործադիր Կոմիտէն ջննեց և հաստատեց այն ներքին հրահանգը, որ, համաձայն Ինտերնասիոնալի կանոնադրի, մշակուլ կը Քարտուղարութիւնը՝ համապալումարին մասնակցելու, նրա ներքին գործադարութեան և յարակից խնդիրների շուրջը:

սէլ): Հաշուուութեան այն մասը, որ վերաբերում է Ռուսաստանին՝ ամփոփւած է հետեւել ձեւով:

«Ռուսաստանում տեղի ունեն դէպքեր, որոնց կարեւորութիւնը դժւար է որոշել ներկայիս: Առայժմ դիկտատուրան վերջ է դրել իշխող կուսակցութեան ներքին տարածախնութիւններին՝ դաժանօրէն պատուահաստիքով նրանց, ովքեր դիկտատուրայի կարուցանողներն են եղել: Աւելի՛ ևս մեծ կատարութեամբ տերորը ուղղւած է Ա. Ը. Ինտերնասիոնալին յարած կուսակցութեան ներքին դէմ, որոնք մէկն կարգի հալածանքների ենթակայ են: Այս ահաբեկումի սխտանին իր ամբողջ դաժանութեամբ հանդէս եկաւ առանձնապէս այն փաստի մէջ, որ խորհրդային իշխանութիւնը մեթոց տարածել քաղաքական բանտարկեալների վրա ընդհանուր ներումը (ամնիստի), որ նա յայտարարել էր հոկտեմբերեան յեղաշրջման տասնամեակի ստիլի: Քաղաքական բանտարկեալների վիճակը ջննող յանձնաժողովը, Կալինինին ուղղւած մի նամակով խորհրդ. իշխանութեան ուշադրութիւնը հրաւիրեց այն վտանգների վրա, որոք անխուսափելիօրէն պիտի ծագեն՝ աշխատաւոր դասակարգի մի մասի դէմ ուղղւած հալածանքներից: Ընդդիմադիր կոմունիստների աջարի առթիւ էլ յանձնաժողովը բողոքի ձայն բարձրացրեց: Բայց, ի հարկէ, խորհրդային իշխանութիւնը զգաստանալու նշաններ չէ ցոյց տալիս:

Միւս երկրներին վերաբերեալ մասերում հաշուուութիւնը վեր է հանում, ընդհանուր դժերով, այն պայմանները, որոնց մէջ ընկերաբարկան կուսակցութիւնները կատարում են իրենց աշխատանքները:

Գործադիր Կոմիտէի օրակարգի մէջ ուշադրաւ տեղ էին բռնում հետեւեալ հարցերը:

Անցնելով իր հերթական դրաղումներին՝ Գործադիր Կոմիտէն կարճ վիճարանութիւնից յետոյ առաւ ի դիտութիւն Քարտուղարութեան հաշուուութիւնը, որ ընդգրկում է Ինտերնասիոնալի գործունէութիւնը Գործադիր Կոմիտէի վերջին դումարումից ի վեր (Բրեւ-

Ձկնաթափութեան եւրջ

Օտտօ Բառէլըը Ձկնաթափութեան Յանձնաժողովի անունից զեկուցում է Հանգամանօքնէ, թէ ի՞նչ վիճակում է գտնուում այս Հարցը գանադան երկրներում և Աղբերի Լիգայի մէջ: Ձկնուցման Հիմնական մտքերն են: — Լիակատար զինաթափութիւնը ընկերվարութեան Հիմնական նպատակն է, բայց նա ներկայիս անհնարին է: Ներկայիս մեր անկլիբը պէտք է լինի օգտուել տիրող դասակարգի մէջ գոյութիւն ունեցող այն ուժերից և արամադրութիւններից որոնք նեցուկ են Հանդիսանում զինաթափութեան դադարափարին: Այս դադարափարի շուրջը կայանալիք միջազգային համաձայնութիւնների մէջ մեզ համար ամենակարեւորն այն պէտք է լինի՝ որ միջազգային ընդհարումներն ու Հակամարտութիւնները, բոլոր պայմաններում, խաղաղ միջոցներով հարթեն: Ձեկուցումը վերջանում է մի շարք դործնական առաջարկներով, որոնց իրավորման ղէպքում ոչ մի պետութիւն չի կարող այլ ևս որևէ պետութեան բռնի ուժով իր կամքը պարտադրելու շարք զինուորութիւն և սպառազինութիւն ունենալ:

Ձեկուցմանը յաջորդած վիճարանութիւններէ ժամանակ զլլատար խնդիրն այն էր, թէ ինչ գնահատութիւն պէտք է տալ զինաթափութեան այն առաջարկներին, որ խորհրդ. Իշխանութիւնը, ի գլխիմ Լիտվիտի պաշտպանում էր ժրնեւում: Մինչդեռ անգլիական Անկախ Աշխատատեղական կուսակցութիւնը այդ առաջարկներէ մէջ ընդհանուր զինաթափութեան անկեղծ ցանկութիւն էր տեսնում՝ զերմանական, Փրանսական, ուսուական ևն ընկերվարականները որակում էին այն իրրև մի ամբողջարական «եռլթթ», որ նպատակ ունի զինաթափութեան դործը վթթեցնելու՝ պատասխանաբանութիւնը ձղելով ոչ խորհրդային պետութիւնների վրա: Այս տեսակէտի ճշմարտութիւնը ցոյց տալու համար, Հակատակորդները մատնանշում էին կարմիր բանակն ուժեղացնելու այն ջանքերը, որ թափում են բոլշեւիկները Ռուսաստանը:

Այս վիճարանութիւնների ժամանակ տեղի ունեցաւ մի միջադէպ, որ առանձին Հեռաքերքութիւն է ներկայացնում մեզ համար: — Իրուս ընկերվարական Արբանուկիցը ցոյց տալու համար, որ կարմիր բանակը ոչ թէ պործիր է խաղաղութեան, ինչպէս սիրում են Հաւատացնել խորհրդային իշխանութեան կրդեւալ պաշտպանները, այլ ամենագուճեխի աշխարհակալութեան յիշատակեց այն բանի նաճումները, որ կատարել է այդ բանակը ինքնորոշած մանր պետութիւնների գլխի: Անգլիական Անկախ Աշխատատեղական կուսակցութեան ներկայացուցիչը, Կիրկվուդը, հերքելու համար Արբանուկիչի մեղադրանքները՝ յիշատակեց Վրաստանի խորհրդայնացումը, որ շատերը ներկայացնում են իրրև ոտու կարմիր բանակի նաճում, մինչդեռ դա վրացի և ոտու բանուրների փոխադարձ համաձայնութեամբ և օղնութեամբ կազմակերպած միակտ էր՝ ընդգլխի անգլիական իմպերիալիզմի:

Կիրկվուդի այս յայտարարութիւնը անսպասելի և զեղեցիկ առիթ ընծայեց Վրաստանի ներկայացուցիչ Մերկելիին՝ Հնչեց բոլշեւիկների հրատարակած գաղտնի մի վաւերագրից մէջըրրումներ անելով ապացուցել, որ Վրաստանը նաճուել է կարմիր աւինների միջոցով:

և ոչ թէ խորհրդայնացել վրաց բանուորութեան ցանկութեամբ: Սրանից յետոյ Ձկնաթափութեան Յանձնաժողովի առաջարկները փորձիկ փոփոխութիւններով միաձայնութեամբ ընդունեցան:

8 ժամեայ աշխատումք

Վաշինգտոնի Համաձայնութիւնը (1921 թ.) 8 ժամեայ աշխատանքը միջազգային օրէնք դարձնելու մասին՝ շատ գորեղ մի ցնցում ստացաւ անցաւ տարի անգլիական կատալարութեան կողմից, որ մերժեց պարլամենտի վաւերացմանը և նթարկել այս համաձայնութիւնը: Սրանով մինչև և այժմ ս մի շարք կարեւոր երկրներում եղած վաւերացումները կորցնում են իրենց դործնական արժէքը, որովհետև նրանք պայմանաւորւած են անգլիական վաւերացումով:

Գործադիր Կոմիտէն իր բողոքը բարձրացնելով անգլիական այս քաղաքականութեան ղէմ՝ հրահանգում է կուսակցութիւններին նոր եռանդով պայքար մղել Վաշինգտոնի Համաձայնութիւնը վերջնական կործանման վտանգից փրկելու համար:

Նոր Աարեւելի Ընկերվարական Լիգան

Պրադայում կազմւած այս Լիգան, որի մասին մեր մատուցում ևս յաճախ իտքք է լինում, քանի որ նրա անդամների թւում կան և դաշնակցական ընկերներ, իր գոյութեան և դործունէութեան մասին զեկուցում էր ներկայացրել Գարտուղարութեանը՝ որպէս հերքում այն յերկրանքների, որ նրա մասին տարածում են Հակառակորդները:

Գարտուղարութիւնը բերել էր այս զեկուցումը և յարակից նիւթերը Գործադիր Կոմիտէի առաջ, որպէս զի իր դերքը ճշտքը հանդէպ Լիգայի: Գործադիր Կոմիտէն ըստ էութեան Լիգայի նպատակների և առաջարկութիւնների ճննութեան մէջ չմտնելով՝ գտաւ, որ թէև արդէլք չկայ, որ ընկերվարականները անհատաբար մասնակցեն նմանօրինակ միութիւնների, օսակայն, կուսակցութիւնները չեն կարող նրանց անդամարել, որովհետև Ինտերնասիոնալի կանոնադրի 2րդ յօդւածն ստում է.

«Ա. Ը. Ինտերնասիոնալին միացած կուսակցութիւնները պարտաւորում են չպատկանել ոչ մի միջազգային քաղաքական միութեան, որ Ինտերնասիոնալից դուրս է գտնւում:

Սակայն, որովհետև կան մի քանի միջազգային քաղաքական կազմակերպութիւններ, որոնց անհատաբար մասնակցելն իսկ ընկերվարականներէ համար անթոյլատրելի պիտի համարել՝ Գործադիր Կոմիտէն որոշեց Ինտերնասիոնալի առաջիկայ համադումարի վերջնութեամբ և նթարկել կազմակերպչական կանոնադրի յիշեալ 2րդ կէտը:

Ազգային խնդիրներ

Ազգային Փոքրամասնութեանց Յանձնաժողովի կողմից մի հոյակապ ճառով հանդէս եկաւ Գը Բրիւքէրը (Բեյլիա), որ Ա. Ը. Ինտերնասիոնալի ամենահամակրելի և ամենակարկաւելի ներկայացուցիչներից

մէկն է հանդիսանում: Հարեանցիորէն շօշափելով այն անցանկալի փոխարարերութիւնները, որ նկատուում է մի քանի երկրներում (Ձեռնարկովակիա, Ուկրաինա, Բալկաններ) ընկերավարական կուսակցութիւնների միջև ազգային հողի վրա՝ Դը Բրեյթերը հարկ է համարում յիշեցնել, որ այդ կուսակցութիւնները իրենց ազգային փոխարարութիւնները պէտք է շտկեն համաձայն ընկերավարութեան առաջադրած սկզբունքների: Այդ սկզբունքները, եթէ մի կողմից պահանջում են իւրաքանչիւր ազգի ինքնորոշման լրակատար իրաւունքը՝ միւս կողմից պարտադրում են, որ ընկերավարականները չենթարկեն իրենց ազգի մէջ բուրժուազգիի կողմից հրահրող ազգայնական և շովինիստական տրամադրութիւններին:

Այս տեսակէտի համաձայն մշակած բանաձևը, որ վերաբերում է ուսական Սոցիալ-Դեմոկրատիայի և ուկրայինական Սոցիալ-Դեմոկրատիայի միջև անցեալ տարի Պետլուրայի սպանութեան առթիւ ծագած վէճերին՝ ընդունեց միաձայնութեամբ:

Կազմակերպական

Կազմակերպական հարցերի մէջ մեզ համար հետաքրքրութիւն են ներկայացնում երեքը.

ա. Վանդերվույթը, որ Բելջիկայի կառավարութեան մէջ մտնելուց էր վեր, համառօտ Ինտերնասիոնալի կանոնադրի, հրատարակ էր Բիւրօի անդամութիւնից՝ վերտօն մտնում է Բիւրօի մէջ, արդիւնէտ քննչեքական ընկերավարականները արդէն հեռացել են կառավարութեան կարմից:

բ. Գարտուգարութեան վրա պարտականութիւն է դրուում հրատարակել, կուսակցութիւնների աջակցութեամբ, ընկերավարութեան մի ընդարձակ ձեռնարկ կամ հանրազիտակ (էնսիկլոպեդի), որը պէտք է պարունակի ընկերավարական շարժման վերաբերեալ բոլոր պատմական դէպքերի և դէմքերի պատմութիւնը:

գ. Յետաձգելու է թիւրք սոցիալ-դեմոկրատներին խնդիրը՝ ընդունել իրենց Ինտերնասիոնալի մէջ, որովհետև Գործադիր Կոմիտէն յստակ տեղեկութիւններ չունի նրանց գոյութեան և գործունէութեան մասին:

Գործադիր Կոմիտէի նիստերի ընթացքին Ցիւրիխում տեղի ունեցան մի շարք մտախնայներ և հրապարակային ցոյցեր, որոնց ժամանակ բազմաթիւ հետտորներ արտայայտեցին միջազգային ընկերավարական շարժման հրատապ խնդիրների մասին:

Մ Ե Ր Զ Ո Հ Ե Ր Ը

Լ Ե Ռ Ն Ե Պ Ա Ր Ի Հ Ր Զ Ա Ն

ՈՂՄԵՑԻ ԱԹՕՆ

Կուսակցական անուն և շրջան մէր Լեոնապարը. կամփոփէր իր մէջ Աղթամարայ կաթողիկոսութեան ենթակայ ինը գաւառներ և գաւառակներ—Հայոց-Ձոր, Գաւաշ, Շատախ, Մոզս, Կարկառ, Շէնձոր (Սիգանի մէկ մասը), Սպարկերա, Մամրտանք և Ողիմ: Յեղափոխական դէմքեր, որոնց համառօտ կենսադրութիւնը նիւթ է յետապայ յօշուածներուս, վերջում են այս գաւառներէն: Բնաշխարհիկ են ասոնք, մեծցած և դատարարական իրենց հայրենի օճախի և կուսակցական թուրայի մէջ. մեծ մասը հասարակ և չբար ընտանիքի գաւակ են:

Ողիմը յեղափոխական բաժանուով Լեոնապարի, ազգային-կրօնական՝ Աղթամարի թեմի և վարչական՝ Բաղէշ նահանգի Բարվար գաւառի մէջը կիլնար և աչքի գարկող հայաբնակ զիւղ մէր: Շինուած էր եռանկիւնի հարթակի մը վրա, որու մէկ կողմէն կը հոսէր Արեւելեան Տիգրիսի մէկ վտակը — Մուկաց գետը — և ոչ շատ հեռու՝ նոյն գետի բուն ճիւղը — Շատախ-Անձեւացեաց գետը:

Գտնելով վարի մը մէջ, որ շրջապատած էր միմիայն պատերազմատէր և կուսակցական քերա աշխարհներով, ողմիցին շատ առաջընէ, սովորեր էր իր ազգային և զիւղական պատիւն ու անունը բարձր պահել հերոսական գործերով: Ժողովուրդ մէր, որ գիտէր

կիսաբազց մնալ, զրկուած լինել զիւղացու ալ թիւը կազմող լծկան եղնիքէն, բայց միշտ իր տան պատէն կախած անսնել երբեմն շաշխանայ, ապա մօտին, մտուլ հրացաններն ու մտուղեր արբճանակը: Բնազգարար կը զգար, որ իր աշխատանքի արդիւնքը պահպանելու, ընտանեկան սրբութիւններն ու պատիւը ապահովցնելու, անձնական և զիւղական հմայքն ու արժանապատուութիւնը արժեցնելու միակ միջոցը՝ զենքի դէմ զենք ու ուժի դէմ ուժ ցոյց տալն էր: Եւ այդ էր պատճառը, որ Վասպուրականի Փիտայական շրջանին տւին Բողոններ, Արրօներ, Սարգիսներ, Յովսէփներ և Լաթօներ— դէմքեր, որոնցմէ իւրաքանչիւրը մէկ-մէկ իրական հերոսներու սիւլ էր և անձնագոհութեան փայլուն օրինակ:

Անոնք առաջին շարքերու մէջ էին 1915թ. Վասպուրականի հերոսական կռիւններուն: Կամաւորական զիւղերու մէջ, Հայաստանի Հանրապետութեան պայքարի ժամանակ, փրատարեան ապստամբութեան շեղը ընդվզումին: Անձնուրացներու, խիզախներու ամբողջ դաս մը տւեր է Ողիմը, վերջին երեսուն տարւայ հայ ապստամբական պայքարի ընթացքին:

Գորարներ էին ամբողջ զիւղիւն և անդր շալակած կը գնային մինչև Մուսուլ և Կովկաս ի խնդիր մէկ հրացանի գնի: Թոյլ ու երկչոտ ամբողջ հազարակա էր անոնց մէջ: Այդ կը գնահատէին անոնք և այդ պատճառով ալ արհամարհանքով կը նային ոչ Ողմեցիներու

վրա, մանաւանդ, եթէ անոնք իրենց իրաւունքներու պաշտպանութեան համար գէնքի դիմել չզիտէին:

Այս հողբաւուրթեան արդիւնքն էր այն, որ ամուսնական կապեր չէին հաստատեր այլ զիւրերու հետ: Հաղաւթի պարգուաներու մէջ միայն Ողմ մէջ ապրող տղամարդը կը համաձայնէր ամուսնանալ այլ զիւրի աղջկայ հետ, կամ աղջկիկ՝ այլ զիւրի տղամարդու հետ: Յեղը չէին ուզեր խաթարել:

Ողմեցին յարմարուղ չէք, և երկար տարինն զիւրէն հեռացածնրն անգամ հպարտութեամբ իրենց կը համարէին Ողմեցի: Կը պահէին իրենց բարբառի յատկութիւնները և պատկանական սովորութիւնները: Գարդնի խօսակցութիւններու համար ստեղծած էին բարբառ մը, որ երբեմն դարձածուր է այդ շրջանի յիշարտական բազումի զբօսարթութեանց մէջ:

Ողմի կեանքի վերջին շրջանի ամենափայլուն զէմբերէն գլխին էր Լաթօ՝ Միհրան Ռաշոյեանը, որ ծնւեւ էր 1880թ. Ողմ զիւրի մէջ: Չաւակ էր զիւրական միջակ կարողութեան տէր ընտանիքի մը: Հայրը երկրաւործ էր և արհեստով զգրուր, լլրուա: Մնողներն անդրադէտ էին, և զիւրի մէջ այդ ժամանակ դարձող չկար, ուստի մնացեր էր անդրադէտ, բայց, յետոյ, Ֆէտայական խմբերու մէջ, ձեռք էր բերել պարզ գրապատութիւն մը: Իր մանկութիւնն ու պատանեկութիւնը անցուցեր էր ծննդավայր և պայքարող ու ըմբոստ բնաւորութիւնը, սկզբի շրջանին, կարմակերպուէր էր համազիւղացիներու և լեռնային միջավայրի ազդեցութեան տակ:

Երեսուցարդ հասակին, յայտնի չէ ինչ պատճառներով, բայց հաւանաբար տնտեսական կարիքներէն մղւած, Լաթօն թողուց իր ծննդավայրը և ծնողներու հետ սեղափոխեցաւ Վան քաղաքը, ուր իր համազիւղացի Բօգօ Տիգրանի ամուսնական զիւրակարութեան տակ, Վան քաղաքի մէջ, կազմած էր ողմեցիներու դաշնակցական խումբ մը, որու մէջ մտաւ և պատանի Միհրանը:

1904 թվ. Վասպուրականի յեղափոխական կեանքի մէջ նոր թափ և ոգևորութիւն կը մտցնեն Կովկասէն եկած Իշխանն ու Արամը: Կը կազմէի Լեռնապարի ուրոյն շրջան, և Իշխանը այդ թիւն մինչև 1908-ի Օսմանեան Սահմանադրութիւնը կը դառնայ այդ շրջանի շունչն ու ողին, իր բազմաթիւ կորիւններով, որոնցմէ մէկն էր Լաթօն, որ միջհասակի, լրակեաց, զիչ մը տարամեքծ (սկզբի շրջանին) բնաւորութեամբ մէկն էր: Իր համազիւղացի Բօգօն ու Արքօն աւելի տպաւորել էին իրենց պարթեւ և լիբը հասակով և աւելի յարգանք կը վայելէին 1905—906 թվերուն թէ՛ Իշխանէն և թէ՛ միւս զինուորներէն:

1904-ին Իշխանին զինակից լինել ուխտելէն յետոյ, Լաթօն մասնակցեցաւ բոլոր պարտիզանական կռիւներուն, որնք մղւեցան Լեռնապարի գրահազան վայրերու մէջ: Այսպէս, Նարեկայ կուրի, որի ժամանակ հօտող Ասպօ ցոյց տուաւ իր յանդուգն և յեղափոխական ոգին և այդ պատճառով իսկ յետոյ դարձաւ արժանաւոր Ֆէտայի մը Լեռնապարի շրջանի մէջ:

1908 թվ. սկիզբներն էր, Դաւոյ դաւաճանութիւնը ցնցեր էր Վասպուրականի, մասնաւոր Վան քաղաքի կուսակցական բոլոր խաւերն անխափր: Մէկ-երկու օրուան մէջ դաւաճան Դաւոյ ցուցումներով կառավարութեան ձեռքն էին ընկեր հարկեր

հաղարար փամփուշտներ և հարիւրաւոր հրացաններ ու ուսմբեր, որոնցմէ ամէն մէկ փամփուշտը, նոյնիսկ հրացանի ամէն մէկ մասը հերոսական ճիւղերով և անձնապահութեամբ էին ձեռք բերւած: Ամէն մի մասը մի հայրուկի կեանքի, արևան, շարահիներու և օրերու անօթութեան ու ծարաւի զինն էր: Տասնեակ ջարջախաւած սրունքներու, յօշոտած մարմիններու, այլանդակւած դէմքերու, քրախողիտղ ուղեցոյցներու փոխարժէքն էր, որուն կառավարութիւնը այնքան հանգստութեամբ տէր կը դառնար: Պէտք էր անարեկել կառավարութեան, որպէսզի շատ ստաղ զնալու լլրջութիւնը չունենար: Ու դաշնակցական խիղախ մարտական խմբի մը գլուխ անցած՝ Լաթօն, որու հետն էր նաև համազիւղացի Արքօն, ստաղին գոհը խնց թշնամիէն, սպանելով ստաղիւն մը Աղլեսաճարի մէջ: Ինչպէք իր նպատակադրւած արդիւնքը ունեցաւ և կառավարութիւնը, այլ նկատումներու հետ նաև, իր խուզարկութիւնները յետաձգեց մինչև մայիս ամիսը:

Դաւաճանական այդ խուզար քայլին, զիչ յետոյ, հետեւեցան ամենախիտա խուզարկութիւններ, անուր տանջանքներ նաև դաւաճեցրու ու նաև Լեռնապարի մէջ: Լքած սրտերու մէջ ծայր էր առեր գղչումի, յեղափոխակներուն անիծելու և դատապարտելու և կառավարութիւնը փառաբանելու ու անոր դառնալու զգացումը: Անհրաժեշտ էր հակահարած տալ, սթափեցնել: Յեղափոխական խմբերը մէկիկ-մէկիկ քաղաքի (Վան) պաշարման օրակէն դուս կը գային Լեռնապարի ազատ ու զեղեցիկ լեռնադաղերու ու հովիտներու մէջ՝ Իխաճանակ իրենց հանգիստը փնտռելու համար: Իշխանն իր խմբով, որու անբաժան անդամն էր Լաթօն, այդ ժամանակ ահ ու սարսափ կը տարածէր դաւաճան զիւղապետներու ու «խելացութիւն» քարոզող զիւղական ազատիականներու վրա: Լաթօն անոր անբաժան զինընկերն էր:

1908 թվին ընդհանուր խուզարկութեան չափաւեցաւ նաև Ողմը: Պետական վաշտ մը զօրքի հետ շրջապատող զիւրտերը եկեր էին զինաթափելու ըմբոստ գիւղը: Ընդհարումը անխուսափելի կը դառնայ ողմեցիներու ու խուզարկու զօրքին միջև ու դաւաճան Սարգսի պատճառով զիւրի աչքի ընկնող կուռոյները՝ Բօգօն, Արքօն և ուրիշները կը պաշարին Գոմբերու մէջ և վերջի վերջոյ գոհ կերթան անհասար կուրի:

Ողմի պատիւը արատաւորւած էր և պէտք էր մաքրել: Եւ Լաթօն իր մէկ ջանի ընկերներուն հետ կը հետապնդէ Սարգսին և, մօտ մէկ տարի յետոյ, լիովին կը վերականգնէ ողմեցու արատաւորւած անունը: Նոյնիսկ դաւաճանի հետաւոր ազգականները շագատեցան պատիժէ, զիւղացիներու պահանջի վրա:

Սահմանադրութիւնը լեռներու ծերպերէն վար կը բերէր Փետային և կը փորձէր գտարձնել խաղաղ երկրապարտ: Լաթօնի ալ, բնակաւարար, վիճակւած էր այդ դրութիւնը: Զէ՞ որ հայը միշտ ստեղծագործ և խաղաղ արդիւնաբերող է:

1910 թվին, սահմանային վէճի մը պատճառով կը սկսի անհասարակ կուր մը ողմեցիներու ու Բարբառի զիւրտերու միջև: Այս կուրն էր, որ Լաթօն չտեսնած անվախութեամբ և հերոսութեամբ մէկ ամբողջ օր, փակւած քարայրի մը մէջ, կտրւած համազիւղացի զինակիցներէն, զէմ դրուա 1000-էն աւելի զիւրտերու

յարձակմանը: Ականատեսները հիացմունքով կը պատմէին անոր հերոսութեան մասին:

1913 թւին, Ողմին մօտիկ և 300 տունէն աւելի քրտակաց զիւղ մը — Տնիխ, կուր զուրք եկաւ Ողմի դէմ գոմայի (եայլ) մը պատճառով: Տնիխցիները թուով անհամեմատ շատ էին ողմեցիներէն, բայց վերջինները գէնքը ձեռին դիտցան պաշտպանիլ իրենց իրաւունքները: Կուրը տեեց մէկ քանի որ և Մոկաց այն ժամանակայ միւտրի՝ հարստը Մամրուլան պէջի միջամտութեամբ միայն դադրեցաւ. գոման մնաց ողմեցիներուն: Այս կուրներուն մէջ ալ Լաթօն կատարեց ամենափայլուն դեր, որպէս ղեկավար և հերոս կուղի:

1911 թւէն սկսեալ զաւանդներու մէջ նորէն ծայր առին աւազակութիւններն ու սպանութիւնները: Դաւնակցութիւնը զգաց, որ երիտասարդ թիւրքերը այն չէին ինչ որ կը խօսէին: Անհրաժեշտ էր դառնալ հին օրերուն և հին գործելակերպին — ինքնապաշտպանութեան և ժողովրդի զինման: Լաթօն նշանակեցաւ Մոկսի, Սպարկերտի, Շէշնօրի, Մամրուլանցի, Կարկառի և Ողմի շրջանային թուրքիկ խմբի ղեկավար և անդնահատելի զորք կատարեց: Ոմանց բաղցր վերաբերմունքով, ոմանց սպանաւիթքով, ոմանց ալ, ծայրայեղ պարագային, ձեծով, կը համոզեր զինքի անհրաժեշտութիւնը և գնել կուտար: Ու մինչև 1914թ., մինչև համաշխարհային պատերազմի բռնկումը, առանց հանգստի շրջեց իրեն յանձնուած դաւաճները և ող ի բռնի աշխատեցաւ թէ՛ զինման, թէ՛ աւազակներու անսնահարմարումով և թէ՛ նոյնիսկ կրթական գործընդերուն օգնելու համար:

Համաշխարհային պատերազմը լարեց կուսակցութեան ամէն ուղղութեամբ: Յեղափոխական յանդգնութեան, հերոսութեան, ըմբոս ոգիի հետ պէտք էր նաև խոհականութիւն ու լրջմտութիւն: Մասնաւորապէս շատ հրամայական էր որոշ շրջաններու մէջ հարեւան զերբտերու հետ համերաշխ ասպրելու և գործելու դժբախտ հարցը: Այդպիսի շրջաններէն էր Լաթօնի յանձնածը: Արդէն 1912 թւին Վոսմեանի, որով և Դաւնակցութեան ու Նիդանի Շէշնօ-Սայիդ-Ալիի միջև ստեղծուած էր փոխադարձ հասկացողութիւն մը՝ այդ շրջաններու հայ և զիւրա ժողովուրդներու համակցեցութեան մասին: Ընդուն, 1913-ին, Սայիդ-Ալիին կախաղան էր բարձրացած կառավարութեան կողմէ, բայց բարեկամական հոգեբանութիւնը դեռ կը տիրէր զիւրտերու մէջ: Լաթօն, որուն միջնակեամ էր այս շրջանի ժողովուրդի բախտը վարել, յեղափոխական խանութեան հետ երեսն բերաւ նաև զազաքազախական շնորհք: Ոչ մէկ առիթ ձեռքէ չիփախցուց այս կամ այն ազգայի, այս կամ այն բէկի հետ բարեկամամարտ համար: Ասոր հետ մէկտեղ հնարաւոր սահմաններու մէջ մեծցուց իր թուրքիկ խումբը՝ հասցնելով մինչև 72 հոգիի: Այս խմբի մէջ էին Մամրուլանքի, Սպարկերտի, Շէշնօրի ուղմեցիներու և մատաւարական ընտրեալ ուժերը: Քիւրտ պէկիերու հետ տեսակցութեան գնարու պարտաւային միջա իրեն հետ կը տանէր բարձրահասակ, Քիլիբապէս սպաւորիչ և լաւ զինուած գէնընկերները: Քիւրտերու հետ ունեցած իր ամէն մէկ քայլը կուտածաւարած էր: Քիւրտերը նեղացնել կը դուրշանար և կը զգուշացնէր իր զինուորները:

1915 թւի փետրուարին էր Կարկառի մէջ, ուր առաջնորդող հայ կը կատարէր Վուրջիկ (Գալուստ Պօղոսեան), զոր զիւղերէն փախստական զինուոր բռնելու առթիւ, ստիկաններու կողմէ հայ զինուորներու վրա զորք դրած անասելի տանջանքներու պատճառով զինուած ընդհարում տեղի ձենցաւ Հայկրու ու կառավարական ոստիկաններու միջև: Շուտով ղէպը ծաւալուեցաւ: Կառավարութիւնը նոր օգնական ուժեր բերաւ, որոնք բաղկացած էին կանոնաւոր ոստիկաններէ և զիւրա աշխարհներէ: Քիւրտերը կը ղեկավարէր Սայիդ-Ալիի տղան (միջնակ), որ փախուստական էր հօր կախաղան հանելէ յետոյ, բայց համաշխարհային պատերազմի սկիզբէն մէկ թէ երկու ամիս յետոյ, թաղաւորական հրովարտակով մը ազատ էր յայտարարուած: Նոյն օրերուն էր, երբ անոր մեծ եղբայրը՝ Շէշնօ-Սալահէտտին, վերադարձաւ Մինուլէն, ուր աքսորուած էր 1913թ. քրտական ապստամբութեան մէջ մասնակցութիւն ունենալու ամբաստանութեամբ: Լաթօն, ղէպը սկսելու երկրորդ օրն իսկ օգնութեան փութաց Վուրջիկին և փորձեց տեսակցել Սայիդ-Ալիի տղայի հետ զապտի, բայց տեղի անխարժարութեան և ղէպերու արագ զահալլիման պատճառով զլուխ չէկաւ այդ: Լաթօն նպատակն էր յիշեցնել անոր Դաւնակցութեան և իր հանդուցեալ հօր միջև կայացած համաձայնութիւնը, որ հայեր և զրտեր պէտք է բարեկամ ապրէին: Սկսած կուրը տեեց եօթ օր և հայերը, իրենց ղէմ ունեցած խիստ զբաղանց ոյժի ճնշման տակ, պարտեցին ու նահանջեցին ղէպի Սպարկէս, Շէշնօր և Մոկս:

Թէ Մամրուլանքի և թէ Կարկառի կուրներու ժամանակ մենք թուով շատ զոհէր շունեցանք, հազիւ 3-4 հոգի, եթէ չհաշուեք լոններով նահանջի ժամանակ ցրտահար եղածները: Բայց Կարկառի կուրին զօք տալիք դաւաճ լաւագոյն ուժերէն Գալուստ Պօղոսեանը (Վուրջիկ):

Այսպիսով Լաթօնի յանձնուած շրջան մասամբ դատարկեցաւ իր բնակիչներէն, որոնք ստղաւորեցան անվնաս ու ապահով մնացած դաւաճակներու, մասնաւորապէս Սպարկերտի մէջ: Գոյութիւն ունեցող բազմաթիւ մտահոգութիւններու վրա աւելացան զաղթող ժողովուրդին կերակրելու հարցը: Այս գործն ալ Լաթօն կարողացրեց նպաստաւոր ձեռով: Կտրուած նոյն իսկ Մոկսէն, միակ ճամբան, որով կարելի էր որևէ տեղեկութիւն ձեռք բերել Վանի և Շատախի հերոսամարտերէն ու կամաւորներու յառաջխաղացումէն, Լաթօն իր ամբողջ յոյւր զրեր էր զիւրտ բէկերու հետ ունեցած իր բարեկամական յարաբերութիւններու և, ծայրահեղ պարագային, իր 72 հոգիինց խմբի վրա, որ զիւրք-ցերեկ, դաւաճ կարեւոր զերքերը բռնած՝ կը հակէին ժողովուրդի ապահովութեան վրա:

Այսպէս մնաց զրութիւնը, մինչև կամաւորներու մուտքը Սպարկերտ, առաջարկութեամբ Տալի-Լազարի և ապա Մակեցի Մեքրուլի:

Կամաւորներու մուտքով կը վերջանար անոր գործը: Բայց շուտով զինուորական կարգադրութեամբ կամաւորները զաւելցան Սպարկէսէն: Լաթօն վերջին անգամ իր զինուորներէ խմբակ մը ուղարկեց Շէշնօր, որպէսզի կառավարութեան վրա վստահացուցները և իրենց տեղէն չարթուողները զաւելցնէ: Ամբողջ իր առաքելութիւնը կատարեց և ժողովուրդը կամաւորներ

րու պաշտպանութեան տակ նահանջեց Մոկս, այլա, մասամբ, Գաւաշ, մինչև 1915 թիւ մեծ նահանջը:

Լաթօ հոգարտ ու երջանիկ էր իր կատարած գործով, բայց խորունկ վշտ մը կը տանջէր իր սիրտը. իր հայրենի գիւղի պատիւը պրտաւարած էր:

Ողիմ առանց արժանախախտ դիմադրութեան յանձնել էր թշնամիին: Պատճառը այն էր, որ ապրիլեան կռիւներու նախօրեակին Ողիմէն զուրս էին եկեր ամենաաղմուկեղ տղամարդիկ և մտեր կուսակցութեան տրամադրութեան տակ: Հաշիփ չէր առնւած, որ թշնամին երբևիցէ կը փորձէ մանկէ ըմբոստ Ողիմը:

Բայց մէկ օր կանոնաւոր վաշտ մը զօրքի հետ, շրջապատող զիւրտ աշխարհները յարժար ժամանակ կը համարեն իրենց վրէժը լուծել և ըմբոստ բոյնը քանդել: Գիւղի մէջ եղած սակաւաթիւ տղամարդիկ, զլիսաւորապէս պատանիներ և ծերունիներ, զուրս կը դան գիւղի շուրջի յարժար գիւրգիւր բռնելու թշնամու դէմ: Եւ, ինչպէս որ պէտք էր սպասել, երկար չեն կրնար դիմադրել ու թողնելով գիւղը թշնամու ձեռքը՝ կը հեռանան իրենց ժողովրդի հետ հարեան դաւառները:

Այս վրէժը լուծելն և իրենց գիւղի վարկը վերականգնելն էր, որ կը կրծէր Լաթօի սիրտը: Ապրիլ և մայիս ամիսներու մէջ, ան մէկ-եկերու անդամ փորձեց յարձակուիլ և վրէժ առնել, բայց իր սակաւաթիւ ոյժը և իրեն յանձնուած շրջանի ինքնապաշտպանութեան լուրջ ու պատասխանատու զորքը նկատի առնելով՝ յետաձգեց աւելի յարժար վայրկեանի մը: Կամաւորներու մուտքով այդ վայրկեանը հասած կը թէր Լաթօին և ան մինչև Վան դնաց, Արամի հետ տեսնելու և օգնական ուժեր ձեռք բերելու կարգադրութիւն ստանալու համար: Որովհետև կամաւորները աւելի առաջ գնալու հրաման չունէին, իսկ իր գիւղը դրաման դժէն զուրս կըլնար, հայիւ հայ կարողացաւ

փոքրաթիւ խումբ մը տեղական զինուորներ ու կամաւորներ իր հետ աննելու արտոնութիւնը ձեռք բերել: Եւ նա, վրէժի ամբողջ մտադրը իր հոգու մէջ կուտակած՝ գնաց իր գիւղի պատիւը վերականգնելու փառաւոր յաղթութեամբ և կամ իր արիւնտով լալու այդ արտաբը: Արիւնը արիւնով կը լացուի միայն:

Խումբը անարդէլ հասաւ մինչև Ողիմ, ուր կապուէին անոնք, որոնք ամառըօրէն դրաւել էին Ողիմը: Զինուորական դասաւորում կատարեց և ուղիղ յարձակումով մը մտաւ գիւղը: Քիւրտներու մեծ մասը անձնատուր եղաւ, բայց փոքրաթիւ կուտղներու խումբ մը տան մը մէջ ապաստանած դիմադրեց: Լաթօն վտահ, որ ամէն մէկ խումբ իրեն տրւած հրամանը նոյնութեամբ պիտի կատարէ, անվարօրէն և առանց նախազուշական միջոցներու մասին մտածելու՝ կառաջանալ գիւղի ներսերը: Սխալած էր, նակայն. խումբ մը թերացրէր էր իր պարտականութեան մէջ: Իսկ զիւրտերը, որոնք սկզբէն կը կարծէին, թէ յարձակողները ռուսական զօրքերն են կամ կամաւորները, երբ կիմանան Լաթօի և ողմեցիներու մասին, կորոշեն դիմադրել մինչև վերջին անշնչը:

Լաթօն անտեղեակ այդ ամենէն՝ դիրքէ-դիրք կանցնէ, երբ ապահով համարւած դիրքէ մը որսուացող համազարկէ մը կըլնայ: Լաթօի սպանութեան լուրն առնելուն պէս կամաւորներն ու տեղական զինուորները կը լքեն իրենց դիրքերն ու կը վերադառնան Մոկս: Քիւրտերը, հոգարտ իրենց անսպասելի յաղթութեամբ, կը կտրեն Լաթօի դուրսը և Սախիւր կը տանին՝ կառավարութեան ու ժողովրդին ցոյց տալու համար:

Այն շրջանները, որոնց ազատողն եղաւ Լաթօն, խորին երախտապիտութեամբ և ակնածանքով կը պահեն իր ներսական յեշտառիլ իրենց հոգիներու մէջ:

Ա. ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Թ Ի Ն Ն Ե Ր

ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԶՐԲԷՋԱՆԻՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ

20 փետր., Եւրշի.

.. Հոկտեմբեր ամսին ես ուղեւորեցի հայրենիք: Նախ մտալ Ազրբէջանի գիւղերը: Զարմացայ այն արամազորութեամբ, որ տիրում էր թուրքերի մէջ: Գիւղերում մ'չ մի տղ չէր գրգռուում խորհրդային իշխանութիւնը. ունեւորից մինչեւ չբուսող ոտքից վրախ դիւնած են, յաճախ, ման են զալիս ղէնքով: Երբ հարցնում էի՝ ինչո՞ւ այդքան փոք էք տալիս զինելու համար, պատասխանում էին թէ՛ աւագիտութիւնը շատացել է, պէտք է պաշտպանուել, քանիցս դիմել ենք իշխանութեան, որ թայնի առաջը առնի, բայց մ'չ մի միջոց ձեռք չի առնում. մենք էլ տեսնելով, որ իշխանութիւնից մեկ օտուտ չկայ, ինքնիստ զինում ենք, որ մեզ պաշտպանենք:

Իսկ աւագիտութիւնը ճիշտ է, որ շատ է դարգացել: Վերջերս է կօպիւրատիւ թայանիցին, է իլարաանի վառեցին, Զանգիլանի շրջանային գործադիր կոմիտէի նախադահին խիցիցին, և ոչ ոք չի համամայնուում նրա

տեղը պաշտօնի անցնել: Բայց, իմ հայեցողութեամբ, այդ աւագիտութիւնները չեն միակ պատճառը գինւելու: Դրանք պատուակներ են միայն զինելու համար թուրք ժողովուրդը՝ քաղաքական նպատակներով: Զինւելու զլիսաւոր ազրբէրը Պարսկաստանն է, որտեղից թուրքերը, ծովով ու ցամաքով, պէնք են փոխադրում Ազրբէջանի ներքերը, ուր դադանի հակարալեւիկ կազմակերպութիւնները բռնի ստիպում են ժողովրդին ղէնք դնելու:

Երբ ես անցում էի դէպի մի գիւղ, ճանապարհին ինձ բռնեցին ու խուզարկեցին մի խումբ պինւած թուրքեր: Համոզուելով, որ ես կօմունիստ չեմ, բաց թողին և առաջին ինձ, որ յայտնեի հայրենի, որ իրենք փախստականներ են, ժողովրդի բարեկամներ և ոչ թէ աւագիտներ: Նրանցից իմացայ, որ շատ թուրք փախուստականներ կան, որոնք գինւած խմբով շրջում են այս կողմ-այն կողմ և կուտակ գործացող կօմունիստներին՝ ղէնք:

Մի ուրիշ գիւղում ինձ զարմացրեց մի այլ բան. ես հանդիպեցի զինւո՞ւմ փախտապան թուրքերի՝ այս անգամ տեղական կոմունիստների հետ. նստած միասին ուսում-խմում էին: Եւ որքան եղաւ զարմանքս, երբ լսեցի, որ միասին խորհում են իրենց ազգի կարիքների մասին: Ինձ ասացին, որ զաւտոնեւորւած կան շատ թուրք կոմունիստներ, որոնք անուճուռ ու պաշտօնավ են միայն կոմունիստ, իսկ, իրօք, գործում են ձեռք-ձեռքի հակաբոլշեւիկների հետ: Թուրք գիւղացիները սերտ խմբւած են իրենց ազգային գործի շուրջ:

Բոլորովին հակառակ է դրու՞թիւնը հայկական գիւղերում. երբ ես գնում էի մի հայ գիւղ, ճանապարհին հանդիպեցի մի քանի հասակաւոր գիւղացիների, որոնք ինձ նախազգուշացրին, թէ՛ գիւղում գգոյշ եղիր, որովհետեւ Ժողովրդի մէջ լրտեսներ շատ կան: Եւ, իսկպէհ, գիւղում տեսայ շատ մնչւած սրամազ-դրու՞թիւն. գիւղացիները մէկը միտայ վախ էին գրում եւ շատ դառն գանգատում իշխանութիւնից. «Վատ օրեր ենք ապրում, միշտ ահ ու սարսափի, խուզարկութիւնները մէջ, ձերբակալում մեն, տուրքներ, կտորագիր աշխատանքներ, մեծ տուրքեր — ո՞նց գիմանաք»: Գիւղը գերի էր մի կոմսոմոլի ձեռքին: Այ՛ որ մի կտոր Տաց ունի, իսկոյն՝ «կուլակ է», տուրքեր ու գրաւումները թափւում են գլխին: Կոմունիստները, որսկան շնորհ պէս հոտոտում են ամէն կողմ:

Պատեցի հայկական գիւղերում: Ամէն տեղ նոյն ցար, նոյն գանգաւոր. տուրքերը՝ անտանելի, իշխանութիւնը՝ անարգար ու դժաման: Մի տեղ գանդաւորում էին, թէ իրենց շրջանը մի խումբ ձիւտոր կոմունիստներ եկան պատեցին գիւղերը եւ խեցին մի քանի գիւղացիների ձիւրը. տէրերը ինչքան դժուար արին, էլ յետ շտապան: Մի ուրիշ տեղ բողոքում են կոստրուտիւնների հարստահարութեանց դէմ. հրաման է եկել, որ կոստրուտիւնները ոչ-անդա՞րեթին ոչինչ չծախեն, իսկ մասնաւոր խանութներն էլ, անտանելի տուրքերի պատճառով, գոյութիւն չունեն. ուղեւ-շուկեւ կօսպերատիւր անգամ պիտի գրուես եւ քո ցորեթը, իւղն ու պանիրը եւ ուրիշ մթերքներն ոչինչ զնով ծախես կօսպերատիւրին, փոխարէնը հրէշաւոր գէներով առնես քեզ պէտք եղած ազգանքը: Կօսպերատիւր պետութեան ձեռքին Ժողովուրդը թալանելու գործիք է: Մի երրորդ տեղ գայրոյթի առարկայ է անտառապետութիւնը. ե՞րբ է տեսնւած, որ գիւղացին կեց ամսի վառելափայտին 20-25 բուրջի տոմսի տայ կեց իր վարելաչտորում անատուններն արածացնելու համար տոմս վերցնի: Երեխին զպրոց են ուղարկում, որ ուսում անին,

իսկ նրան լրտեսութիւն ու մատուցութիւն են սովորեցում: Երեխաներին հարցնում են, թէ՛ այս գիւղեր ձեզ ծօտ ո՞վ կար, ո՞վ էր հիւր եկել, ի՞նչ էին խօսում, հօրը պէնքը ո՞ւր է պահւած, ծնողները ի՞նչ կարողութիւն ունին:

Մասնաւորապէս իմ վրա ծանր տպաւորութիւն թողեցին Չանգիւրուրի որոշ շրջանները: Այստեղ յարարութիւնները բոլշեւիկների եւ Ժողովրդի միջեւ չափից աւելի լարւած են: Օգոստոսեան ձերբակալութիւններից յետոյ յայտնաթիւ փախտապանները ապատանել էին լեւոր: Այդ առթիւ կոմունիստները երկար խորհրդակցութիւններ ունեցան, բայց տեսան, որ ուժով բան չեն կարող անել: Ուստի դիմեցին խորամանկութեան չէզոք մարդիկ մէջ ձգեցին ու համոզեցին, որ լեւորներից իջնեն, եւ նրանց ձեռք չեն տայ: Փախտապանները վերադարձան իրենց տները, բայց իխտ լարւած դրու՞թիւն է. եթէ բոլշեւիկները փորձեն դրժեղ իրենց խոտուածը եւ դիմեն բռնութեան, ի հարկէ, բախտանքը կը լինեն անխուսափելի:

Այս շրջանում էլ երևացել են կոմունիստ ընդդիմադիրներ. միայն Չախանում 72 ընդդիմադիր կայ, որոնք բոլորն էլ ուժեղ կուսակցականներն են. ընդդիմադիրներից էլ ո՞մանք ձերբակալուել են: Այժմ կոմունիստները իրար են ուսում: Ժողովրդի անտեսական դրու՞թիւնը շատ վատ է: Սուկալի թանգու՞թիւն է տիրում հացահատիկի, կտորեղէնի, շաքարի եւ ամէն տեսակ անային անատունների: Օրը օրին արժէքները բարձրանում են. ո՞չ մի միջոց չկայ նրանց առաջն անելու: «Ձեռքերի աշխատանք է գարծել մեր տուրք երկիրը», ասում էր բարեկամներիցս մէկը:

Ճնշւած սրտով հեռացայ հայկական շրջաններից: Պատեցի Ազրբեջանի շատ կողմերում: Բոլորովին տարբեր է դրու՞թիւնը այնտեղ: Ժիւտ է, Աղրբեջանում էլ ձերբակալութիւններ կատարուել են եւ հայտնանքներ կան, գլխաւորապէս, կենտրոն վայրերում, բայց Ժողովրդի ինքնազգացումը տրամազծօրէն հակառակն է. այնտեղ բուռն է ազգային ոգին եւ խորհրդային իշխանութեան հանդէպ կայ մէկ ճակատ: Բացի այդ, թուրք մնում է իր երկրում, հող ու հաց ունի եւ ազգային տեսակէտով արժանուէ է: Տրամազծօրէն հակառակ է կացութիւնը Հայաստանում: Հայաստանը, մասնաւոր դաւառը, բոլշեւիկների իշխանութեան տակ չի զարգանում բաւարար թափով, իսկ շատ տեղ՝ ծիւրում ու քայքայում է: Մարդիկ մի կտոր հացի համար ստիպւած են գաղթել օտար երկրներ: Հայ կոմունիստը եւ Ժողովուրդը երկու թշնամի բանակներ են: ԲՈՅԵԱՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրտական շարժումը և իրան (խմբագրական) . . . 97
 Հայ բոլշեւիկներու հողային բաղաժականութիւնը (Ռուբին) . . . 99
 Բոլշեւիկները և Ռոպա Լուխսմբուրգ (Ռ.Լուսեան) . . . 104
 Բաֆֆի (Ն. Յրանդեան) . . . 113
 «58» և «107» յօդւածները (Աշոտ) . . . 115
 Թուրքիոյ շուրջ . . . 120
 Ինտերնացիոնալ . . . 122
 Մեր գանիքը . . . 124
 Թղթակցութիւններ . . . 127

« Կ Ր Օ Շ Ա Կ » - Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
 «ԿՐՕՇԱԿ»-ի տարեկան բաժնեգրին է Ֆրանսայի, Յունաստանի, Բուլգարիայի, Ռումինիայի, Երպոպական այլ երկիրների, Միւրիայի և Պարսկական Ատրպատականի համար՝ 25 ֆրանս. ֆրանկ:
 Անգլիայի, Ամերիկայի, Յեյպոտոսի, Պաղեստինի, Միչագետի, Պարսկաստանի, Հնդկաստանի և մնացած բոլոր երկիրների համար՝ երկու դոլար:

Բաժանորդագրուել կարելի է իւրաքանչիւր ամսի սկզբից:

« Կ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէն՝

M^{lle} S. AGOPIAN.
 5, rue des Gobelins, 5, Paris (13^e)



« Կ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանտ.